

Հ. Ս. ՍԱՀԱԿՅԱՅ

ՏՐԵՄԻ  
ՅՈՒՄՈՒՐՃՅԱՅ

ԵՐԵՎԱՆ

1964

~~St. II~~ | Markusjude  
~~36346~~ | tipitipu  
~~Spindeljude~~ | 3026

~~Spindeljude~~







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

А. С. СААКЯН

ЕРЕМЯ КЁМУРЧЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Հ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

# ԵՐԵՄԻԱ. ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ

A 36346



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1964

Մենագրությունը նվիրված է XVII դարի հասարակական գործիշ և գրող, հայ միջնադարյան մշակույթի ականավոր ներկայացուցիչ, Երեմիա Չելեսի Քյոմուրճյանի գրական ժառանգության ուսումնասիրությանը:

Քյոմուրճյանը բազմաժանր, ինքնատիպ գրող է և պատմական բնույթի երկերի հեղինակ։ Նրա գործերը, արձակ թե շափածո, բավականաշափ ճշգրիտ պատկերացում են տալիս մեր ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի ու կենցաղի, ինչպես նաև ժամանակի պատմական իրադարձությունների մասին։ Դրանցից շատերը միաժամանակ որոշակի արժեք են ներկայացնում, որպես հայ միջնադարի գեղարվեստական գրականության հետաքրքիր ու գեղեցիկ նմուշներ։

Հնիթերցողին գրանց հետ փոքր-ինչ ծանոթացնելու նպատակով, մենագրության հեղինակը զրդին կցել է հավելված, որտեղ տեղ են գտել Քյոմուրճյանի մի քանի շափածո երկերը և հատվածներ արձակ գործերից։

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՂՄԻՑ

Երեմիա Զելէպի Քյոմուրճյանը XVII դարի արևմտահայ մշակութի աշքի ընկնող դեմքերից է: Նա եղել է նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, թողել է պատմական, աշխարհագրական, կրոնական աշխատություններ, պատմական նշանակություն ունեցող արձակ գրական երկեր ու նամակներ, հայտնի է եղել նաև որպես ժամանակի ամենահետաքրքիր բանաստեղծներից մեկը:

Հասկանալի է, որ նման մի գեմք չէր կարող անծանոթ մնացած լինել մեր բանասիրությանը: Եվ իսկապես, նրա անունը հիշատակվել է այդ ժամանակաշրջանի պատմության հարցերին նվիրված համարյա բոլոր երկերում<sup>1</sup>: Նրա ստեղծագործությունների և կենսագրության մասին համառոտ տեղեկություններ են տրվել մի շարք պատմա-բանասիրական աշխատություններում<sup>2</sup>, ինչպես նաև գրվել են հոդվածներ և ուսումնասիրություններ<sup>3</sup>:

<sup>1</sup>Տե՛ս Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Դ, Վենետիկ, 1784, էջ 680, 688, 699, 700, 701, 702, 703, 710, 717, 718, 722, 723: Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ գիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 2513: Գ. Խնճինյան, Աշխարհագրութիւն Հորից մասանց աշխարհի, հատոր Ե, Վենետիկ, 1804, էջ 62—63:

<sup>2</sup>Տե՛ս ա) Գ. Ալիջան, Հայապատում, Պատմիչք և պատմութիւնք հայոց, Վենետիկ, 1901, էջ 133: բ) Գ. Զարբանալյան, Պատմութիւն Հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878, էջ 332 և 441—443: գ) Մ. Մաղաք-Թեոփիլյանց, Բառակիրք երեվելի արանց, Ա. հատոր, Վենետիկ, 1839, էջ 240—241: դ) Լեռ, Հայոց պատմություն, Երբորդ հատոր, Երևան, 1946, էջ 367, 372 և 390—391: ե) Լեռ, Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904, էջ 366—378: դ) Թուրույն, Վարք Մխիթարայ Սբրայի Սբրաստացոյ, Վենետիկ, 1932, էջ 26:

<sup>3</sup>Տ. Պալյան, Երեմիա Քէօմիրճեան (տե՛ս «Բիւրակն», 1898, № 10, էջ 611—612), Մ. Երեմյան, Երեմիա Զէլէպի. Տարեգրական պատմութիւն

Սակայն այդ հիշատակություններն ու հողվածները վերաբերում են Քյոմուրճյանի այս կամ այն երկին, նրա կյանքի այս կամ այն դեպքին, իսկ ուսումնասիրությունները հիմնականում կենսագրական-քանասիրական աշխատություններ են, որոնց մեջ միայն երբեմն թուոցիկ նկատողություններ են արված նրա գրական-գեղարվեստական երկերի էության ու գրելաձեկ մասին:

Գրական վերլուծության որոշ փորձ կատարել է Հ. Օշականն իր «Երեմիա Զէլէպի»<sup>4</sup> ուսումնասիրության մեջ: Բայց, դժբախտաբար, նրա փոքրաթիվ եղրակացություններն ել միտումնավոր են, սխալ ու մակերեսային:

Միայն Քյոմուրճյանի հասարակական-քաղաքական գործունեության և հայացքների մասին է, որ մանրամասն տեղեկություններ է հաղորդում և համոզիչ գնահատականներ տալիս Աշ. Հովհաննիսյանը իր «Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» արժեքավոր աշխատության երկրորդ համարում<sup>5</sup>:

Առ այսօր գրող ու բանաստեղծ Քյոմուրճյանը հիմնականում անծանոթ է մնացել մեր գրական լայն հասարակայնությանը և որպես այդպիսին՝ չի գրավել իր տեղը մեր գրականության պատմության մեջ:

Ներկա աշխատությամբ մենք ջանացել ենք ի մի հավաքել Քյոմուրճյանի կյանքի ու գործունեության մասին հայտնի բոլոր բանասիրական տվյալները, տալ նրա հասարակական-

(տե՛ս «Բաղմավէլէպ», 1902, № 8, էջ 367—369 և № 9—10, էջ 473): Ուսումնասիրություններից կարեսրներն են. Ն. Ալիքյան, Երեմիա Զէլէպի Քյոմուրճյան, կյանքն ու գրական գործունեությունը, Վիեննա, 1933 (նույնը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1932, № 7—9, էջ 510—536, № 10—12, էջ 624—677 և 1933, № 1—2, էջ 94—114); Վ. Փորգոմյանի հրատարակած «Երեմիա Զէլէպի Քէօմիրճեան «Ստամպոյյ պատմութին»» (Վիեննա, 1913, Ա. գիրք) աշխատությանը կցված ուսումնասիրությունը (էջ 136—150): «Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիրճեանի» (Երուսաղեմ, 1939), հրատարակել է Մ. Նշանյանը և սրան կցել ընդարձակ ներածություն-ուսումնասիրություն:

<sup>4</sup>Տե՛ս «Սիոն», 1939, № 9, էջ 331, № 10—11, էջ 367, 1940, № 1—2, էջ 30, № 3, էջ 70, № 4, էջ 163, № 5—6, էջ 142 և № 7—8, էջ 194:

<sup>5</sup>Տե՛ս նշված գրքի 111, 145—146, 152, 159—161 և 172-րդ էջերը:

քաղաքական հայացքների էվոլյուցիան, արժեքավորել նրա ստեղծագործությունն առհասարակ և գրական ժառանգությունը՝ մասնավորապես: Այսինքն՝ փորձ ենք արել ցույց տալ նրա, որպես գրող-բանաստեղծի, տեղն ու դերը հայ գրականության պատմության մեջ:

Ներկա աշխատությանը կցված է հավելված, որտեղ զետեղված են Քյոմուրճյանի մի քանի բանաստեղծությունները և հատվածներ արձակից: Դրանք թե՛ իրենց թիմաներով, թե՛ արվեստով հեղինակի ստեղծագործության առավել արժեքավոր նմուշներն են և պատկերացում են տալիս նրա բանաստեղծական կարողությունների մասին:



## ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՐՐԾՋԻՆՆՅՈՒԹՅՈՒՆԸ

Երեմիա Զելեպի Քյոմուրճյանը՝ ծնվել է 1637 թվականի մայիսի 13-ին, Կոստանդնուպոլսում:

Նրա ակնեցի նախահայրերը, օսմանյան տիրապետության արևելյան նահանգներում ջալալիների կատարած ասպատակություններից փախչելով, գաղթել են Գալիպոլի, որտեղից Քյոմուրճյանի պապը եկել է Կ. Պոլսի:

Երեմիայի հայրը՝ Մարտիրոսը, քահանա է եղել Կ. Պոլսի ս. Մարգիս եկեղեցում:

Տեր Մարտիրոսն ամուսնացել է Կ. Պոլսի անվանի հարուստներից մեկի՝ Մահտեսի Ամբակումի քրոջ դստեր՝ Յուղիտայի հետ և ապրել է նրա տանը, ուր և ծնվել է Երեմիան:

1 Քյոմուրճյան ազգանունը, որ նշանակում է Ածխագործյան, կենսագիրների վկայությամբ, գալիս է Երեմիայի պապերի արհեստից: (Տե՛ս Ն. Ակինյան, Երեմիա Զելեպի Քյոմուրճյան, «Հանդէս ամսօրեայ», 1932, № 7-9, էջ 513):

Զելեպին աղնվականական մակդիր էր, որ ժամանակին տրվել է սուլթանակուն իշխաններին և բառացի նշանակել է «աստվածաշուք», «ղիցաշուք» թորքերն «Հելեր»՝ «ղիջ» բառից:

Հետագայում այդպիս են կոչվել նաև արքայական որոշ շնորհների արժանացած մարդիկ և բարձր դասի մտավորականները: XVII դարում Թուրքիայում այդ ձևով էին կոչվում նաև դրամի ուժով կամ բարձր պաշտոնյաների հովանավորությամբ արքունի արհեստապետության պաշտոններին հասած այն հայ հարուստները, որոնք հիմնականում զբաղվում էին բանկային գործառնություններով: (Մանրամասն տե՛ս Հ. Անայան, XVII դարի աղատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, էջ 53):

Մեր կարծիքով Երեմիային այս մակդիրը ժառանգաբար հասել է նրա ժեծանուն խնամակալից՝ Աբրահամ (Ապրո) Զելեպուց:

Քյոմուրճյանն իր մի շարք գործերում շեշտում է, թե հայրը  
բարի սիրտ է ունեցել, միշտ օգնել է որբերին ու պանդուխտնե-  
րին:

Երեմիայի մայրը վախճանվել է 1663 թվականին, իսկ Հայ-  
րը՝ տեղ Մարտիրոսը՝ 1664 թվականից հետո:

Երեմիայի երկու եղբայրները՝ Գևորգը (Մարտիրոս) և Կո-  
միտասը, նույնպես քահանաներ են եղել:

Հայտնի է, որ Երեմիան գրաճանաչ է գարձել 9 տարեկան  
հասակում<sup>2</sup>: Նրա ուսուցիչն ու դաստիարակը՝ «Ծնօղն ի հոգե-  
կանին», եղել է Կ. Պոլսի ո. Սարգիս եկեղեցու քահանա Հով-  
հաննեսը՝ Երեմիայի հոր մտերիմներից մեկը<sup>3</sup>:

Կրոնական գիտելիքների ձեռք բերման դործում նրան մե-  
ծապես օգնել են Եղիազար Այնթափցին և Մարտիրոս Ղրիմե-  
ցին<sup>4</sup>: Նա սովորել է նաև եկեղեցական երաժշտություն և ո.  
Սարգիս եկեղեցում եղել է Երգիշ-դպիր<sup>5</sup>: Ճիշտ պետք է համա-  
րել Վ. Թորգոմյանի այն ենթադրությունը, թե Երեմիան ստա-  
ցել է «անձկամիտ» կղերականության աղղեցությունից ազատ  
դաստիարակություն և<sup>6</sup>: Նա լավ է իմացել լատիներեն, Հու-  
նարեն, Թուրքերեն, ծանոթ է եղել բնական գիտություններին:

Դեռ մանուկ հասակից Քյոմուրճյանին որդեգրել է իր մոր  
քեռին՝ Մահտեսի Ամբակումը, կայսերական բանակներին ալ-  
յուր և Հաց Հայթայթող մի մեծանուն հարուստ և պոլսահայ  
գաղութի աշքի ընկնող գեմքերից մեկը<sup>7</sup>:

2 Այս մասին տեղեկանում ենք Ս. Երեմյանի «Երեմիա Զէլքի, տարե-  
գրական պատմութիւն» հոդվածից (տե՛ս «Բազմավէպ», 1902, էջ 368):

3 Տե՛ս Մ. Նշանյան, Քյոմուրճյանի «Յրազրութեան» ներածությունը,  
էջ Ժկ:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ Ժկ: Ի միշտ այլոց Մ. Նշանյանը հիշատակում է, որ  
Երեմիան եղանակներ է հորինել իր գրած գանձերի և ողբերի, ինչպես նաև  
եկեղեցում հրգվող մի շարք այլ երգերի համար (էջ ԺԲ):

6 Վ. Թորգոմյանի հրատարակած «Ստամպօլոյ պատմութեանը» կցած  
ուսումնասիրությունը, էջ 151:

7 Մահտեսի Ամբակումի մասին Հայտնի է նաև, որ նա խիստ աստվածա-  
վախ մարդ է եղել ու եկեղեցում ծառայելը մեծագույն պատիվ է համարել  
(այս մասին վկայում են թե՛ ինքը՝ Երեմիան, Ամբակումի մահվանը նվիրված  
ողբ-գանձում, թե՛ նրա հայրը՝ Տեղ Մարտիրոսը):

Այս խնամակալի հետ սպատանի Երեմիան կատարել է իր առաջին ճանապարհորդությունը գեղի Երուսաղեմ և Պրուսա<sup>8</sup>:

Հետագայում, ամուսնանալուց հետո էլ, մինչև Ամբակումի մահը, Երեմիան մնացել է նրա խնամքի տակ և եղել նրա զբաղմունքի (Հացաղործության) մասնակից: Այդ մասին նա բազմաթիվ հիշատակություններ ունի իր «Օրագրութեան» մեջ<sup>9</sup>:

Ամբակումի հետ գործակցելն, ըստ Երեսութին, նյութական ապահով կյանք է ստեղծել Քյոմուրճյանի համար, մի բան, որի շնորհիվ նա ճնարավորություն է ունեցել աղատորեն զբաղվելու ազգային-հասարակական գործերով:

Տասներկու տարեկան հասակում Քյոմուրճյանն արդեն ընդունած է եղել եկեղեցու շորս կարգերը<sup>10</sup>, իսկ 1651 թվականին, այսինքն՝ իրր նա դեռ 14 տարեկան էր, եղել է զպիր և սարկավագ Կոստանդնուպոլսի ո. Սարգիս եկեղեցում:

Սակայն հետզհետե հոգեոր կոչումն սկսում է ճնշել նրան և արդեն 18—19 տարեկան հասակում նա փորձում է աղատվել զրանից: Այս տեսակետից շափազանց հետաքրքիր են «Օրագրութեան» 1656 թվականի գրառումները, ուր կարդում ենք. «...և Տէր Յակոբն Ճայնեաց-դիս և բռնութեամբ հագոյց շապիկս սակս դպրութեան: Նոյեմբերէն ի վեր չի արարի դպրութիւն և այսօր հագայ շապիկ և արարի զդպրութիւն»<sup>11</sup>:

Շուտով, հակառակ հոր ցանկության, որն իր բոլոր որդիներին հոգեոր կոչման էր պատրաստում, Քյոմուրճյանը վերջնականապես հրաժարվում է սքեմից և իր հետագա ողջ կյանքում մնում աշխարհական:

Ն. Ալինյանն այն կարծիքն է հայտնում, թե Քյոմուրճյանն իր ուժերը տկար է համարել եկեղեցական գործին նվիրվելու համար. «Հանձն շառավ Երեմիա ըլլալ կուսակրոն քահանա, զգալով այս աստիճանին համար յուր ուժերը տկար»<sup>12</sup>:

8 «Օրագրութիւն», էջ 7—16.

9 Նույն տեղում, էջ 70, 143, 144, 164, 169, 179, 180, 184, 224, 238, 252, 269, 270, 271 և այլն:

10 Տե՛ս Մ. Նշանյան, «Օրագրութեան» ներածությունը, էջ ԺԶ:

11 «Օրագրութիւն», էջ 181:

12 «Հանդէս ամսօրեալ», 1933, № 1—2, էջ 106—107:

Այս հարցին անդրադարձել են նաև Քյոմուրճյանի կենսագիր Վ. Թորգոմյանը, Լեռն ու Հանդել միանման եղբակացության:

Ենելով Երեմիայի ստեղծագործություններից, Թորգոմյանը եղբակացնում է, թե նա վաղ հասակից ականատես լինելով ժամանակի եկեղեցականների պորտաբույծ, զեխ կյանքին, նրանց «ամուլ կենցաղին» ու «ազգակործան», «վատթար» գործերին, չի ցանկացել «ասպարեզակից» լինել նրանց, մանավանդ որ նրա խելահասության տարիները համընկել են էջմիածնի, Երուսաղեմի, Սոփի, Կ. Պոլսի աթոռների շուրջը մզվող շահագիտական պայքարին<sup>13</sup>:

Հիրավի այդ են վկայում Երեմիայի այն երկերը, որոնց մեջ նա մեծագույն զայրուցով ու տիրությամբ է խոսում ժամանակի հոգևորականության վարք ու բարքի մասին<sup>14</sup>:

Լեռն իր «Հայոց պատմության» մեջ արգեն որոշակիորեն հայտարարում է. «Նա չուզեց մտնել հոգևորականության շարքերը, և այս, անշուշտ, այն պատճառով, որ նա պատվազգաց մարդ էր, իսկ այն ժամանակվա հայ հոգևորականությունը, մանավանդ Կ. Պոլսում, այնքան արատավորված ու փշացած էր, այնքան զրկված բարոյական զսպանակներից, որ կազմում էր հայ ազգի մեծագույն դժբախտություններից մեկը: Երեմիան չէր կարող ապրել կղերական այդ խեղզող միջնորդում, թեև իբրև իր դարի հարազատ զավակ, հավատացող մարդ էր»<sup>15</sup>:

Քյոմուրճյանն ամուսնացել է 1654 թվականին, ունեցել է երեք որդի և մի քանի դուստր:

1658 թվականին մեռնում է Երեմիայի խնամակալը՝ Մահտեսի Ամբակումը: Սրա մահվանից հետո Քյոմուրճյանը մի

13 Հմմտ. «Ստամպօլոյ պատմութեանը» կցած ուսումնասիրությունը, էջ 143:

14 Այս տեսակետից ուշագրավ է Հատկապես նրա «Տարեգրական պատմութիւնը» (անտիպ է, ձեռագիրը գտնվում է Վենետիկի Միսիթարյան մատենադարանում, 509 թվահամարի տակ), որի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության 2-րդ գլուխում:

15 Լեռ, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 367—368:

այլ, ավելի հզոր պաշտպան և հովանավոր է գտնում՝ հանձին Աբրահամ (Ապրո) Զելեպու, որը եղել է մեծ կարողության տեր վաճառական և զգալի դեր է խաղացել Կ. Պոլսի հասարակական կյանքում<sup>16</sup>:

Մահականի Ամբակումի և Ապրո Զելեպու տներում երիտասարդ Երեմիան հաճախ է հանդիպել Հայ և այլազգի մի շարք նշանավոր ու բարձրաստիճան անձանց, այդ թվում Եղիազար Այնթափցուն, Մարտիրոս Ղրիմեցուն<sup>17</sup>, Փիլիպպոս կաթողիկոսին, Գրիգոր Պարոնտերին և այլոց: Սրանց միջավայրում դեռ պատանի հասակից Երեմիան ականատես է դարձել բազմաթիվ գործարքների ու միջամուխ եղել եկեղեցական-քաղաքական խնդիրներին:

Բայց այդ բոլորի մեջ Մարտիրոս Ղրիմեցին և Եղիազար Այնթափցին, ըստ երեսուցիչին, ամենից ավելի են ազգել Քյումուրժանի մտավոր զարգացման վրա: Իր «Օրագրութեան» բազմաթիվ գրառումներում նա հիացմունքով է խոսում հատկապես այս երկուսի մասին:

1659 թվականին Երեմիան նշանակվում է Կ. Պոլսի պատրիարք Մարտիրոս Ղրիմեցու նոտար և պատրիարքության խորհրդական:

16 Ապրո Զելեպին սիրված է եղել Հուսեյին փաշայի, Քյոփուրլու օղլի Մեհմետ փաշա Խավարոսի և օսմանյան այլ մեծամեծների կողմից: Վեզիրն էլ հենց նրա Աբրահամ անոնը փոխելով՝ գարձրել է Ապրո: Եղել է Հուսեյին փաշայի սեղանավորը և 1646 թվականին Կրետեի գրավումից հետո հայերի համար մի եկեղեցի է նվիր ստացել ու իր ծախսով վերանորոգել: Օսմանյան բանակին մատուցած մեծ ծառայությունների և հավատարմության համար սուլթան Իբրահիմի կայսերական հրովարտակով ազատ է եղել տուրքերից և մաքսերից: 1661 թվականի հրդեհից հետո իր ծախսով վերաշինել է տվել Ա. Մարզպի և ա. Նիկողայոսի եկեղեցիները, որոնց շինարարության գործն, ի գեպ, նա հանձնարարել է հենց Քյոմուրճյանին:

17 Այնթափցին և Ղրիմեցին ժամանակի նշանավոր հոգևորականներից էին, իսկ Ղրիմեցին հայտնի էր նաև որպես բանաստեղծ (Ղրիմեցու մասին տե՛ս Ա. Մարտիրոսյանի «Մարտիրոս Ղրիմեցի» ուսումնասիրությունը, Երևան, 1958):

Հայտնի է նաև, որ 1663—64 թվականներին նա նույնպես նոտար և խորհրդական է եղել<sup>18</sup>:

Այդ տարիներին էլ հենց, նա մերթ Ղրիմեցու, մերթ Այնթափցու հետ մեկնել է Ազրիանուպոլիս, Պրուսա և այլուր: 1665 թվականին կրկին գնացել է Երուսաղեմ: Եղել է նաև Բեյրութում, Անտիոքում, Արմաշում<sup>19</sup>:

Հայտնի է նաև, որ Քյոմուրճյանը, քաջ իմանալով թուրքերին, Հունարեն, լատիներեն և եվրոպական լեզուներ, սերտ կապ է ունեցել եվրոպական դեսպանների հետ<sup>20</sup>, դրանցից մեկի պատվերով էլ գրել է իր մի երկը<sup>21</sup>:

Քյոմուրճյանի հասարակական գործունեությունն սկսվում է 1660-ական թվականներից և տևում է մինչև 80-ական թվականները, մի ժամանակաշրջան, որը Կ. Պոլսի և առհասարակ արևմտահայ գաղութի համար, թերեւ, ամենից ծանրն ու դժվարինն է եղել:

\* \* \*

Քյոմուրճյանի հասարակական գործունեությունը կարող է ճիշտ գնահատվել միայն այն դեպքում, եթե պարզ լինեն այդ գործունեության դրդապատճառները, այն սկզբունքները, որոնցով պայմանավորվել է նրա այս կամ այն քայլը:

Քյոմուրճյանի աշխարհայացքը պարզելուն ամենից առաջ, և թերեւ ամենից լավ, օգնում են հենց նրա ստեղծագործությունները, հատկապես պատմական-հասարակական բնույթի երկերը:

Այս իմաստով շափականց կարեոր աղբյուրներ են նրա «Պատմութիւն» համառօտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւո-

18 Հմմտ. Վ. Թուրքումյան, նշված ուսումնասիրությունը, էջ 152—153:

19 Հմմտ. Գ. Մրցյան, Ստուերք Հին դեմքերու, էջ 10:

20 Ակինյանն այս մասին գրում է, որ «Դեսպաններ, ինչպես Ավստրիո կայսեր ներկայացուցիլ Բարձրագույն դրան քով, ունեին Երեմիայի հետ անձուկ հարաբերություն և կարոտ էին անոր արեվելյան իրաց հմտության» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1933, № 1—2, էջ 111):

21 Այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության 2-րդ գլխում:

րացն...»<sup>22</sup>, «Տարեգրական պատմութիւն» երկերը, «Օրագրութիւնը»<sup>23</sup>, ինչպես նաև մի շարք նամակները, ուղերձներն ու գանձերը<sup>24</sup>:

Քյումուրձյանի աշխարհայացքի ձևավորման, կազմավորման գործում առաջին և ամենառութեան աղդակը հանդիսացել է թուրքական տիրապետության տակ ապրող հայության ծանր վիճակն ու ազգային ինքնության կորստի վտանգը<sup>25</sup>: Եվ հենց դրանով էլ պայմանավորվել է նրա աշխարհայացքի ամենահիմնական գիծը՝ հակապետական գիրքորշումը, որ սկիզբ առնելով պատանեկության տարիներին, հետզհետե ավելի ու ավելի է խորացել և կյանքի հասուն տարիներին դարձել գոր-

22 Երկի լրիվ վերնագիրն է «Պատմութիւն համառօտ ԴՅ տարւոյ օսմանցց թագաւորացն». Որ սուլթան Օսմանէն մինչև այսմ սուլթան Մուհամէտս. Ժի թագաւորքիան. լաւ ընթերցօղ պիտի, որ զոտանաւորն շափովն կարենայ գտել, որոյ լուսըն համեղաբար վայելեսցեն իննութեամբ բաւեսցի»: Տե՛ս ՀՍՍԸ մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետեւ՝ Մատենադարան), ձեռագիր № 1675, ժամանակ՝ 1732, էջ 2ա—173թ. Այս երկի մի օրինակը կա նաև Երուսաղեմի ս. Հակոբի մատենադարանում, ձեռագիր № 14, ժամանակ՝ 1753 (տե՛ս Ա. Սուրմեյան, «Մայրը» ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի սրբոց Յակոբիանց վանքի, Ա. հատոր, 1948, էջ 101): Սույն «Պատմությունն» առ այսօր անտիպ է:

23 Ինքնագիր ձեռագիրը պահպում է Երուսաղեմի ս. Հակոբի վանքի մատենադարանում (ձեռագիր № 1893): Այս ձեռագրից այն հրատարակել է Մ. Նշանյանը՝ «Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրծեանի» (Երուսաղեմ, 1939):

24 Երուսաղեմի ս. Հակոբի վանքի մատենադարանի ձեռագրերից հավաքելով հրատարակել է Մ. Նշանյանը «Օրագրութեան» հավելվածում (էջ 405—670):

25 Այսպես. երբ նա դեռ 16 տարեկան էր (1653), իր գրառումներում ատելությամբ է խոսում շավուշների և թուրք աղաների մասին, օրինակ, գրում է. «Ալի շաւուշն մեր թաղին սատակեցաւ կամ «Փոխեցին զՄուռաֆա շար աղան, որ բաղումս գանէր և յոյժ սաստիկ ծեծէր զդասս Քրիստոնէից», կամ «Եւ օրս սատկաւ մուփտին Տաճկաց պահային ի փառս խաւարային գնտին» (տե՛ս «Օրագրութիւն», էջ 48):

ծունեռության շարժիչ ուժերից մեկը: Այդ էլուստրացիան հիանալի գրակառում է վերը հիշատակված նրա երկերում<sup>26</sup>:

Եյսպես, եթե «Օրագրութեան» սկզբնական մասերում՝ 1648—1650 թվականների գրառումներում, պատանի Քյոմուրճյանը բավարարվում է այն ժամանակ Թուրքիայում մղվող գահակալական կոփիլների, զինվորական ապստամբությունների և այլ իրադարձությունների սոսկ նկարագրություններով և գեռես որոշ հույսեր է կապում այս կամ այն սովորականի, կամ վեզիրի հետ<sup>27</sup>, ապա վերջին մասերում, երբ նա արդեն 20—21 տարեկան էր, այդ նկարագրությունների մեջ մացնում է դժունության ու զսպված բողոքի որոշ երանգներ, հետզետե սկսում է ավելի ուշադիր դառնալ վեզիրների և մյուս աստիճանավորների կամայականությունների<sup>28</sup> ու հատկապես հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող հալածանքների փաստերին<sup>29</sup>:

Օսմանյան թագավորների պատմության մեջ նրա հակապետական դիրքորոշումն արդեն դառնում է երկի, թեև հաճախ քողարկված, սակայն հիմնական մոտիվը, ելման կետը:

Քյոմուրճյանն այս երկը գրելիս շի բավարարվել միայն իր ապրած ժամանակի փաստերով, այլ ուսումնասիրելով թուրք պատմաբանների աշխատությունները, ինչպես նաև հավաքելով ժողովրդական լեզենդներ, հիշողություններ ու զանազան զրուցներ, յուրովի շարադրել է օսմանյան պետության ամբողջական պատմությունը, սկզբնավորման օրից մինչև իր ժամանակը: Ընդ որում նա ընտրել ու շեշտել է այն փաստերն

26 «Օրագրութիւնը» ընդգրկում է 1648—1662 թվականների գեղքերը, «Պատմութիւն համառոտ ԴՅ տարու օսմանցոց թագաւորացն...», գրված է 1676 թվականին, իսկ «Տարեգրական պատմութիւնը» տալիս է 1648—1690 թվականների իրադարձությունների վերլուծությունն ու գնահատականը:

27 Խոսելով ժամանակի սովորանի կատարած ծափյալ շրջագայության մասին, ասում էր, որ դա նրա առաջին դուրս գալն էր ու ավելացնում է: «Աստուած կարողութիւն տայ եւ իմաստութիւն, որ այսուհետեւ բանագաշսն մեզ և ամենեցուն շահ և օգուտ է» (Տե՛ս «Օրագրութիւն», էջ 166):

28 Տե՛ս «Օրագրութիւն», էջ 143, 144, 145, 229, 335, 342, 367—368, 375, 379 և այլն:

29 Տե՛ս «Օրագրութիւն», էջ 144, 201 և այլն:

ու երեսվթները, որոնք անհրաժեշտ են եղել իր հայացքների դրսերման համար:

Նա մեծ ուշագրություն է դարձրել թուրքական պետության ներքին կյանքի, պալատական երկպառակությունների, գահակալական կոփիլների, կենտրոնախույս ուժերի պայքարի և հատկապես XVI—XVII դարերում օսմանյան պետության մեջ պարբերաբար բոնկվող զինվորական ապստամբությունների վրա, որոնք պետության քաղաքական ու ֆինանսական ճգնաժամի հայտանիշներն էին<sup>30</sup>: Նա միանդամայն ճիշտ է բացատրել այդ ապստամբությունների առաջացման պատճառները: Բայց տվյալ դեսպում մեզ հետաքրքրողը ոչ այնքան պատճական հարցերի նրա ճիշտ ըմբռումն է, որն ինքնին, իհարկե, մեծ առավելություն է հեղինակի համար, այլ այն, որ նա այդ ապստամբությունների ու դրանց պատճառների մեջ դիտել է իր համար ատելի թուրքական պետականության թուրության մումենաները և հենց դրա համար էլ հատուկ խնամքով հավաքել է համապատասխան փաստեր ու նկարագրել դրանք:

Նրա հակապետական հայացքների դրսերման մյուս հետաքրքիր արտահայտությունը օսմանյան պետության մեջ ապրող ժողովուրդների ճնշված, հալածված վիճակի ցուցադրումն է: Նկարագրելով օսմանյան թագավորների վարած բազմաթիվ պատերազմները, նա առաջին հերթին շեշտում է այն սոսկափ աղետները, որ բերում են դրանք ժողովուրդներին: Այնուհետև, խօսելով այդ պատերազմների ընթացքում թուրք տիրակալների կատարած նվաճումների մասին, մանրամասն թվարկում է նվաճված ժողովուրդների կրած տառապանքները, ճիշտակում հալածանքները, հարկերի ու տուգանքների հսկայական բեռք: Օրինակ, նկարագրում է, թե ինչպես Օսման III թագավոր Ուրիխանը գրավելով նիկողիմիան, եկեղեցիները քանդում և մզկիթներ է շինել տալիս, իսկ քրիստոնյաներին կոտորում է: 1310 թվականին գրավում է Գալիպոլին, ձերբակալում և թալանում է բնակիչներին: Կամ ինչպես

<sup>30</sup> Հմմա. А. Тверитинова, Восстание Караб-Языджи Дели Хасана в Турции, М.-Л., 1946, № 30-50.

Բայազիդ I-ը վալախներին երկիրը գրավելիս բնակիչներին մահմեդականացնում է, հույներին և բուզարներին «ի սուր մաշի»: Հույներին խիստ հալածում է նաև Քյոփուրլու վեղիրը: Քյոմուրճյանը հատկապես շեշտում է այն հալածանքները, որոնք կիրառվում էին հրեաների նկատմամբ:

Քյոմուրճյանը կարողացել է նկատել նաև թուրք ժողովրդի գժգոհության բազմաթիվ փաստեր: Այդ գժգոհությունների մասին նա խոսում է այն հատվածներում, որտեղ նկարագրում է զորքի ապստամբությունները: Այս տեսակետից հետաքրքիր է հատկապես 1651 թվականին բռնկած ապստամբության նկարագրությունը, որտեղ մեջ է բերված զորականների հետեւալ բողոքը.

Զեէնիշերի աղասին<sup>31</sup>  
Եւ զքեհահէկն<sup>32</sup> ընդ անուանիս այլ,  
Բզմէյմար մուստաֆասին<sup>33</sup>,  
Եւ զպաշպագի գուլին<sup>34</sup> ընդ այլ:  
Զշաւուշ պաշին<sup>35</sup>...  
Բզխարաշնին<sup>36</sup> և զկէօմբուկնին<sup>37</sup>  
Եւ զթէրսախանէ էմինին<sup>38</sup> այլ...  
Սսեն սոքայ են հրամայօդք,  
Զգործ արքունոյդ գու շիմացեալ:  
Զոր ինչ կամին մեղ զայն առնեն,  
Եւ զնազանդից անիրաւեալ<sup>39</sup>:

Թէ՛ «Օրագրութեան» և թէ՛ «Պատմութիւն համառօտ Գմտարւոյ օսմանցոց թագաւորացն...» երկի մեջ Քյոմուրճյանը

31 Ենիշերիների զորապետ:

32 Կերի մատակարար?

33 Ճարտարապետների վերահսկիչ:

34 Ներքինապետ?

35 Զորահրամանատար:

36 Հարկահան:

37 Մաքսապետ:

38 Նախարարաների վերակացու:

39 Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 147բ.

Հափաղանց ուշադիր է հատկապես հայերի վիճակի հետ կապված փաստերի նկատմամբ: Նա նկարագրում է ամենաշնչին դեպքերը, հիշատակում հալածանքների բազմաթիվ ու բազմապիսի փաստեր և ստեղծում հայ ժողովրդի տառապալից կյանքի պատկերը<sup>40</sup>:

Քյումուրձյանի հակասետական հայացքներն արտահայտվել է նաև այն սուր, ոիպուկ, համարձակ գնահատականների մեջ, որ նա տվել է մի շարք թուրք տիրակալների և նրանց գործունեությանը<sup>41</sup>:

40 Խոսելով Քյումուրձյանի վեղիրի սրդու կատարած դաժանությունների մասին, թերում է այն փաստը, որ նա քանչել է տվել հայերի հենց նոր վերաշնած եկեղեցիները: Կամ պատմում է Կարսի, Կարաչիսարի, Ակնա և այլ վայրերի եկեղեցիները քանզելու, վանի եկեղեցին մղկիթ դարձնելու և բնակիներին սարսափելի տուգանքների հնիթարկելու մասին:

Կամ նկարագրում է, թե ինչպես հայ ժողովրդի վիճակը էլ ավելի է վատթարանում օսմանյան թագավորների վարած մշտական պատերազմների պատճառով: Խոսելով 1663 թ. Հունգարներից օսմանյան բանակի կրած պարտության մասին, նա շեշտում է, որ օսմանյան տիրակալներն իրենց զայրացիք բափում են հայ ժողովրդի գլխին:

Բնդհանուր զըրոյս լըրոյ,  
Տաճիկը առ մեղ խիստ խոժոռեալ,  
Ջլուծա հարկատուաց ծանրացուցին  
Համայն լերկիր և պահանչեալ:  
Հարսանիք թէ ճոխութեամբ  
Եվ ի զրոսանս թէ զոք զբուալ  
Գանահարեալ վշտացուցին  
Ի ի թէրլիքից այլ տաճկացեալ:

(«Պատմութին համառու ԴՇ տարւոյ օսմանցոց թագաւորացն...», Մատենագրան, ձեռագիր № 1675, էջ 163ա):

41 Սովուն Սելիմ Յակուպին բնութագրելու համար ասում է, որ նա «համայնից յաշու ահարկու» է (էջ 65բ) եղել:

Մի այլ տեղ նկարագրելով նուրք փաշաներին ու նրանց կատարած դաժանությունները, շատ համարձակ մակդիրներով է բնութագրում նրանց:

Ղազի Ահմետն անիրաւեալ,  
Գրզիր օղին գոռողացեալ,  
Եվ Հասան-պէկն հարստարեալ:

ի միջի այլոց Քյոմուրճյանի այս հայացքներն արտահայտվել են նաև նրա այլ տիպի գրվածքներում՝ նամակներում, ուղերձներում, ողբերում:

1632 թվականին Եղիազար կաթողիկոսին գրած նամակում, նա պատմում է, որ արքայի Աղրիանապոլսում կատարած մեծ որսի հետևանքով 500 մարդու «կեանք է չնշուել»: Այդ նույն նամակում նա կանգ է առնում հարկերի ու զրանց գանձման հետ կապված կամայականությունների վրա, զգվանքով նկարագրում թուրք աղաների ցոփ ու շվայտ կցանքը:

Թեև մեր ձեռքի տակ չի եղել Քյոմուրճյանի «Տարեղբական պատմութիւնը», որը նա գրել է իր կյանքի ավելի ուշ շրջանում, սակայն ենթադրով հայտնի տեղեկություններից, պիտի ենթադրել, որ այնտեղ շարադրված պատմական փաստերը ևս նույն նպատակն են հետապնդել:

Յուզց տալով օսմանյան պետականության պատկերը, Թուրքիան բնութագրելով որպես մի երկիր, որտեղ նույնիսկ թուրք ժողովուրդն ապահով վիճակ շունի, իսկ հայերը ենթարկվում են ոչ միայն տնտեսական, այլև բարոյական ու կրոնական հալածանքների, Քյոմուրճյանը պայքարել է իր ժողովրդի ինքնության պահպանման համար: Այդ պայքարում, իհարկե, նա միայնակ չի եղել, նրա երկերում փաստորեն արտացոլված են ժամանակի ամբողջ առաջավոր հայ մտավորականության հույզերն ու ձգտումները: Սակայն, ինչպես կտեսնենք, ընդհանուր շարժման մեջ Քյոմուրճյանն աշխի է ընկել իր սկզբունքայնությամբ և անշահախնդրությամբ:

Հայ ժողովրդի ինքնության պահպանման համար մղվող պայքարը բազմազան ձևեր է ընդունել: Այսպես, այն որոշ գեպքերում հանգել է հայկական եկեղեցու միասնականության համար մղվող պայքարին, քանի որ Քյոմուրճյանի և նրա նման

Տրապիզոնայ Ալի փաշայն  
Լզբաղում մարբս լացուցեալ

• • • • •  
Եւ միրլու Ապտըրահման  
Անմեղ արեանց միշտ ծարաւեալ:

(Զեռագիր № 1675, էջ 88բ, 89բ և 90ա):

մտածողների կարծիքով միասնական եկեղեցին ամուր էր պահում հայերի երկու՝ արևմտյան և արևելյան հատվածների կապը, և դրանով իսկ արգելակում օսմանյան պետության վարած ձուլման քաղաքականությանը:

Նույնիսկ մի այնպիսի հարցի, ինչպիսին Երուսաղեմի Ա. Հակոբի վանքը հույներից ետ վերցնելու խնդիրն էր, հսկայական կարևորություն է տրվել, որովհետեւ պետականության բացակայության պայմաններում արևմուտքի հայության համար այդ վանքը դիտվել է որպես ոչ միայն կրոնական, այլև աղջական կենտրոն: Դրա համար էլ հասարակական գործունեության բնագավառում Քյոմուրճյանի կատարած առաջին քայլը եղել է այդ վանքը ետ ստանալու համար պայքարող Եղիազար Այնթափցուն բանտից աղատելու գործը, և առհասարակ մասնակցությունն այդ պայքարին<sup>42</sup>:

Հայկական եկեղեցու միասնականության պահպանման համար մղվող պայքարը հատկապես սուրբ բնույթ է ստանում Երուսաղեմի և էջմիածնի կաթողիկոսական աթոռների շուրջը 1663—1682 թվականներին տեղի ունեցած երկպառակությունների ժամանակի<sup>43</sup>:

42 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ գիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 2523—2524:

43 Նկատի ունենք այդ թվականներին ստեղծված հետևյալ իրադրությունը, Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցին օգտագործելով արևմտահայ բարձրաստիճան հոգևորականության և խոչայության որոշ մասի գգոհությունն էջմիածնի համընդհանոր կաթողիկոսությունից, աշխատում է արևմտահայ եկեղեցին անշատել էջմիածնից և ստեղծել հակաթոռ կաթողիկոսություն: Իր այս գործունեության մեջ Եղիազար Այնթափցին, իհարկե, ունեցել է և անձնական, շահադիտական շարժառիթներ, բայց միաժամանակ առաջնորդվել է քաղաքական որոշակի ծրագրով: Արևմտահայաստանում կաթողիկոսություն ստեղծելով, նա ցանկացել է համախմբել արևմտյան հայությունը, թուրքական կառավարության բռնի ձուլման քաղաքականության դեմ ավելի արդյունավետ պայքարելու համար:

Բայց Եղիազարի այս ծրագիրը ներհակ էր Հայաստանի համընդհանուր կաթողիկոս Հակոբ Զուղայեցու ոչ միայն շահերին, այլև ծրագրին: Զուղայեցին փայփայում էր քրիստոնյա Ելրոպայի օգնությամբ օտար լծից հայության աղատագրելու սին պատրանքը և բնականարար հակաթոռ կաթողիկոսության մեջ տեսնում էր ոչ միայն իր՝ ամենայն հայոց կաթողիկության մասնակի ավելի արդյունավետ պայքարելու համար:

Այս գեպքում էլ Քյոմուրճյանն ակտիվորեն մասնակցում է պայքարին, զարձյալ առաջնորդվելով ժողովրդի ինքնության պահպանման համար մարտնչելու իր սկզբունքով։ Երբ Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցին մտագրվում է էջմիածնից անկախ հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել և այդ մասին տեղյակ պահելով Կիլիկիայի Խաչատուր կաթողիկոսին, խնդրում է իրեն կաթողիկոս օծել, ապա վերջինս խորհրդի է Հրավիրում մի խումբ ականավոր մարդկանց, այդ թվում նաև Քյոմուրճյանին։ Եվ Քյոմուրճյանն է լինում այն պղկցիկ ու վստահելի մարդը, որին հանձնարարվում է Եղիազարին վտանգավոր քայլից ետ պահելու դժվարին գործը։

Քյոմուրճյանը մեծ հոանդով ձեռնամուխ է լինում այդ գործին, բայց չի հաջողում իր առաքելության մեջ։ 1664 թվականին մեծագին ընծաներով կաշառելով թուրքական ավագանուն, Եղիազար Այնթափցին դառնում է էջմիածնից անկախ, հակաթոռ կաթողիկոս<sup>44</sup>։

Քյոմուրճյանը Այնթափցու կատարած քայլի մեջ տեսնում է իր պատրանքների խորտակումը, քանի որ նրա կարծիքով Եղիազարի հակաթոռ կաթողիկոսությունը կարող էր նպաստել հայ ժողովրդի մասնատմանը, միմյանցից հեռացնել նրա երկու՝ արևելյան և արևմտյան հատվածները։

Սրանով պիտի բացատրել Քյոմուրճյանի պայքարը Եղիազարի և Եղիազարականների դեմ։ Այս է պատճառը, որ չնայած

---

շահերի ստնահարում, այլև խոշընդուռ իր ծրագրի իրականացման համար։ Ի միշտ այլոց, նույնատիպ պատրանքներ ուներ նաև Եղիազար Այնթափցին, բայց ոչ թե ողջ հայության, այլ միայն արևմտահայ հատվածի համար։

Այսպիսով, կաթողիկոսական հարցի շուրջը մղվող պայքարը փաստորեն, առնչվում էր երկու թեերի պատագրական ծրագրերի հետ։

Այս հարցի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է բաղել Աշխատության «Դրվագներ հայ պատաղրական մարքի պատմության» աշխատության երկրորդ գրքում (Երևան, 1959, էջ 111, 148—149, 151—155, 157, 160, 174, 217—218, 283, 294—299, 351) և Հ. Անասյանի «ԽVII դարի պատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում» (Երևան, 1962), աշխատության մեջ։

44 Տե՛ս Զամշյան, Պատմության հայոց, Գ., էջ 697—703, Օրմանյան, Աղքապատում, թ., էջ 2554—2555, ին, Հայոց պատմություն, էջ 368 և այլն։

այն համակրանքին, որ նա վազ պատանեկությունից տածել է Այնթափցու նկատմամբ, Քյոմուրճյանը շի վարանել օդնության ձեռք մեկնելու էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղարքուն, երբ վերջինս 1665 թվականին անձամբ եկել է Կ. Պոլիս՝ Այնթափցու հետ բանակցելու:

Այս պայքարում Քյոմուրճյանը շի ունեցել և չէր էլ կարող ունենալ որևէ անձնական շահախնդրություն, քանի որ նա ապահովված մարդ էր և Հոգեոր կոչում շունենալով, շուներ նաև Հոգեորական պաշտոնի ակնկալություն, մի բան, որ ունեին երկու կողմերի պայքարող Հոգեոր առաջնորդները՝ Եղիազար Այնթափցին, Հակոբ Զուղարքին և Մարտիրոս Ղրիմեցին:

Եվ քանի որ Քյոմուրճյանի համար այդ պայքարն ունեցել է միայն և միայն հասարակական-ազգացին նշանակություն, ապա նա գատաղարտել է բոլոր նրանց, ովքեր պայքարի հիմքում շահադիտական ակնկալություններ կամ անձնական մանր-մունք հաշխիլներ են դրել. Այդ է պատճառը, որ նա քննադատում է ոչ միայն Եղիազար Այնթափցուն, այլև այն բոլոր Հոգեորականներին ու եկեղեցական պետերին, որոնք երկու կաթողիկոսների հակամարտությունը խաղաղեցնելու պատըրվակով, փաստորեն, աշխատել են իրականացնել իրենց սեփական, փառամոլական ձգումները: «Ոմանք,—դրում է նա իր «Տարեգրական պատմութեան» մեջ,—յաւուրս յայսորիկ մաին ի մէջ երկուց կաթողիկոսացն իրը զի խաղաղացուցեն և զի չէր անկեղծաբար, այլ փառամոլութեամբ և տգիտաբար և ևս զանուն իրեանց գերիվերոյ բարձրացուցանել կամէին, եթե գերազոյն ցուցեալիքն ոչ կարացին զհունս խռովութեանց գտանել, մեք մեզէն գտցուք ասելով»<sup>45</sup>,

Անկողմնակալ ձևով նկարագրելով ժամանակի գեպերը, Քյոմուրճյանը դառնացած ակնարկում է, որ նույնիսկ Եղիազարի ամենակատաղի հակառակորդի՝ Մարտիրոս Ղրիմեցու պայքարի մեջ շափազանց մեծ դեր են խաղացել անձնական-

45 Գ. Գալամմերյան, Կենսագրություններ, Վիեննա, 1915, էջ 76:

շահադիտական նկատառումները, նրա ձգտումը տիրանալու երուսաղէմի պատրիարքությանը:

Հակոբ կաթողիկոսի մահվան առթիվ գրած գանձ-ողբում<sup>46</sup>, այլաբանորեն վերլուծելով՝ Հակաթոռ կաթողիկոսության դեմ Մարտիրոսի մղած պայքարի հանգամանքները, Քյոմուրճյանը ցուց է տալիս, որ Հակոբ Զուղայեցուն խանգարել է ոչ միայն Եղիազարը, այլև ինքը՝ Մարտիրոս Ղրիմեցին.

Ոմն<sup>47</sup> ձախմէ զշարեալ և սատան կանգնեալ,  
ի Գլուխ մխեցեալ.

Ոմն<sup>48</sup> յաշմէ ձախեալ, բարեկամացեալ,  
Գլխոյս ղվնաս բերեալ:

Նույն ողբում նա սուր ու մերկացնող բառերով շեշտել է, և՝ Եղիազարի, և՝ Մարտիրոսի անձնական-շահադիտական նկատառումները.

Նախանձու մոլեալ, ընդ միմեանս բախեալ,  
զԳլուխս պատճառ եղեալ,  
Ընդ փառս նկրտեալ, ընդ պատառս ազանեալ  
զԳլուխս զիշեցուցեալ<sup>49</sup>:

46 «Երեմիա Զէլէպւոյ գանձ և ողբ ի վերայ Յակոբ կաթողիկոսի»: Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1933, № 9—10, էջ 589—595, Հրատարակել է Ն. Ակինյանը:

47 Ակինյանը նշում է, որ այս գանձ-ողբի ձեռագրի լուսանցքներում, մի շարք բառերի մոտ, Քյոմուրճյանը ծանոթադրություն-բացարձություններ է գրել. կոնկրետ այս բառի մոտ, լուսանցքում, գրված է եղեւ «Եղիազար»:

48 Այս բառի մոտ զրված է եղեւ «Մարտիրոս»:

49 Այս պայքարում Մարտիրոս Ղրիմեցու ունեցած շահադիտական նպատակները նկատել են թե՛ Վ. Թորգոմյանը, և թե՛ Աշ. Հովհաննիսյանը: Վ. Թորգոմյանը նշելով, որ Ղրիմեցին լի կարողացել Եղիազարին հեռացնել կաթողիկոսությունից, ավելացնում է. «Կը սկսի գուն գործել գոնէ Երուսաղէմի պատրիարքութիւնը խլել անոր ձեռքէն, բայց անոր ալ շաղողելով, ինքն իրեն, կը ստեղծէ նոր պատուանուն մը. «Երուսաղէմի առաջնորդ», Եղիազարէն բոլորովին անկախ, և այդ տիտղոսով կերթայ բազմել ու. Աստուածածնի

Պառակտողական պայքարը ժողովրդի համար վնասակար համարելով, Քյոմուրճյանը ջանք չի խնայել մեղմելու երկու կողմերի կրքերը: Դատապարտելով Եղիազար Այնթափցու քայլը, նա միաժամանակ աշխատել է աղքել Ղրիմեցու վրա, որը Եղիազարի հակաթոռ կաթողիկոսության ստեղծումից հետո արևմտահայ գաղութի համարյա յուրաքանչյուր քաղաքում քարոզներ է կարդացել նրա գեմ, անեծք ու նզովք թափել նրա գլխին, միաժամանակ կաշառել թուրք աստիճանավորներին Եղիազարին հեռացնելու համար<sup>50</sup>:

Համամիտ լինելով Մարտիրոսի պայքարի գաղափարական կողմին, Քյոմուրճյանը դեմ է եղել պայքարի նման ձևերին:

Եկեղեցին, տուրքեր կը հաւաքէ ո. Ցակորի անունով. աշէն ձախէն կարծակե հրամաններ...» («Ստամբոլոյ պատմութիւն», էջ 169): Խսկ Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Ամուր նեցուկ հանդիսացավ էջմիածնական կուսակցությանը Պոլսի պատրիարք Մարտիրոս Կաֆացին, որը աշք ունենալով երուսաղեմի պատրիարքական աթոռին, ամպրոպ ու կայծակ էր տեղում պառակտիչ Եղիազարի գլխին: Նա կարողացավ նույնիսկ մի երկու անգամ հրաման գնել Երուսաղեմի պատրիարքության համար և վայր իշեցնելով Եղիազարին, կարճ ժամանակով բազմել նրա գահին»: (Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, էջ 152):

50 Ա. Մարտիրոսյանի 1958 թվականին հրատարակած «Մարտիրոս Ղրիմեցի» ուսումնասիրության մեջ Ղրիմեցու գործունեության այս կողմի մասին դիտողությունների շենք հանդիպում: Մի կողմ թողնենք, որ ուսումնասիրության հեղինակը Ղրիմեցուն ներկայացնում է որպես Այնթափցու դեմ պայքարող բանակի միակ պարագուստը, Քյոմուրճյանի անունն անգամ շհշատակելով: Դրանից բացի նա այն թեզն է զարգացնում, թե պայքարի մեջ Ղրիմեցին առաջնորդվել է միայն ու միայն հասարակական շահերով: Իրավացիութեան հակազդելով անցյալի բանասիրությանը, որը հակված է եղել Եղիազար—Հակոբյան պայքարը բացատրել երկու կողմերի գործիչների զուտ անձնական նպատակներով, Մարտիրոսյանը հասնում է հակառակ ծայրահեռության՝ Ղրիմեցու գործունեության մեջ տեսնելով միայն հասարակական շարժադարձիթները:

Այս բանը գեռևս 1959 թվականին նկատել է էմ. Պիվազյանն իր «Մարտիրոս Ղրիմեցի» գրախոսության մեջ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1): Հողվածում Պիվազյանը շեշտում է, որ միայն «Համազարմային մեծ աղետը» գիտակցող մեծ գործչի մտահոգությունը չէ, որ Ղրիմեցուն մասնակից է դարձրել այդ պայքարին, ինչպես ներկայացնում է զրախոսավող գրքի հեղինակը», որ այս հարցում «քիչ դեռ շեն խաղացել անձնական շարժադարձիթները կա:

Քյոմուրճյանը պայքարի անազնիվ ձեւերի համար խստագույնս դատապարտել է նաև ժամանակի մեծանուն Հարուստներին, հատկապես Հակոբ Ջուղայեցու վարկատու ադուլեցի և զահկեցի խոչաներին, որոնք Ջուղայեցու վկին շոքած՝ իրենց պարտքերն ու տոկոսներն էին պահանջում։ Դրանց՝ Միլզա, Խոսրով, Աստվածատուր և Պնեաթ խոչաների մասին նա մեծ զայրութով է խոսում Հակոբ Ջուղայեցու մահվանը նվիրված գանձ-ողբում։

Փասբուսաց<sup>51</sup> դիպեալ, որք խորամանկեալ  
դՍուբբ միշտ նենգեալ.

Բժիշկ իբր ցուցեալ, զդեզս միշտ մատուցեալ,  
զախտն ծանրացուցեալ.

Սուրբս ապուշ մնացեալ, միամիտ վարեալ,  
զարտաքնոցն շղիտեալ.

Ազգիս բողոքեալ, զգատաստան խնդրեալ,  
զոշինչ շահեցեալ<sup>52</sup>:

### Եվ այնուհետեւ

...Յոնի աստ բերեալ, միշտ զաւաճանեալ,  
Դատ և գուռ մատնեալ.

Զհամարս պահանջեալ, զտոկոսս յարաբարդեալ  
Զպարտս բաղումս խուզեալ.

Ցեցքն ևս զօրացեալ, զոսկերսն միշտ ծըծեալ  
Մինչ յուղեղն հասեալ<sup>53</sup>;

Քյոմուրճյանի և առհասարակ ժամանակի աղջային գործիչների համար միասնական եկեղեցուց ոչ պակաս կարեոր է եղել նաև քրիստոնեական կրոնի պահպանման հարցը, որովհետեւ թուրքական պետության բազմակողմանի ձնշման պայմաններում, երբ հաճախ բռնությամբ մոռացության էր տրվում անզամ մայրենի լեզուն, երբ անընդհատ ոտնձգություններ էին

51 Այս բառի մոտ է, որ ձեռագրի լուսանցքում ն. Ակինչանը կարդացել է վերը Հիշտակված խոչաների անունները՝ զրված Քյոմուրճյանի ձեռքով։

52 «Հանդէս ամսօրեալ», 1933, № 1—2, էջ 593։

53 Նույն տեղում, էջ 594։

կատարվում ազգային սովորութների ու հավատի դեմ, նրանց կարծիքով քրիստոնեությունը մնում էր գրեթե այն միակ կովանը, որով նրանք հնարավոր էին համարում պայքարել ձուլման դեմ:

Սրանից է բխում Քյոմուրճյանի մի շարք երկերի բովանդակությունը, որոնցում նա նպատակ է ունեցել ժողովրդի մեջ արթուր պահել հավատը՝ լինի այսպիս կոչված սուրբ վայրերի նկարագրություններով, թե դավանաբանական ճառերով, աստվածաշնչային լեզենդների պարզ վերաշարագրությամբ, թե քրիստոնեական բարոյախոսական սկզբունքների հիշեցումով:

Ի դեպ, իր կրոնական երկերի ու տաղերի մի զգալի մասը նա հորինել է կամ թուրքերեն, կամ թուրքերենախառն հայերեն, որպեսզի գրանք ավելի հասկանալի լինեն մայրենի լեզուն արդեն մոռանալ սկսող կոստանդնուպոլսի և առհասարակ Այնմտյան Հայաստանի հայությանը:

Նույն նպատակով նա հայերենից թուրքերենի է թարգմանել մի շարք կրոնական երկեր՝ «Նոր կտակարանը», «Հին կտակարանի» որոշ հատվածներ, համառոտ «Յայսմավուրբը», Գավթի սաղմոսները, մի շարք աղօթքներ ու քարոզներ:

Որոշ առումով այս նպատակին է ծառայել նաև նրա «Համառոտ հարցմունք և պատասխանիք»<sup>54</sup> աշխատությունը, որտեղ, կարելի է գտնել հարց ու պատասխաններ աստվածաշնչային թեմաներով, ինչպես նաև հայ եկեղեցու պատմության և կրոնական կարգ ու կանոնի մասին:

Այդ նույն նպատակն են հետապնդում նաև այն մի շարք քրիստոնեական լեզենդները, որ նա մեջ է բերում իր պատմական բնույթի աշխատություններում:

Եվ, որքան էլ տարօրինակ լինի, նույն նպատակին է ծառայել նաև այն անխնա, սուր, մերկացնող քննադատությունը, որ նա ծավալել է ժամանակի հոգեորականության դեմ: Ասում ենք տարօրինակ, որովհետեւ կարող է թվալ, թե Քյոմուրճյանը պետք է որ ընդուներ նաև եկեղեցու հայրերի սրբությունն ու

<sup>54</sup> Տե՛ս Մատենադարանի ձեռագիր, № 72, էջ 131ա—173ա:

անքննադատելիությունը: Բայց մանկուց մոտիկ կանգնած լինելով հոգեսր դասին, Քյոմուրճյանը վաղէ ճանաշել «սուրբ» հայրերին: Եվ դեռ պատանի հասակից նրա մեջ կասկած է առաջացել, թե արդյոք կարո՞ղ են նման այլասերված մարդիկ լուսավորել ժողովրդին, հոգալ նրա մտավոր ու բարոյական պետքերը:

Հետագայում այս կասկածն ավելի ու ավելի է խորացել և հասուն տարիներին Քյոմուրճյանը հանգել է այնպիսի ընդհանրացումների, որոնք, գուցե և անկախ հեղինակի ցանկությունից, վերից վար մերկացնում են եկեղեցու սպասավորներին:

Այսպես, եթե «Օրագրութեան» սկզբնական շրջանի գրառումներում 11—14 տարեկան պատանին դեռևս միայն փաստագրում է Կ. Պոլսի եկեղեցականների ծեծկոտուքներն ու բանսարկությունները<sup>55</sup>, ապա մի փոքր ավելի ուշ, նույն «Օրագրութեան» վերջին մասերում, 20—22 տարեկան Քյոմուրճյանն արդեն անսքող զայրութով է խոսում հոգեորականության այլասերման մասին, դառնացած դատապարտում նրանց շահատակությունները. «Խաչ և սկիհք և շուրջառք և ամենայն զարդ և անօթ սպասուց սրբութեան՝ ամենայն պակասեալը ի սոցա ժամանակս: Ճխաչս և զկանթեղս զարծաթեղէնս և զոսկեղէնս ի հալոց տուեալ՝ աշօք տեսանէաք... թէ խաչ և թէ սկիհք ի տունս իւրեանց արգելուին, ծախէին և ի հալոց տային...: Եւ զհասս եկեղեցոյն՝ խնկին և մոմին, մահուան և կենաց, կեղեքէին զանմեղ քրիստոնեայս և ի պիղծ սէրս իւրեանց, ի զրօսանս և ի գինէտունս ուտելով մսխէին և զուարճանային այնու դրամով»<sup>56</sup>:

Հետագայում նույնպես Քյոմուրճյանն առիթը բաց չի թողնում նրանց շահատակությունները մերկացնելու գրեթե յուրաքանչյուր երկում: Այսպես, նույնիսկ «Ստամպօլոյ պատմութեան» մեջ խոսելով Կ. Պոլսի «Ճնդան գափուի» (բանտի դուռ) մասին, նա հոգեորականների ագահության և հարբեցողության փաստեր է հիշատակում:

55 «Օրագրութիւն», էջ 137—138 և այլն:

56 Նույն տեղում, էջ 284—285:

Քյոմուրճյանի աշխարհայացքի այս «երկվությունը»՝ մի կողմից հավատարմությունը քրիստոնեական բարոյականությանը, նվիրվածությունն ուսմունքին, մյուս կողմից եկեղեցու սպասավորների գործունեության անխնա քննադատությունն ակնհայտորեն դրսեորվել է նրա նամակներում։ Որդուն՝ Գրիգորիսին, հասցեագրված նամակները լի են և՛ քրիստոնեական բարյախոսությունից բխող խրատներով, և՛ միաժամանակ հորդորներով՝ հեռու մնալ էջմիածնի այն հոգեորականներից, որոնք աշքի են ընկնում իրենց փշացած վարքով։ Նույն նամակներում նա դառնացած դանդաղում է Կ. Պոլսի հասարակությունից և հատկապես հոգեորականներից։ «Զինչ մեղադիսցուք ուամկացս, որոց քարոզիչը են մախանօք փառաց և ազահութեան ախտիւք և այլովք մոլեալք»<sup>57</sup>։

Իսկ Մահաեսի Ամբակումի և Մարտիրոս Ղրիմեցու անունից Սսի կաթողիկոս Խաչատուրին գրած նամակի վերջում, հիշատակելով, որ ուղարկվող թանկագին բանվածքը (արձվի խորհրդանշանով) նրա համար է պատվիրված, ավելացնում է. «Եւ զՏէր Տրդատս սիրով ուղարկեցաք հազիւ առեալ ի ձեռաց գոռողամիտ աթոռակալաց քաղաքիս, զորոց բարուց տեղեակդես, և խաղաղութեամբ ուղարկեցաք ի սէր և յօրհնութիւն քո։ Ողջ լեր»<sup>58</sup>։

Այս հարցում Քյոմուրճյանի հայացքների զարգացումն իր բարձրակեաին է հասնում վերջին շրջանում զրված «Տարեգրական պատմութիւն» աշխատության մեջ։ Այստեղ ևս նա զայրույթով է նկարագրում պատրիարքական աթոռի համար եկեղեցու բարձրաստիճան սպասավորների մղած շահադիտական կոփվները, որոնք ավելի էին ծանրացնում աշխատավոր ժողովրդի առանց այն էլ անմիտար վիճակը. «Եւ բորբոքէին ամբոխեալք ընդ միմեանս, թէ ես եղէց աթոռակալ և միւսն, թէ ես եղէց երեսփոխան։ Որպէս գերեզման բաց էր կոկորդ նոցա։ Եւ զայսքան արդիսնս և զհասս եկեղեցեաց անիրաւաբար յա-

57 «Օրագրութիւն», հավելված, «Բուղթեր», էջ 467։

58 Նույն տեղում, էջ 516։

փըշտակեալ անխտրաբար ուտէին: Եւ չքաւորք և տնանկք ի քաղցութենէ մեռանէին»<sup>59</sup>:

Քյոմուրճյանը խարազանում է եկեղեցու հայրերին՝ տեսնելով, որ նրանք իրենց վարքագծով խաթարում են կրոնի և եկեղեցու հեղինակությունը: Նրա քննադատությունը բխում է Հոգեորականությանն անբասիր տեսնելու ցանկությունից: Այս հարցը Քյոմուրճյանի՝ համար այնպիսի կարեոր նշանակություն է ունեցել, որ սրա կապակցությամբ նա նույնիսկ ընդհարվել է իր մտերիմ, համախոհ և երրեմնի ուսուցիչ Մարտիրոս Ղրիմեցու հետ, երբ վերջինս անձնական նկատառումներով Կ. Պոլսի պատրիարք է նշանակել անուս, շահամոլ ու հասարակության մեջ վարկը կորցրած մի ոմն Կրպոյի:

Հայերի ինքնությունը պահպանելու գործում Քյոմուրճյանն ու նրա նման մտածող մարդիկ, չափազանց կարեոր են համարել նաև ժողովրդի պատմության հերոսական դրվագների փառաբանումն ու հիացական վերապատումը:

Մասամբ հենց այս նպատակով է գրված Քյոմուրճյանի «Համառօտ հարցումնք և պատասխաննիք» աշխատությունը: Այստեղ, քրիստոնեությանը վերաբերող հարցերից հետո, հեղինակը շոշափում է այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են հայոց պատմությանն ու մշակույթին: Օրինակ՝ հարցնում է, թե ո՞վ է սահմանել հայոց գիրը, ո՞վքեր են եղել Մեսրոպի աշակերտները, ո՞վքեր են հորինել շարականները, ո՞վքեր են մեր տաղասացները, ո՞րոնք են մեր պատմագիրները<sup>60</sup> և այլն:

Հետագա հարցերն ամբողջությամբ վերաբերում են հայոց պատմությանը:

59 Ս. Երեմյան, «Երմիա Զելեպի, Տարեգրական պատմութիւնը Հոգվածը» («Բազմավեպ», 1902, № 9—10, էջ 478):

60 Ի միշի այլոց այդ պատմագիրների թվում նա տալիս է նաև իր անունը և նշում, թե ինչ պատմություններ է գրել. զբանք են՝ Մաճարաց, Գանտիայի, Սովթան Մեհմեդի, օսմանցոց (4 հատոր), Լենկ-Թեմուրի, Բաղդադի, Պարսկաստանի խալիֆաների, Հունաց, Հումեացվոց, Ամերիկացի և Առնավուտին (Ալբանիա), Օսմանցոց համաստ, Բագրատունյաց, Կիլիկիայի, Սովսեսի համառոտ ժամանակադրությունը, որոնց մեծ մասը մեղ շին հասել:

Այդ հարցերով ու պատասխաններով հեղինակը մի հիմնական նպատակ է հետապնդել. թուրքիայում ապրող և իրենց ազգային սովորությունները, լեզուն, պատմությունը, մշակույթը աստիճանաբար մոռացող հայերի մեջ թարմացնել հայրենասիրական պատկերացումները, հիշեցնել Հայաստանի երրեմնի հզորությունը, ուժեղացնել ազգային արժանապատվության զգացումը, ինչպես նաև սրել ատելությունը բռնապետության դեմ:

Նույն այս նպատակին է ծառայել նաև Քյոմուրճյանի «Հայոց պատմությունը»:

Այստեղ ևս նա ջանք չի խնայում ընդգծելու Հայաստանի անցյալ փառքը, հայ թագավորների հզորությունը: Հատուկ կերպով շեշտում է Տիգրանի, Արշակի, Տրդատի պատերազմական հաղթանակները, հայկական քաղաքների ճոխությունը, հարստությունը և այլն:

Թեև քողարկված, այլաբանորեն, սակայն նույն նպատակն է հետապնդում նաև այն «Ողբը», որ նա գրել է «Պատմութիւն Համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն» երկում, և որտեղ նկարագրել է 1453 թվականին օսմանցիների կողմից կոստանդնուպոլսի գրավումը: Իր «Ողբը» նմանեցնելով մերթերեմիայի, մերթե ծսայու, մերթե Դավթի, մերթե Խորենացու և մերթե Շնորհալու ողբերին, նա միանգամայն որոշակիորեն ասում է, թե իր՝ մի հայի համար այդքան ցավալի է Բյուզանդիայի անկումը, որովհետեւ ինքը Բյուզանդիան դիտում է որպես քրիստոնեության օրրան, որպես «Նախկին տուն հաւատոյ», որպես մի հզոր պետություն, որը հայերի համար կարող էր պատվար լինել օսմանյան բռնապետության դեմ:

Մյուս կողմից այստեղ Քյոմուրճյանը Բյուզանդիայի անկման նկարագրությունն առիթ է ծառայեցնուում՝ ողբալու իր սեփական հայրենիքի ազատության, նրա հզորության կորուստը, բորբոքելու ընթերցողների ազգային արժանապատվության զգացումը, դրանով իսկ նպաստելու ազգային ինքնության պահպանմանը:

Ազգային ինքնությունը պահպանելու ամենահիմնական միջոցներից մեկն էլ Քյոմուրճյանն իրավացիորեն համարել է

լուսավորությունը՝ մայրենի լեզվով զիր ու գրականության տարածումը, գպրոցների ստեղծումն ու ուժեղացումը: Նա երբեք առիթը բաց չի թողել խոսելու այդ հարցի մասին: Օրինակ, թվում է, թե Հակոբ կաթողիկոսի մահվանը նվիրված դանձում հարկ չկար դրան անդրադառնալու: Սակայն, այդտեղ, երբ հիշատակում է Փիլիպպոս կաթողիկոսի անունը, անմիջապես դիտել է տալիս, որ նա զարկ է տվել ուսումնակրթական գործին.

Դպրատունք բացեալ, մարզարանք բանեալ,  
Աշակերտք վարժեալ.  
Դասատունք հաստեալ, վարժապետք  
յարդեալ, տէլէտք ճոխացեալ.  
Իմաստք յառաջեալ, գիտութիւնք աճեալ,  
ըզշնորհս որ ձըրեալ<sup>61</sup>:

Այդ հարցը նա շոշափում է նույնիսկ ոչ մտերիմ մարդկանց հասցեագրած նամակներում: Օրինակ՝ գրանցից մեկում, բանավիճելով մարդուն հասանելի գիտելիքների մասին, նա կարևոր համարում է ոչ այնքան գիտելիքների կուտակումը, որքան դրանք ժողովրդի շահերին ծառայեցնելը. «...զի զայրաթիմն շատագովութիւն հայոց ի մէջ բերել փութասցես, զայքան զոր զու ծրարեալ ունիս ստացեալ, լինէր թե զպրատուն դասատում իմն բանաւոր բանն ընթանայր յառաջ արդեամբք՝ երանի էր»<sup>62</sup>: Այստեղից միանգամայն հասկանալի է, թե ինչո՞ւ պետք է նա այդքան խոր ցավով խոսեր Կ. Պոլսի հայկական գպրոցների «խափանման» մասին.

Մեզ ոչ մէդրէսէք պիտոյք՝  
Քանզի մերս որ խափանեցան,  
Ցաւ է մեզ զայլոց դիտել՝  
Անզլուի ազդ մեր և անիշխան<sup>63</sup>:

61 «Հանդէս ամսօրեայ», 1933, էջ 591:

62 «Օրագրութիւն», հավելված, «Թուղթեր», էջ 510:

63 «Ստամպօլոյ պատմութիւն», Վիեննա, 1913, էջ 114:

Հենց լուսավորության և գրականության տարածելու նպատակով է, որ Քյոմուրճյանը 1676 թվականին հիմնադրել է մի տպարան, որը Արգար Թոփաթյու տպարանից հետո Կ. Պոլսում երկրորդն էր:

Իր հիմնադրած տպարանում նա փորձի համար հրատարակել է երկու փոքրիկ գրքույղ, մեկն իր սեփական շափածո աշխատությունը<sup>64</sup>, մյուսը՝ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» քերթվածի մի կտորը<sup>65</sup>:

Սակայն Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը երկար չի տևել: Ակինյանի կարծիքով այն ընդհատվել է համաշխատակից թագեսու երեց Համազասպյանի շուրջը հյուսվածքանարկությունների պատճառով<sup>66</sup>, իսկ նշանյանը ենթադրում է, որ տպարանը փակել է հովանավոր և մեկնաս Ապրո Զելեպին, զուտ ֆինանսական նկատառումներով<sup>67</sup>: Երկու կարծիքներն էլ հեռու չեն ճշմարտությունից և լրացնում են միմյանց: Ապրո Զելեպուն հղած մի ուղերձում Քյոմուրճյանն ինքը խոսում է այդ մասին, շեշտելով, որ տպագրական գործը և' անշահավետ է, և' «երկյուղալի».

64 Գիրքը կոչվել է «Գովասանութիւն յարմարեալ ի սուբր տնօրինականացն Քրիստոսի» (ըստ Ն. Ակինյանի), կամ «Գովարանութիւն տնօրինական տեղաց Յերուսաղեմ» (ըստ Նշանյանի): Տպագրված է 1678 թվականին: Այն մեր ձեռքի տակ չի եղել:

65 Գիրքը կոչվում է՝ «Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդոյ գրոցն Տեառն Ներսեսի Կլայեցոյ, տնօրինեալ աստանօր իմն ի տպագրութիւն շնորհօք Տեառն, որ իր ծննդենէն Քրիստոսի ՈՒԾ և է, և ի հայոց ՈՒծի և Զ Բոււական գոլ»:

66 Ակինյանը գրում է, թե տպարանի գործում Քյոմուրճյանին աշխատակցել է Թագեսու երեց Համազասպյանը, որ մինչ այդ, 1669 թվականից նույն գործով է դրազված եղել Մյունիսենոմ, Ռուկանի հետ: Վերջինիս հետ ընդհարվելով՝ եկել է Կ. Պոլիսի միացել Քյոմուրճյանին: Վախենալով Կ. Պոլսի տպարանի մրցակցությունից, Մյունիսենի տպարանատերը հրատարակել է Ռուկանի կտակը, որով բացահայտել է Թագեսու կատարած մի շաբք հանցանքերը: Պատասխանատվությունից խուսափելով, Թագեսուը հեռացել է Կ. Պոլսից: Ակինյանը ենթադրում է, որ հենց դա ել եղել է Քյոմուրճյանի տպարանի փակման պատճառը: (Տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1932, № 7—9, էջ 532):

67 Հմմտ Մ. Նշանյանի հրատարակած «Թագրութեան» ներածությունը, էջ Սէ:

Զայդ հանի ի մտացդ, ո'վ գերունակ,  
 Զի չէ պատեհ՝ այլ գործ պիտակ,  
 Ու լինել քեզ այդ ընդունակ,  
 Զի չէ պտուղ այդ բերունակ<sup>68</sup>։  
 Մի՛ մի՛ առնել զգործն փանաքի,  
 Զի է՛ մախիծ՝ և երկիւղալի<sup>69</sup>։

Զնայած շատ կարճ է եղել Քյոմուրճյանի հիմնած տպարանի կյանքը և հրատարակած գրքույկներն էլ, Գրիգոր Դպրի վկայությամբ, եղել են «նուազ եւ նիշար»<sup>70</sup>, բայց նրա պատրաստած տառերի մայրերը դարավերջին օգատագործվել են նոր տպարանի համար, այնպես որ XVIII դարում Կ. Պոլսում ծաղկած տպագրության նախահայրը, ամենայն իրավունքով, Քյոմուրճյանը պիտի համարվի<sup>71</sup>։

Քյոմուրճյանն այնքան միամիտ և անփորձ չէր, որ մտածեր, թե սոսկ պայքարելով աղքային եկեղեցու միասնականության, լեզվի ու կրոնի պահպանման և լուսավորության համար, հնարավոր է հայ ժողովրդին փրկել բռնի ձուլումից ու վերջնական կորստից։ Դրա համար էլ, այս բոլորին զուգահեռ, նա փրկության այլ ճանապարհներ է որոնում։

Հայերի թշվառության պատճառը համարելով ինքնուրույն պետականության բացակայությունը, Քյոմուրճյանն իր ողջ կյանքում աղքային ազատագրություն է երազել։ Դրանով է բացատրվում նաև նրա մեծ ուշադրությունը թուրքական տիրապետության տակ ապրող մյուս ժողովուրդների ազատագրական ձգումների նկատմամբ։ «Պատմութիւն համառօտ

68 «Օրագրութիւն», Հավելված, էջ 562։

69 Նույն տեղում, էջ 563։

70 Քյոմուրճյանի հրատարակած գրքույկների և հիմնադրած տպարանի մասին այս տեղեկությունները հաղորդել է Գրիգոր Դպիր Մարզվանեցին, 1706 թվականին Կ. Պոլսում տպագրած «Յասմավուրքի» հիշատակարանում, որ նա ասում է, որ Երևմիան «բազում ջանս և աշխատանս կրեցեալ էր վասն գործարանիս եւ յառաջ ածեալ»։ Քյոմուրճյանի տպարանի տառերի մայրերը հենց սրա տպարանում են մնացել։

71 Հմմտ. ԱՅ, Հայկական տպագրություն, հ. I, էջ 378։

ԴԺ աւարտոյ օսմանցոց թագաւորացն...» գրքում, օրինակ, նա շի բավարարվում միայն թուրքահպատակ ժողովուրդների ծանր վիճակը նկարագրելով: Միաժամանակ մեծ ուշադրություն է դարձնում այդ ժողովուրդների ապստամբությունների, և նույնիսկ, փոքր ընդլզումների վրա: Նա նկարագրում է իդմիր Օղլու զեկավարությամբ, սուլթան Մուրագի օրոք (1375) տեղի ունեցած լազերի ապստամբությունը, որը, սակայն, ձնշվել է արյամբ ու կոտորածներով: Պատմում է նաև նույն ժամանակ տեղի ունեցած Հրեական ապստամբության դաժան ձնշումը նույն բռնակալի կողմից:

Այսպիսի փաստերի նկարագրության մեջ առանձնապես վառ են երեսում Քյոմուրճյանի ազատագրական ձգտումները: Հենց այդ ձգտումներն իրականացնելու նպատակով էլ նա զառնում է Հակոբ Զուղայեցու կողմնակիցն ու գործակիցը ոչ միայն միասնական կաթողիկոսությունը վերականգնելու հարցում, որն ինքնին կապվում էր Քյոմուրճյանի ընդհանուր հայացքների հետ, այլև այն քայլերում, որ Զուղայեցին կատարում էր իր ազգային-ազատագրական ծրագիրը իրագործելու ուղղությամբ:

Քյոմուրճյանը փաստորեն ակտիվ մասնակցություն է ունենում Զուղայեցու գործունեությանը, համակրանքով վերաբերվում նրա ծրագրերին<sup>71</sup>: Որ նա էլ Զուղայեցու նման հույս է ունեցել եվրոպական երկրների հետ մղվող կոխվներում թուլացած թուրքիայի պարտության և հենց նույն այդ եվրոպական երկրների՝ հատկապես Ֆրանսիայի, կեհաստանի և Հռոմի օգ-

71 Հարկ է նշել սակայն, որ Քյոմուրճյանը լավ է զգացել եղիազար Այնթափցու և Մարտիրոս Ղրիմեցու հակամարտության վնասակարությունը ազատագրական շարժման տեսակետից: Համակրանքով վերաբերվելով Զուղայեցու ծրագրերին, նա համենայն զեպս աշխատել է հաշտության եզրեր գտնել նրա և Այնթափցու միջև: Գրանով պետք է բացատրել, որ 1679 թվականին, երբ Զուղայեցին գալիս է Կ. Պոլիս, այնտեղից Հռոմ մեկնելու և Պապին հպատակություն հայտնելու նպատակով (նա հույս ուներ դրանով շահել արեւմբայն տերությունների համակրանքն ու օգնությունը), Քյոմուրճյանը նրան խորհուրդ է տալիս Հռոմ մեկնելուց առաջ, հանդիպում ունենալ Այնթափցու հետ: (Այս մասին մանրամասն տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, էջ 218):

նության վրա, երևում է նրա ներբողներից և ուղերձներից: Այսպես, կեհաստանի թագավոր Յան Սորեսկուն ուղղված «Առ թագավորն լեհաց» ուղերձի մեջ Քյոմուրճյանը ու միայն գովաբանում է նրան այն բանի համար, որ լեհաց թագավորն իր երկրում ապաստան է տվել Թուրքիայից փախած հայերին<sup>72</sup>, որ նա կովել ու հաղթել է քրիստոնեության շատ թշնամիների<sup>73</sup>, այլև պարզորոշ արտահայտելով իր ձգուուները, երազում է ապրել եթե ոչ ազատ, ապա զոնե այդ լեհ թագավորի նման հզոր քրիստոնյա թագավորի հովանու ներքո.

Երանի՝ իցէր թէ էաք համայն  
Ընդ հովանեաւ մհծի քոյոյ տէրութեան,  
Ի փառս ։ ի պատիւ քրիստոնէութեան  
Պարիլ եւ ցնծալ ի լոյսդ՝ թագաւոր<sup>74</sup>:

Երավացի է Աշ. Հովհաննիսյանը, որն այս փաստերից եղակացնում է, թե «...Զենք սխալվի, եթե պնդենք, որ նշանավոր գրողը իր կյանքի այդ ժամանակաշրջանում դիմուղղվում էր գեղի Հակոբ Զուղայեցու ձանապարհը»<sup>75</sup>: Ճիշտ է, իհարկե, խաբուսիկ է եղել այդ ճանապարհը, սակայն կարեորը տվյալ դեպքում դա չէ, այլ այն, որ նրանք պայքարել, ելք են որոնել հայ ժողովրդին ստրկական վիճակից ազատագրելու համար:

Զուղայեցու համախոհների գործն ընդհատվում է իր՝ Զուղայեցու մահվամբ (1680). կիսատ են մնում բոլոր ձեռնար-

72 «Անյագ գաղանէն նախնիքն այնց և մեր,  
Չուեալ հասեալ էին տէրութիւն ձեր,  
Դառնաշունչ ժանեաց բոծորացըն մեր,  
Ոգեպահելով առ ձեօք, թագաւոր» (տե՛ս «Օրագրութիւն» հալիված, էջ 534):

73 «Ապստամբօղաց թշնամեաց յաղթօղ,  
Սրբոց՝ և իմաստնոց ընդունօղ՝ ընտրօղ  
Եղեռնազործից սաստօղ և տանջօղ,  
Դատօղ և սպանօղ, արդար թագաւոր» (նույն տեղում, էջ 528):

74 «Օրագրութիւն», հավելված, էջ 535:

75 Աշոտ Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 222:

կումներն ու ծրագրերը։ Կ. Պոլսում այդ գործի «ուղեկիցները ցաք ու ցրիվ են լինում, չհասնելով ոչ մի արդյունքի»<sup>76</sup>։

Քյոմուրճյանը, որը որոշակի հույսեր է կապած եղել այդ ծրագրերի հետ, հուսահատվում է և Հակոբ Զուղայիցու մահվանը նվիրված իր հայտնի գանձողը ու դառնությամբ սգում հայ ժողովրդի վիճակը, դարձյալ հույսը կապելով հին խարսխի՝ աստծու հետ։

Բարի աղօթիւք Սուրբ-Հայրապետիս,

Տէր այց արա տառապեալ ազգիս<sup>77</sup>, — զրում է նա:

Այս ողբից ակնհայտ կերպով երևում է, որ աղատագրական ծրագրերի փլուզումը մեծ տրամություն է սպառձառել Քյոմուրճյանին։

Մյուս կողմից նա ցավով նկատել է, որ իր գրական երկերը մեծ ընդունելություն չեն գտնում հասարակության մեջ։ Այսպիսս, ժամանակակիցները չեն հասկացել, թե «Ստամպոլոյ պատմութեան» մեջ նա ինչ նպատակով է մանրամասն նկարագրել Կ. Պոլսի շրջապատը, պալատները, դարպասները, դրանց շուրջն ապրողների զբաղմունքն ու վիճակը։ Չեն հասկացել, որ այդ միջոցով նա կամեցել է շարադրել Կ. Պոլսի հայ դաղութի պատմությունը և քարոզել իր լուսավորական հայացքները։ Կ. Պոլսի խավարամիտ հասարակությունը ծաղրել է նրան։

Տեսողք զայս՝ զիս ծաղը առնեն՝

Թէ ընդէ՞ր կաս ի յաշխատման,

Զծանօթս մեր մեզ պատմես՝

Տիմարից լունիմք զպատասխան<sup>78</sup>։

Քյոմուրճյանն այդ մարդկանց տիմար է անվանում։ Գրքի վերջում նա զայրացած ասում է, թե աղահության ախտով

76 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, էջ 223։

77 «Հանդէս ամսօրեալ», 1933, էջ 590։

78 Երեմիա Զելենի Քյոմուրիան, Ստամպոլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, առաջին գիրք, էջ 5։

տարված այդ խավաբամոլների պատճառով է, որ Հայերը  
զրկվել են իրավունքներից և ընկել ծանր կացության մեջ.

Սընափառ սօմուն գըռան<sup>79</sup>  
Եւ մոլիալ յախտ աղահութեան.  
Նարդենիս բաբունք ոմանք՝  
Ի տեսնուն զայս քամահեալ կան:

Շատ լուայ վասն իմ ասել՝  
Եթէ բան ու գործ չունի այն.  
Կեանքն եղեւ նանիր և ընդ վայր՝  
'Ի աշխատի՞ւ ոչ ինչ շահի այն:  
• • • • • • • • • • • •  
Զայս վիշտ կրեմք ի սուտ եղբարց  
Վասն որոյ մնացեալ անիշխան<sup>80</sup>:

Սրտի կսկիծով գրված այս տողերը ցուց են տալիս, թե  
ինչպիսի մոայլ իրականության մեջ է ապրել ու գործել Քյո-  
մուրճյանը, թե ինչպես նրա առաջադիմական լուսավորական  
գործունեությունը ոչ միայն աջակցություն չի գտել իր շրջա-  
պատում, այլև արհամարհվել է:

Այս բոլորին գումարվել է նաև նորընտիր կաթողիկոս  
Եղիազար Այնթափցու բնավ էլ ոչ բարյացակամ վերաբերմուն-  
քը նրա նկատմամբ: 1682 թվականին, երբ Եղիազարը գալիս է  
Կ. Պոլիս, Քյոմուրճյանը փորձում է տեսակցել նրա հետ, բայց  
քինախնդիր կաթողիկոսը չի ընդունում նրան: Կենսագիրները  
ոչինչ չեն ասում Քյոմուրճյանի այցելության նպատակի մա-  
սին, բայց նկատի ունենալով նրա ողջ գործունեությունը,  
դժվար չէ ենթադրել, որ նա կաթողիկոսին ցանկացել է այցե-  
լել ոչ միայն երբեմնի հակառակորդին իր հպատակությունը  
հավաստելու նպատակով, այլև կրկին խոսելու իրեն հետաքըր-  
քըրող հարցերի՝ հոգեորականության ապականված վարքի,

79 Ակնարկում է նրանց, ովքեր իրենց ուժեղ լինելն են ցանկանում  
հասկացնել:

80 «Ստամպօլոյ պատմութիւն», էջ 119:

լուսավորության ու կրթության անհրաժեշտության և ազատագրական պայքարի հեռանկարների մասին:

Այնուհետև Քյոմուրճյանին մենք տեսնում ենք Արարատյան դաշտում: Նա շրջում է վանքից վանք, գնում է Մուլնի, Կարբի գյուղի մոտ գտնվող կուսանոցը, Հովհաննավանք, որտեղ ծանոթանում է «բանասէր և գրասէր» Զաքարիա Սարկավագի հետ: Այսպես նա մեկ տարի շրջագայում է Հայաստանի տարբեր գավառներում, ծանոթանում ճարտարապետական կոթողներին, տեսնում Անի քաղաքն ու գավառը, Կարսը, Կարինը, պարսից սահմանի վրա գտնվող հայկական գավառները: Իսկ վերադարձի ճանապարհին այցելում է Ղրիմ ու Պոնտոս:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա տեղի ազգային-եկեղեցական գործերը խստ խանգարված է գտնում, հոգևորականներին՝ ավելի հղվացած, և դրանց մասին Եղիազարին գրում է իր նշանավոր նամակը (1690), որտեղ մերկացնում է Կ. Պոլսի հոգևորականությանը և իր զայրույթը արտահայտում այն բանի համար, որ աշխարհական լինելով՝ ինքը կարծես թե զըրկվում է ճշմարտությունն ասելու իրավունքից. «Ես որ ոչ խընդրեցի երբէք ի ձէնչ, չմարթիցի՝ մ ասել յատենի առ տառապեալ ազգս, թէ ահա սա լոյս և սա խաւար, սա դառն և նա քաղցր, ըստ ժամանակին խանգարման խռովութեան...»<sup>81</sup>:

Նամակից պարզվում է, որ Քյոմուրճյանի քննադատությունը կատաղեցրել է Կ. Պոլսի հոգևորականությանը: Նրան հալածել են և երեսին նետել ծանր խոսքեր՝ «Ո՞՛ կացոյց զքեղ իշխան և գատաւոր ի վերայ մեր»<sup>82</sup>:

Նամակում Քյոմուրճյանը Եղիազարին խնդրում է անձամբ միջամուխ լինել Կ. Պոլսի հոգևորականության սանձահարման գործին: Բայց միաժամանակ զգացվում է, որ նա մեծ հույսեր շի կապել Եղիազարի հետ ու նամակը գրել է իր խիղճը հանգըստացնելու համար:

81 Հ. Թորոսյան, Վարք Միհթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վենետիկ, 1901, էջ 29:

82 Նույն տեղում, էջ 28:

Դրանից հետո, վերջնականապես Հիասթափված ամեն ինչից և վշտացած երկու որդիների վաղաժամ մահով, Քյոմուրձյանը հեռանում է հասարակական ասպարեզից և տարվում գրական աշխատանքով:

Քյոմուրձյանը մեռել է 1695 թվականին, Կ. Պոլսում և այնտեղ էլ թաղված է:

Երեմիա Քյոմուրճյանն իր բազմազբաղ և խռովահույզ կյանքում, այնուամենայնիվ, միշտ ժամանակ է գտել զբաղվելու իր սիրած դործով՝ գրական աշխատանքով:

Քյոմուրճյանի գեղարվեստական և այլ բնույթի ստեղծագործությունները ձեփ տեսակետից հաճախ իրարից սահմանապատված չեն: Նա պատմական, տոմարական, կրոնական և այլ տիպի երկերի մեծ մասը գրել է շափածո և դրանց մեջ որոշ բանաստեղծական հնարքներ է կիրառել, իսկ գեղարվեստական երկերին հաճախ տվել է ընդգծված քաղաքական, պատմա-հասարակական իմաստ: Եվ չնայած դրան, Քյոմուրճյանի երկերը կարելի է խմբավորել ըստ նրանց բովանդակության և ձևական առանձնահատկությունների: Նա գրել է՝ 1. կրոնական, 2. աշխարհագրական-տոմարական, 3. պատմական երկեր, 4. բազմաթիվ ու բազմապիսի բանաստեղծություններ՝ տաղեր, ողբեր, ձռներ, ուղերձներ, 5. նամակներ և 6. օրագրություն:

Բացի այդ, նա հայերենից թուրքերենի է թարգմանել «Նոր կտակարանը», «Հին կտակարանի» որոշ մասեր<sup>1</sup>, Դավթի սաղմոսները<sup>2</sup>, Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը

<sup>1</sup> «Թարգմանութիւն Նոր կտակարանի և մասանց Հին կտակարանի» (տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 1645, էջ 119ա—219ա):

<sup>2</sup> «Սաղմոսք Գաւթի» (տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 1644, էջ 4ա—294ա), Վենետիկի Մխիթարյան ձեռագրատան ձեռագիր № 85 (տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», Հատոր առաջին, յորինեց Հ. Բ. Սարգսեան, Վենետիկ. 1914, էջ 368—370), Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 988 ձեռագիրը (էջ 101ա—104ա և 89ա—99ա), ինչպես նաև Երուսաղեմի ո. Հակոբա վանքի Մատենադարանի ձեռագիր № 33 (տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղմի ո. Յակոբեանց վանքի, հ. Ա, 1948, էջ 10):

և միշտ շարք այլ աղոթքներ, «ի Վարդավառն» և «Կտակ խաչելութեան» քարոզները<sup>3</sup>, «Յամառօտ Յասմառուրբը»<sup>4</sup>, և այլն, ինչպես նաև միջնադարում շատ տարածված «Պատմութիւն Ֆարիզու և Վենայի»<sup>5</sup> և «Պատմութիւն մեծին Ալեքսանդրի»<sup>6</sup> երկերը:

Քյոմուրճյանը թուրքերինի է թարգմանել նաև իր իսկ գրած հայոց պատմությունը<sup>7</sup>: Հետաքրքիր է, որ նա այս թարգմանությունը կատարել է թուրք «գրագիտների» խնդրանքով: Հետաքրքիր ենք ասում, որովհետև օգտվելով առիթից, նա աշխատել է թուրք մատվորականությանը ծանոթացնել հայոց պատմության ամենածաղկուն էպոփիաների հետ (Արշակուն-

<sup>3</sup>Տե՛ս Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 408, էջ 9ա—21բ, 22ա, 28ա և 94ա (տե՛ս Հ. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 859—860):

<sup>4</sup>«Յամառօտ Յասմառուրբ ի լեզու Տաճկաց». գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 1076 ձեռագրում:

<sup>5</sup>Տպագրված է 1871 թվականին: Խակական խորագիրն է «Հեքեայի Յարս վէ Վէնա» կամ «Պատմութիւն Ֆարիզու և Վէնայի», շարադրեալ ի լատին լեզու, և թարգմանեցեալ ի հայկական բարբառ, յումեմնէ, Հոմերական ոճի, և վերսատին թարգմանեցեալ ի Տաճկական բարբառ ոտաւոր ոճի, ի բերեմիա Զելեպոյ ի Թէօմիրճնանց զարմէ, որ և բանաւէր իսկ յորչորչի, առ ի զուարձութիւն ընթերցողաց»:

Ակնարկած հայերեն թարգմանությունը, կատարված է Հովհաննես Տերզեանցու կողմից 1587 թվականին, Մարսելում: Այս գրքի մի օրինակը պահպահվում է Բորոս Աղատյանի արխիվում (տե՛ս ՀՍՍԾ գրական թանգարան, Թ. Աղատյանի գրադարան):

<sup>6</sup>Գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանում, ձեռագիր № 988: Հ. Տաշյանը «Ուսումնասիրութիւն ստոյն Կալխիլենսայ վարուց Աղեքսանդրի» աշխատության մեջ (Վիեննա, 1892) խոսելով գերմանացի գիտնական Ռենդհետի օգտագործած Արիստոտելի նամակի մասին՝ ուղղված Ալեքսանդրին, նշում է, որ նույն գրությունը հայերենից թուրքերենի է թարգմանել Երեմիա Զելեպին, XVII դարի վերջին և ավելացնում է. «Զերցանք այս կարեսը դիտողութեան նկատմամբ ավելի որոշ մանրամասնութիւններ գտնել, բայց եթէ կարելի ըլլա այսպիսի թարգմանութիւն մ' արդեամբք գտնել և համեմատել, կարծենք շատ տեղ կրնա լաւ ծառայութիւն ընել հայ բնագրին աղավաղութիւններն ուղղելու» (էջ 179):

<sup>7</sup>«Պատմութիւն հայոց». չի պահպանվել:

յաց, թագրատունյաց և Կիլիկյան թագավորություններին), ընդգծել Հայաստանի երրեմնի հղորությունը:

Բացի Հայերենից թուրքերեն կատարած թարգմանություններից, Քյոմուրճյանը լատիներենից և հունարենից Հայերին է թարգմանել որոշ երկեր<sup>8</sup>:

Քյոմուրճյանի ստեղծագործության ամենափոքր մասը կազմում են կրոնական երկերը, որոնք հիմնականում գրված են երիտասարդական տարիներին, երբ նա ավելի մոտ էր կանգնած եկեղեցուն: Նրա այդ երկերն են՝ վերը հիշատակված քարոզներն ու «Յամառօտ Յասմատրքը»<sup>9</sup>, ճառեր եկեղեցական ժողովների մասին<sup>10</sup>, կրոնական վիճարանություններ հրեաների ու հուների հավատի գեմ<sup>11</sup>, պատասխաններ Հայոց եկեղեցին անբաստանողներին<sup>12</sup>, Երուսաղեմի սուրբ վայրերի նկարագրությունը<sup>13</sup>, «Պատմութիւն նորոց նահատակացը»<sup>14</sup> և մի շարք տաղեր<sup>15</sup>:

---

8 Ն. Ակինյանը գրում է, որ այս թարգմանություններն իրեն հայտնի չեն, բայց դրանց մասին հիշատակում են Ալիշանը և Սոմալանը: Այդ աշխատությունները մեզ ևս հայտնի չեն:

9 Մրա մեջ մտնում են 175 վարք, որոնք նա հալաքել է զանազան տեղերից:

10 «Ճառեր եկեղեցական սուրբ ժողովներու վերայ». Հիշատակում է Վ. Թորգոմյանը, իր հրատարակած «Ստամպուլոյ պատմութեան» ծանօթագրություններում (էջ 185):

11 «Վիճարանութիւն ընդդէմ Հրէից»: Հիշատակում է Զամշյանը (Գ. գիրք, էջ 723) և Սոմալանը: «Վիճարանութիւն ընդդէմ Յունաց». գտնվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 621 ձեռագրում:

12 «Պատասխանիք ընդդէմ այնոցիկ, որ բամբասէին զեկեղեցին Հայոց» (ձեռագիր օրինակները գտնվում են Երուսաղեմի և Վենետիկի մատենադարաններում) և «Պատասխանի աստուծով և վասն աստուծոյ (առ Սուրբառ վարդապետ), որ ազելեաց զ «իսկ որ ասենն, զոր ասացեալ են ի վերջն Հաւատամքին, ի նուաստ յերեմիայէ). ձեռագիրը գտնվում է Վենետիկի մատենադարանում, № 775, գրված է 1692 թվականին:

13 «Գովարանութիւն տնօրինական տեղաց Յերուսաղեմ»: Հրատարակված է 1677 թվականին, իր իսկ՝ Երեմիայի հիմնած տպարանում: Նկարագրված է, ունի 15 նկար:

14 Գտնվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, ձեռագիր № 509:

15 Տե՛ս Քյոմուրճյանի երկերի մատենագրությունը (սույն աշխատության վերջում):

Քյոմուրճյանը գրել է նաև Հիշատակարաններ սաղմոսարանի և ավետարանի վերջում<sup>16</sup>, որոնք ունեն որոշ կենսադրական, իսկ երեմն նաև պատմական արժեք<sup>17</sup>:

Քյոմուրճյանի կրոնական երկերը, բացառությամբ ճառերի և տաղերի մի մասի, մեր ձեռքի տակ չեն եղել: Իսկ տաղերը, թե՛ իրենց բովանդակությամբ, թե՛ ձևով նորություն չեին: Դրանք բառացիորեն կրկնում են մեր միջնադարյան հոգիոր տաղերի մտքերը, ձևերը, մակդիրները, նույնիսկ նախադասությունները: Տարբերությունը միայն թուրքերեն տողերի առկայությունն է:

Քյոմուրճյանի ստեղծագործության շափականց հետաքրքիր ու արժեքավոր մասը պետք է կազմեին աշխարհագրական-տոմարագիտական աշխատությունները, սրոնցից, դժբախտաբար, պահպանվել է միայն «Տոմարական զիտելիքներ գտնելու համար փրկչական և հայոց թուականը ոտանաւոր շափով» երկը, որը գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանում (№ 1058, էջ 106ա—119բ): Սրա մասին տեղեկություն է տալիս ն. Ակինյանը, նշելով, թե երկի ոճը խիստ խրթնաբան է և «խոսքերը գաղտնի իմաստ ունեն»<sup>18</sup>, այսինքն դրանց տակ, ըստ երեսութին այլաբանություն է թաքնված:

«Համառօտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի» և «Աշխարհագրութիւն» երկերը չեն պահպանվել և գրանց մասին կցկոտուր տեղեկություններ ունենք միայն<sup>19</sup>: Ցավալի է հատկա-

16 «Յիշատակարան Սաղմոսի», 1661: Երբ երեմիան հոր հետ այցելում է Նիկոմեդիայի մոտ գտնվող Ղցլալ գյուղի նորակասուց եկեղեցին, նվիրում է մի սաղմոսարան, որտեղ և գրում է սույն հիշատակարանը: Հրատարակված է երեք անգամ: «Յիշատակարան Աւետարանին Արքահամ Զէլէպւյյ»: Ավետարանը գրված է 1263 թվականին Թորոս գրչի ձեռքով, մանրանկարված զանազան ծաղկողների կողմից: Քյոմուրճյանն այս ավետարանի հիշատակարանը գրել է ստացող Զելեպի Ապրոյի խնդրանքով:

17 Մի «Մաշտոցի» հիշատակարանում, երեմիան գրել է 1660 թ. Պոլսում տեղի ունեցած մեծ Հրդեհի մասին («Ստամպոլոյ պատմութիւն», Վիեննա, 1913, էջ 157—158):

18 «Հանդէս ամսօթեայ», 1932, № 11—12, էջ 559:

19 «Համառօտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի» երկի մասին տեղեկանում ենք գարձյալ ն. Ակինյանից: Վերը հիշատակված աշխատության

պես «Աշխարհագրութեան» կորուստը, քանի որ այն թե՛ Հայաստանի և թե՛ XVII դարի Եվրոպայի մի շաբթ երկրների մասին տեղեկություններ պարունակող, հիբավի մի հիշաբքիրու արժեքավոր աշխատություն պետք է եղած լինի:

Քյումուրեցանի ստեղծագործության մեջ որոշակի արժեք ունեն պատմական աշխատությունները, որոնց մի մասը, ինչպես կտեսնենք, օժաված են նաև գրական-գեղարվեստական արժանիքներով:

Պատմական երկերից ժամանակադրական առումով առաջինը «Պատմութիւն Համառօտ Դճ տարւոյ. օսմանցոց թագաւորացն», որ սուլթան Օսմանէն մինչև այսմ սուլթան Մուհամեդս. Ժթ թագաւորքնան, լաւ ընթերցող պիտի որ զոտանաւորն

634-րդ էջում Ակինչանը նշում է, որ այս երկը գրված է եղել աշխարհիկ ոճով և «ոտանաւոր ձեռվով»՝ հայերն և իտալերեն: Բայց չի հիշատակում ձեռագրի անողը:

«Աշխարհագրութիւն» երկի մասին առաջին անգամ հիշատակում է Մ. Զամշյանը («Պատմութիւն Հայոց», Գ. Հատոր, Վենետիկ, 1784, էջ 123): Մրամասին ավելի հանդամանորեն խոսում է Ալիշանը «Հայապատումի» մեջ Նա ասում է, թե աշխատությունը գրված է եղել Ավստրիայի կայսեր գեսպանի խորհրդավ, իր մեջ պարունակել է հայկական բռլոր վանքերի տեղադրությունը և ավելացնում է, թե այն շատ հիշաբքիր գործ է, «եթէ յալտնուի Վիեննա կամ ուրիշ տեղ» (Պ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 133):

Գ. Մրմրյանը, խոսելով Քյումուրենանի կենսագրության և երկերի մասին, նշում է, թե նա զբել է նաև Պարսկաստանի, Հնդկաստանի և Փոքր Ասիայի աշխարհագրությունը (խոսքն այս նույն երկի մասին է), որից շատ բան են վերցրել Ազունցն ու Ինձիճյանը (Գ. Մբերյան, Ստուերք Հին դեմքերու, 1907, էջ 11): Մ. Մաղաք-Թեոփիլլանցը «Բառպիքք Երեվելի արանց» աշխատության մեջ, համառոտակի կանգ առնելով Քյումուրենյանի հասարակական գործունեության վրա, թվարկում է նրա, իրեն հայտնի, աշխատությունները, դրանց թվում նաև «Աշխարհագրությունը», որի մասին տեղեկությունը վերցրել է Զամշյանից (Մ. Մաղաք-Թեոփիլլանց, Բառպիքք Երեվելի արանց, Ա. Հատոր, Վենետիկ, 1839, էջ 241): Համանման տեղեկություն է տալիս նաև Ն. Ակինչյանը, ավելացնելով, որ աշխատությունից հասել է միայն քարտեզը և առաջարանի մի մասը, իսկ ձեռագրի տեղը հայտնի չէ (Ն. Ակինչյան, հիշատակված աշխատությունը, «Հանդէս ամսօրեայ», 1932, № 11—12, էջ 650):

շափովն կարենայ գտել, որոյ լսօղքն համեղաբար վայելիցին խնդութեամբ բաւեսցի»<sup>20</sup> երկն է:

Սա օսմանյան թագավորության 400 տարվա պատմությունն է, սկսած նրա սկզբնավորման օրից մինչև իր՝ Քյումուրթյանի ապրած ժամանակը, գրված շափածու: Այստեղ հեղինակը թվարկում է օսմանյան թագավորներին՝ նշելով նրանց ժամանակ տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, նկարագրում Թուրքիայի վարած պատերազմները Բյուզանդիայի, Պարսկաստանի, Եգիպտոսի, արաբների, Հունգարիայի, լեհերի, ղազախների (Հարավային ուկրաինացիք են), վալախների, բուլղարների, Ալբանիայի, Գերմանիայի և այլ ժողովուրդների և պետությունների դեմ, մանրամասն նկարագրում է ժամանակի մարտական տեխնիկան, ստեղծում այդ պատերազմների կենդանի, ճշմարտացի պատկերը: Մի հանգամանք, որ նրա երկին տալիս է զգալի ճանաչողական արժեք:

Այս գործի, որպես պատմական աշխատության, արժեքավորումն ու գնահատումը թողնելով պատմաբաններին<sup>21</sup>, ասենք միայն, որ այն բացի ընդհանուր ու հանրահայտ պատմական տեղեկություններից, արժեքավոր նյութ է պարունակում XVI—XVII դարերում Թուրքիայում գոյություն ունեցող պետական կարգի, տիրակալների վարած ներքին ու արտաքին քաղաքականության, Թուրքիայում ապրող ժողովուրդների, այդ թվում հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի

20 Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 2ա—173ր: Այս գործի մի օրինակը կա նաև Երուսաղեմի ու Հակոբա վանքի մատենադարանում, ձեռագիր № 14, «Պատմութիւն օսմանեան թագաւորաց յօրինուած Հաճի խալֆա կոշուած քեաթիպ Զէլէպիէն» խորագրով (տե՛ս Ա. Սուրմելյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի ու Յակոբեանց վանքի, կ., էջ 101):

21 Այս պատմությունը ցայսօր անտիպ է և չի ուսումնասիրված: Նրանից մի փոքր հատված միայն տպագրել է Հ. Անասյանն իր «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» (Երևան, 1957) աշխատության մեջ: Նա տպագրել է Թուրքերի կողմից Բյուզանդիայի դրավմանը վերաբերող հատվածը, վերնագրելով՝ «Երեմիա դպրի Քէօմուրթյան, հառումն Բիւզանդիոնի» (էջ 82—88), վերցնելով Մատենադարանի № 1675 ձեռագրից:

բաղաքական ու սոցիալ-տնտեսական վիճակի և այդ ժողովուրդների ազատագրական ընդլայնմաների փորձերի մասին:

Ինչպես արդեն վերն ասել ենք, այս տիպի փաստերի հավաքումն ու ընդգծումը Քյոմուրձյանին անհրաժեշտ է եղել իր բաղաքական հայացքների՝ հակապետական տրամադրությունների և ազատագրական ձգտումների գրսկորման համար: Քյոմուրձյանն այս պատմությունը շարադրելիս ուշագիր է եղել թուրքիայի ներքին կյանքը բացահայտող փաստերի նկատմամբ: Բավականաշափ արժեքավոր նյութ է տվել թուրքական պետական ապարատի, պալատական երկպառակությունների, թուրք ավագանու ու թուրք ժողովրդի հակամարտությունների և հատկապես XVI—XVII դարերում պարբերաբար կրկնվող զինվորական ապատամբությունների ու դրանց պատճառների մասին:

Նա կարողացել է հասնել այնպիսի եզրահանգումների, որոնք այսօր զարմացնում են իրենց համարձակությամբ, սոցիալական հարաբերությունների բացահայտման խորությամբ: Այսպես՝ նկարագրելով 1592 թվականին թուրքական բանակում ծագած ապստամբությունը, Քյոմուրձյանը միանգամայն ճիշտ է նկատում դրա շարժառիթները: Նա շեշտում է օսմանյան պաշտոնյանների և «զոռքբանների» կատարած շահատակությունները, ավերածություններն ու թալանը, որոնք ի վերջո լցնում են հասարակ դրականների համբերության բաժակը: Նա ճշմարտորեն է նկարագրում նաև ապստամբության պարտությունը՝ ցույց տալով, թե վտանգի պահին ինչպես են միավորվում իշխող գասերը և ներքին հակամարտությունները մոռացած՝ ենում ապստամբած ժողովրդի գեմ:

Առհասարակ Քյոմուրձյանը լավ է նկատել սոցիալական անհավասարությունը և իր բաղաքական կողմնորոշմամբ կանգնած է եղել թուրք ուամիկ ժողովրդի կողմը: Նա, օրինակ, չի վարանում մեջ բերել մի գալապի ժողովրդի գանգատը սուլթանին, որից պարզ է զառնում, թե ինչ անելանելի վիճակի մեջ է եղել թուրք աշխատավորը.

Օճաղ աղայք զոր տիրէին.

Ընդ արքունեացն և նուաճեալ,

Թամմիկք՝ ի շատ հարկուց խոցեալ  
Եվ զսիաւուշն ընդ իւրեանս առեալ,  
Եվ մուծին առ թագաւորն,  
Ասեն վէղիրդ զմեղ վշտացուցեալ,  
Աղայից բանիւք շարժի,  
Եվ առ համայնս անիրաւեալ<sup>22</sup>:

Քյոմուրճյանը սոցիալական անհավասարության փաստեր  
է տեսնում նաև հայ ժողովրդի կյանքում: Նա նկատում է, որ  
օսմանյան տիրապետության ձնշումներից ավելի շատ տուժում  
է հայ աշխատավորությունը, մինչեւ հարուստները շատ հա-  
ճախ փողի ուժով ավելի թեթև են պրծնում: Նկարագրելով  
1537 թվականին Անտոլիայում սովորական Սուլեյմանի կատա-  
րած հայ երեխաների մանկաժողովը, նա շեշտը գնում է հենց  
նշված հանգամանքի վրա.

Ի սոյն ամի սոյն թագաւորս,  
Ըղտօշուրմէնէ<sup>23</sup> արարեալ,  
ՅԱՆԱՊՈՂԻ մարդ ողարկէ  
Զհայոց մանկունսըն ժողովեալ:  
Որպէս արար հայրն իւր Սէլիմ,  
Զնոր իմն աղէտ աշխարհի տալ,  
Թէպէտ մեծատունք շատ ոսկով,  
Զորդիսն հազիւեան զերծացուցեալ,  
Վայ աղքատաց զառն արտասուաց,  
Միամօր մարք աղէխարշեալ,  
Զի ուր հասնի տանջեն զբնակիչս,  
Յողբոց նոցա ոչոք խնայեալ<sup>24</sup>:

Քյոմուրճյանի այս պատմական աշխատությունն աշքի է  
ընկնում մի հետաքրքիր առանձնահատկությամբ. դա որոշ  
հատվածների աղերսակցությունն է գեղարվեստական գրակա-

22 Մատենագարան, ձեռագիր № 1675, էջ 143 ր:

23 Աղավաղված «Դեղիբմինէ» բառն է, որ նշանակում է մանկաժողով:

24 Մատենագարան, ձեռագիր, № 1675, էջ 70 ր:

նության հետ։ Հաճախ մի կողմ թողնելով պատմական երկին անհրաժեշտ փաստերի սեղմ, համառոտ շարադրանքը, Քյուրացյանը խորանում է կենցաղային ու հոգերանական մանրամասների մեջ, նկարագրում թերևս ոչ այնքան անհրաժեշտ մանրութներ, պատմում նովելներ, երբեմն նույնիսկ լեզենդանման զրուցներ։

Այսպես, երբ նա նկարագրում է, թե ինչպես է սովորական Սելիմը գահը խլում իր հարազատ հորից՝ Բայազիդ Առաջինից, և նրան առաջարկում թույն ընդունել, մանրամասն վերարտադրում է նաև երբեմնի գահակալի հոգեկան տվայտանքները։ Կամ նկարագրելով սովորական Սուլեյմանի վարած պատերազմական գործողությունները հունգարների գեմ, Պուտին (Բուգա) քաղաքի պաշարումը և այլն, մեջ է բներում մի իսկական նովել։ Մի թուրք ջրկիր, գետից ջուր վերցնելիս, ջրի մեջ տեսնում է մի ձեռք, որի մատին փայլվիլում է թանկազին մատանի։ Նա հանում է մատանին ու տալիս սովորականի սպասավորներից մեկին, սա էլ այն ցույց է տալիս մի գերի հունգարացու և նրանից իմանում, որ մատանին հունգարական թագավորինն է՝ Գուալինը։ Եղելությունն իմանալով, սովորականը կարգադրում է որոնել ու չորից հանել Գուալին, լողացնել ու զարդարել, ինչպես վայել է թագավորներին։ Երբ հրամանը կատարվում է, սովորականը կանչել է տալիս Գուալի տիկնոջը և զոհված թագավորի մարմինը պատվով հանձնում նրան։ Դին տեղափոխում են բերդը, տիկինը սուրբ է անում (Հեղինակը մանրամասն նկարագրում է նաև այդ սուրբը) և պատշաճ կարգով ամուսնուն թաղելուց հետո, բերդը հանձնում Սուլեյմանի զորքերին<sup>25</sup>։

Այս տիպի պատմությունները, պատմական այս կամ այն անձի բնավորության ու սովորությունների մասին ժողովրդի մեջ տարածված զրուցները, հետաքրքիր, բայց մանրիկ տեղեկությունները, որոնք, թվում է, թե կարենոր չեն պատմական աշխատության մեջ, առատ են Քյումուրձյանի այս գործում։ Եվ դա հասկանալի է, քանի որ Քյումուրձյանը միաժամանակ գրող է և, որպես այդպիսին, չի կարողացել անտարբեր անցնել լամած

25 Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 68ա—69բ։

նման զրուցների կողքով։ Երան հավասարապես հետաքրքրում են և՝ պատմական փաստերը, և՝ պատմական անձնավորության ներաշխարհը, հոգեբանությունը, կենցաղն ու բնավորությունը։ Եվ որովհետեւ նա հաջողությամբ կարողանում է նման զրուցներն ու գեղարվեստական-հոգեբանական զեղուժները ներհյուսել բուն պատմությանը, երկն ստանում է գեղարվեստական երանգ, պատմությունը դառնում է կենդանի և հետաքրքիր։

Երկի գրական արժեքի ահսակետից հետաքրքիր են նաև այն հատվածները, որուել հեղինակն աշխատում է նմանվել մեր պատմիչների ոճին և գրելածեին։ Այսպես, երբ նկարագրում է, թե ինչպես է կենկ-թեմուրը գերում սուլթան Բայազիդին, և վանդակի միջ զնելով ցուցադրում հապատակներին, նա այս երկու պատմական անձանց միջև մի երկախոսություն է ստեղծում, որը հիշեցնում է Շապուհի և Վասակի երկախոսությունը Փավստոս Բուղանդի «Հայոց պատմության» մեջ։

Ինչպես արդեն վերն ասել ենք, օսմանյան թագավորների այս պատմությունը չափածո է գրված, և այստեղ մերթ ընդ մերթ Քյումուրջանի ոգեշունչ, սրտառուշ նկարագրությունները ստեղծում են հետաքրքիր բանաստեղծական հատվածներ։ Պատմելով սուլթան Սուլեյմանի կողմից Գալիխոլին գրավիրումասին, նա խիստ զգացված, բանաստեղծական շնչով է նկարագրում գրավված քաղաքի բնակիչների ողբն ու լացը, հայրենի վայրերից հեռանալու խորսնի թախիծը։

Եկեղեցիք տաճարք թափուրք,  
Զարդուց փառաց ունալնացեալ,  
Եւ յայլաբանըս փոխարկեալ,  
Ի բաղանիս և ի խանս շըրշեալ,  
Ըզբնակութինս լաքեալ թողին,  
Եւ երթալով երթալ լացեալ,  
Ըզծընընդեան և ըսընընդեան,  
Տեղիսն թողեալ՝ օտարացեալ,  
Հեռացան և մեկնեցան,  
Օտարք գերկիրըն վայելեալ,

Հայէին յետո դառնալին,  
Արտասուաթորըք հառաշեալ...<sup>26</sup>

Հասկանալի է, որ Գալիպոլիի բնակիչների վիշտը նկարագրելով, Հեղինակը նկատի է ունեցել իր սեփական՝ հայ ժողովրդի ծանր վիճակը և դա է նրա խոսքին այդքան սրտահույզ երանգ հավորգել: Այսպիսի հատվածները բազմաթիվ են Քյումուրձյանի այս աշխատության մեջ<sup>27</sup>:

Այսպես, ուրեմն, երեմիայ Զելեպի Քյումուրձյանի «Պատմութիւն համառոտ նմա տարւոյ օսմանցոց թագաւորացն...» երկը հետաքրքիր և արժեքավոր մի աշխատություն է, որտեղ կարեոր տեղեկություններ են տրվում XV, XVI և XVII դարերի թուրքիայի մասին, այն հարուստ աղբյուր է XVI—XVII դարերի արևմտահայ գաղութի պատմության համար և միհենույն ժամանակ որոշակի գրական-դեղաբարվեստական արժանիքներ ունի:

1695 թվականին Քյումուրձյանը կրկին անդրադարձնել է այս պատմությանը. և զրել սրա համառոտությունը՝ «Թագաւորութեան օսմանցոց համառոտիւ սպատմութիւն»<sup>28</sup> վերնագրով: Երա առաջարանում նա բացատրում է իր նոր տքնության շարժառիթները: Պարզվում է, որ առաջին աշխատության ընթեր-

26 Մատննադարան, ձեռագիր № 1675, էջ 167ա—167բ:

27 Տե՛ս, օրինակ, սուլթան Սուլեյմանի կազմից եղիպտոսի գրավման ու նրա կատարած թալանի և ավերածությունների պատմութիւնը, էջ 60բ:

28 Պահպանված է Մատննադարանի № 1786 ձեռագրում (էջ 1ա—81բ): Հասկ է Ստեփանոս Դաշտեցու խմբագրությամբ, որի մասին կա զրչի վկայությունը (81բ, էջում): «Այս գեղեցկացուցանողն Դաշտենցի ամենահանճար պարոն Ստեփանոսն է», Դաշտեցին վէլ նշում է, որ «մինչև ցաստ երեմիա Զէլեպուն զրեալ և վճարեալ էր. թեպետև մեք ըստ կարույն մերոյ գեղեցկացուցաք զպարագրութիւնս և ըստ քերթողաբեկան տառից ևս դոյզն ինչ վայել շացուցաք որպէս և կարէք տեսանել, ըստ հեղինակին զիրոք առնուլ».

Այս գործի մի թիրի օրինակը կա նաև երուսաղեմի ո. Հակոբա վանքի մատննադարանում, ձեռագիր № 464, էջ 699. «Պատմութիւն օսմանցոց թագաւորութեան, երեմիա դպիր Քէօմիրճեան» (1699) խորագրով (տե՛ս Մայր ցուցակ Զեռագրաց սրբոց Յակոբեանց, 4-րդ հատոր, կազմեց Ն. Պողարյան, երուսաղեմ, 1956, էջ 192):

ցողները գժգոհել են երկում տեսնելով բազմաթիվ շեղումներ, «վայրախոսություններ»։ Դրա համար էլ նա ասում է, որ այժմ այդ բոլորը շատ համառոտ՝ «կարճ ի կարճոյ» պիտի պատմի, տալով միայն այն, ինչ վերաբերվում է թագավորներին, ցուց պիտի տա, թե դրանցից ով ում որդին է եղել, ում դիմ է կուլել, ինչ քաղաքներ է գրավել, քանի տարի է ապրել, քանի վեղիր է ունեցել և դրանցից ո՞րն է եղել «արդար», որը «խոտորնակ»։

Կատարելով իր խոստումը, Քյոմուրճյանը պատմությունը համառոտել է, աշխատելով դուրս թողնել վիպական մասերը։

Համառոտ պատմության մեջ կարևորն այն է, որ Քյոմուրճյանն այստեղ ավելի խիստ գնահատականներ է ավել օսմանյան բռնակալներին ու նրանց վեպիրներին, ավելի պարզ ու որոշակի է մեկնաբանել սոցիալական երնույթները, ավելի է ընդգծել երկրում եղած սոցիալական անհավասարությունը։ Հենց դրա համար էլ նա, հակառակ իր խոստման, հանել է շատ պատերազմների ու նվաճումների նկարագրություններ և ավելացրել հատվածներ, որոնցում նկարագրում է զորքի ու ժողովրդի ապատամբությունները։

Այս նույն՝ № 1786 ձեռագրի 81թ էջից պետք է սկսված լիներ Քյոմուրճյանի «Անուանք որդոց թագաւորաց օսմանցոց» աշխատությունը, բայց այդ տեղում ձեռագրից 6 էջ պակասում է. այդ պատճառով երկի սկիզբը մեզ չի հասել։ Սակայն դա չի խանգարում տեսնելու, որ այդ աշխատանքը պարզապես մի ուրիշիք է, ուր թվարկվում են օսմանյան թագավորները, նշվում է նրանց ծննդյան, մահվան, զահակալության տարեթվերը։ Յուրաքանչյուր թագավորի անվան կողքին, շատ համառոտ ձեռվ գրված են նրա կատարած կարևոր գործերը, իսկ ներքեւում, առանձին շրջագծերում նրանց որդիների անունները։

Նույն՝ № 1786 ձեռագրի 97ա—98ա էջերում է վետեղված Քյոմուրճյանի «Ատիւ շարադրեալ անուանք թագաւորաց օսմանցոց» աշխատանքը, որը նույն բանն է, ինչ վերը հիշատակվածը, միայն ավելի համառոտ։

1681 թվականին Քյոմուրճյանը գրել է մի աշխատություն՝

«Համառոտ հարցմունք և պատասխանիք» վերնագրով<sup>29</sup>, որը ինչպես նշել ենք, կիսով շափ կրոնական, կիսով շափ պատմական երկ է: Գործը կարևոր նշանակություն ունի Քյոմուրճյանի աշխարհայացքի պարզաբանման համար:

Քյոմուրճյանը գրել և ինքն էլ թուրքերենի է թարգմանել նաև «Հայոց պատմությունը» 1681 թվականից առաջ<sup>30</sup>, որի բնագիրը կորած է: Այս երկի մասին առաջին տեղեկությունը տվել է Մ. Զամշյանը, որն, ըստ երեսվածին, տեսել է աշխատությունը, իսկ մյուս բանասերներն այն հիշատակել են օգտվելով Զամշյանից: Այդ երկի մասին Զամշյանը գրել է. «Թարգմանեաց և ի խնդրոյ գրագիտացն տաճկաց ի լեզու նոցա պատմութիւն Խորենացւոյն բաղուածով ընդ նմին և զհամառոտ տեղեկութիւն ինչ է վերայ Բագրատունեաց և Խորինեանց»<sup>31</sup>: Ուրիշ բան հայտնի չէր: Միայն վերջերս ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գիտ. աշխատող Ա. Տեր-Ղեոնդյանն իր «Երեմիա Զելեպին որպես Մունաջիմ Բաշիի աղբյուրներից մեկը» հոդվածում<sup>32</sup> բանասիրական մանրազնին ուսումնասիրության միջոցով ապացուցեց, որ հայտնի արաբ պատմագիր Մունաջիմ Բաշիի «Զամի աղ-դուվալ» (Տեղերաբական պատմություն) աշխատության մեջ Հայոց պատմությանը վերաբերող հատվածի աղբյուրը Քյոմուրճյանի հիշյալ աշխատությունն է եղել:

Այժմ Քյոմուրճյանի այս աշխատությունը, որպես պատմական բնույթի երկ, ինքնին շատ մեծ արժեք չի կարող ունենալ, որովհետև ինքնուրույն չէ, այլ մի շարք պատմագիրներից (հատկապես Խորենացուց) վերցրած նյութերի համառոտ ժողովածու է: Բայց այն ուշագրավ է մի այլ առումով: Ինչպես

29 Տե՛ս Մատենագարան, № 72 ձեռագիր, էջ 131ա—173ա: Պահպանվել է նաև ն. Զուղայի Սմենագիրկիշ վանքի մատենագարանում, ձեռ. № 15 (տե՛ս Ա. Տեր-Ավետիսյան, Ցուցակ, էջ 491):

30 1861 թվականից առաջ է գրել, որովհետև այդ թվականին գրված «Համառոտ հարցմունք և պատասխանիք» աշխատության վերջում հիշատակում է սրա մասին:

31 Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Գ., Վենետիկ, էջ 723:

32 Տե՛ս ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1960, № 7—8, էջ 143—150:

նկատել է Ա. Տեր-Ղևոնդյանը «Երեմիա Զելեպիի կատարած թարգմանությունը մի կարևոր երեսով է մեր պատմագրության համար»<sup>33</sup>, այն ցուց է տալիս, որ «Մովսես Խորենացու պատմությունը նախքան որևէ եվրոպական լեզվի թարգմանվելը, թարգմանվել է (թեկուղ համառոտ) արեւլան միջավայրում և այն էլ հայի շանքերով»<sup>34</sup>: Ինչպես հայտնի է Խորենացու թարգմանությունը եվրոպական լեզուներով առաջին անգամ կատարվել է XVIII դարում<sup>35</sup> և հետեւապես «Երեմիա Զելեպիի այս թարգմանությունը, որ կատարվել է XVII դարի երկրորդ կեսում, հայոց պատմությունը հարեւան ժողովուրդներին ծանոթացնելու մի հետաքրքիր փորձ պետք է համարել»<sup>36</sup>:

\* \* \*

Պատմական բովանդակություն ունեցող երկերից մեր ձեռք տակ եղել է նաև Քյոմուրճյանի «Ստամպօլոյ պատմութիւնը»<sup>37</sup>, որն իսկական իմաստով պատմություն չէ, այլ XVII դարի Կ. Պոլսի, Համարյա թե, գեղարվեստական նկարագրությունը և, որպես այդպիսին, առաջիններից մեկը<sup>38</sup>:

Երկն սկսվում է մի ուղերձով, որով հեղինակը զիմում է մի

33 «Տեղեկագիր», 1960, № 7—8, էջ 149:

34 Նույն տեղում:

35 Առաջինը լատիներեն թարգմանությունն է, որը լույս է տեսել 1733 թվականին, Ստոկհոլմում:

36 «Տեղեկագիր», 1960, № 7—8, էջ 149:

37 Երեմիա Զելեպի Քէօմիւնեան, Ստամպօլոյ պատմութիւն: Հրատարակեց և ծանոթագրեց տոքթ. Վահրամ Թորգոմյան ի թշշկական համալսարանների վեհենա, Հ. Ա., 1913, Հ. Բ., 1932, Հ. Գ., 1939: Մատենադարանում պահպանվել են որա երկու ձեռագիր օրինակները № 1345, ժամանակ՝ 1697, տեղ՝ Սորբիանապոլիս, էջ 320ր—353ա և № 1675, ժամանակ՝ 1732, տեղ՝ Գալիպոլի, էջ 183ա—271բ: Ինքնազիրը պահպանվում է Երևանական պատմության մատենադարանում № 1030, էջ 1—40: Այս երկը 1952 թվականին թուրքերին է թարգմանել և ծանոթագրել Հրանտ Անդրեասյանը, իսկ Ստամբուլի համալսարանի գրական ֆակուլտետը հրատարակել է այն (Երեմյա Չelebi Կöմürcüan, İstanbul Parıhi, XVII ասիրda İstanbul), 1952, Ստամբուլ:

38 Թորգոմյանն իր ծանոթագրությունների մեջ տալիս է Կ. Պոլիսը նկարագրուղների անունները, որոնց մեջ Քյոմուրճյանը շորորդն է:

ոմն Վարդան վարդապետի<sup>39</sup>, և նրան ողջունելուց ու մեծարելուց հետո, Հայոնում, թե իրենք մի շրջագայություն պիտի կատարեն կ. Պոլսում: Դա գրական մի հնարանք է, որով Քյումուրձյանն ավելի հետաքրքիր և իրապատում է դարձնում իր նկարագրությունները: Եվ իսկապես, ընթերցողն այն տպավորությունն է ստանում, թե մի սրամիտ ու խելոք ուղեկից իրեն տանում է կ. Պոլսի արժանահիշատակ վայրերը, դրանց հետ կապված զանազան պատմություններ է անում և իր կարծիքը Հայանում այդ բոլորի մասին: Քյումուրձյանը նկարագրում է ոչ թե քաղաքի ներսը, այլ կ. Պոլսի դարբասները «գոները», թե ցամաքի, թե ծովի կողմից: Նկարագրում է այդ «գոների» մոտ եղած պալատները, շենքերը, շուկաները, պարտեզները, ինչպես նաև քաղաքի պարիսպներից դուրս տարածվող քաղաքամերձ շրջանները:

Առաջին Հայացքից թվում է, թե այդ նկարագրություններն այսօր ոչ մի պատմական նշանակություն չեն կարող ունենալ, բայց երբ խորամուխ ենք լինում երկի բովանդակության մեջ, տեսնում ենք, թե որքան նյութ է տալիս այն XVII դարի ոչ միայն կ. Պոլսի, այլև առհասարակ Թուրքիայի պատմության համար:

Այսպես, խոսելով քաղաքի պարիսպների մոտ գտնվող նավամատուցների մասին, հեղինակը միաժամանակ պատմում է, թե այդ ժամանակի Թուրքիան ում հետ և ինչպիսի առևտրական հարաբերություններ է ունեցել, որտեղից ինչ ներմուծել և որպ ինչ արտահանել, ինչ երկրների նավեր են մուտք գործել կ. Պոլիս, որ երկրներն են Հյուպատոսություններ ունեցել քաղաքում և այլն: Անդրադառնալով քաղաքի պարսպի երկարությամբ շարված զանազան խանութիւններին ու արհեստանոցներին, մանրամասն պատմում է դարդացած արհեստների, դրանց արտադրանքի որակի, ներքին առևտրի, առևտրականների ու արհեստավորների վարք ու բարքի մասին: Նկարագրելով կ. Պոլսի քաղաքամերձ գյուղերը, հեղինակը խոսում է նաև զյուղատնեսության զանազան հայուղերի՝ անասնապահության, բանջարաբուծության, այգեգործության վիճակի մասին:

39 Թորգոմյանը ենթադրում է, թե դա Վարդան Բաղիշեցին է:

Նշելով, թե քաղաքի դոներից ու շուկաներից յուրաքանչյուրի մոտ ովքեր են ապրել (թուրքեր, հույներ, հրեաներ, հայեր, գնչուներ, ալբանացիներ և այլն), հեղինակը հարուստ նյութ է տալիս նաև քաղաքի էթնիկական կազմի մասին:

Իսկ հիշատակելով յուրաքանչյուր դարպասի մոտ զետեղված պետական հիմնարկները, մաքսատները, բանտերը, նավաշինարարները և այլն, ինչպես նաև մանրամասն նկարագրելով արքունական բազմաթիվ պալատների շքեղությունն ու թագավորական խրախնանքները, Քյոմուրճյանը փաստորեն կարեռ տեղեկություններ է հաղորդում Թուրքիայի սոցիալ-քաղաքական կացության մասին:

Հատկապես արժեքավոր են կենցաղագրական տեղեկությունները: Այսպես, մի տեղ նա նկարագրում է Կ. Պոլսի հալբոշաների կյանքն ու կենցաղը:

Արքն ի տունս զմազս զործեն՝  
Եւ կանաչքն ի ծախել շուրջ զան,  
Երես ի բաց՝ ապղապիղծք՝  
Եւ արք բազմացն ի վայրս թուրքացան<sup>40</sup>:

Հետո բնութագրում է այդտեղ ապրող հայ զորհապաններին, նշելով որ նրանք «բարձր կանչող են» և հայհոյող:

Խոսելով հույն գնչուների մասին, ասում է, թե նրանց կանայք քաղաքի գուսաններն էին և «ցանկաշատ» երգեր էին երգում տներում ու գինետներում, պարում էին և զվարճացնում մարդկանց: Նա նույնիսկ մի հատված է մեջ բերում նրանց երգերից:

Պարսպի մոտերքում գտնվող պալատները նկարագրելիս, Քյոմուրճյանը միաժամանակ պատմում է, թե ինչպես են զվարճացել սուլթանները՝ ծովի վրա զբոսնելիս, հարեմում, որսի և տոնախմբությունների ժամանակ:

Ահա այս բոլորը միասին ստեղծում են XVII դարի Կ. Պոլսի բնակիչների կենցաղի, վարք ու բարքի, ապրելակերպի, մի

40 «Ստամպօլոյ պատմութիւն», 4. Ա, էջ 45:

խոսքով՝ ներքին կյանքի մանրամասն, գունագեղ և ճշմարտացի պատկերը, մի բան, որը երկին տալիս է թե՛ պատմական, թե՛ հանաշողական զգալի արժեք:

Այս բոլորից բացի, «Ստամպօլոյ պատմութեան» մեջ հետաքրքիր են երկու ուրիշ հանգամանք եւս:

Դրանցից առաջինն այն է, որ նկարագրությունների մեջ հեղինակը հատկապես ուշադիր է հայերի վիճակի նկատմամբ. նա միշտ նշում է, թե իր նկարագրած վայրերից որոնցում են հայեր ապրել, ինչով են զրադվել, որտեղ են եկեղեցիներ ունեցել, ովք է քանդել կամ այրել այս կամ այն հայկական եկեղեցին, ավելի շատ որ վեղիրն է հայերին հալածել և այն և այլն:

Եվ հենց այս մասերում է, որ նա քննազատում է հայ հոգեվորականներին, ցուց տալիս նրանց այլասերումը հարրեցողությունը, խարերայությունը, ինչպես նաև հայ հարուստների հակահայրենասիրական դործունեությունը:

Այս փաստերը շարադրելիս Քյոմուրձյանը դարձյալ առիթը բաց չի թողնում ընդգծելու, որ Թուրքիայում հայերը միշտ եղել են հալածված վիճակում, որ շատերն այդ պատճառով հավատափոխ են դարձել<sup>41</sup>, կամ կարոտը սրտներում մեռել օտարության-պանդխտության մեջ, որ նրանք զորիկ են եղել դպրոցներ ունենալու իրավունքից և այլն:

Երբ ի մի ենք հավաքում երկի տարբեր հատվածներում ցրված նման փաստերը, ապա ստացվում է արևմտահայ գաղութի պատմության համար շափականց հետաքրքիր ու արժեքավոր մի նյութ:

Երկրորդ հանգամանքը Թուրքիայում գոյություն ունեցող քաղաքական ու սոցիալական երևույթների և հարաբերությունների ճշմարտացի ցուցադրումն է, որի մեջ պարզ երևում է հեղինակի ատելությունն օսմանյան տիրակալների հանգեպ:

Այսպես՝ նկարագրելով կիդրոս գյուղի մոտ գտնվող արքունի որսատեղին, հեղինակը պատկերում է նաև այն աղքատնե-

41 Տալով, օրինակ, Սարբեառ գյուղի անունը, հեղինակն ավելացնում է. «Մի՛ հիշեր, որ սիրտս է զողման» (էջ 90): Թորգոմյանն այս տողը ծանօթագրելիս ասում է, որ այդ գյուղը մի ժամանակ հայկական է եղել, բայց հետո բնակիչներին հավատափոխ են դարձել:

ըի վիճակը, որոնք վարձվում էին որսք գեղի որսորդներն ու շները քշելու համար.

Եւ ի հիւսիսով ընդ ձմեռն՝  
Առնէ յորս մեծ ի վայրս արքայն:  
Ի չորս կողմանց ժ աւուրբք՝  
Ընդ վայրսն մարդիք շուրջ առան,  
Բըրօք սուսերօք վարեն՝  
Զէրէս և զանասունս համայն,  
Ի մէջ առեալ և խաղայ՝  
Վեր ի վայր ձիովն իւր արքայն,  
Դիպակազգեստ շներօքն՝  
Որս առնել զէրէս և զաւաշան:  
Զգիշեր և զցերեկ մնացեալ՝  
Մարդիկքն որ անդ են հաւաքման,  
Խւրեանց ստեղծօղին յայտնի՝  
Թէ զինչ վիշտ ի ցրտոյն կըրման:  
Կըզկեալ, կըծկեալ, կոճղ անկեալ՝  
Ի սառնէն որք չոր փայտ դարձան,  
Ի վերայ քայլէր դիպէր՝  
Թագաւորին անփոյթ արշաւման:  
Ասեն ի ցրտոյն սառեալք՝  
Անձարակ մնային աստ մեռան...<sup>42</sup>

Ինչպես տեսնում ենք, մի կողմից թագավորի որսի շքեղության ու փարթամության, իսկ մյուս կողմից խեղճ ու թշվառ մարդկանց ցրտահարության ու տանջանքների այս հակագրությունը լավ է ցուց տալիս սոցիալական վանաղան աստիճանների վրա գոնվող մարդկանց տարբերությունը:

Ճիշտ նույնպիսի եղանակով նա պատկերել է նաև ստրուկների վաճառքը, թշվառ գերիների սարսափելի վիճակը:

Այս տիպի փաստերն այնքան բնութագրական են եղե, թուրքական տիրապետության համար, որ Քյոմուրճյանը մի

42 «Ստամպոլոյ պատմութիւն», Հ. Ա., էջ 65:

ամբողջ գլուխ է հատկացրել դրանց՝ համարձակորեն վերնագրելով «Բոնութիւն պօստանձի պաշուն ի ծով»։ Այս գլխում նա մանրամասն նկարագրում է մի պետական աստիճանավորի կատարած անիրավությունները՝ թալանը, կաշառակերությունը, զարհուրելի կտտանքները, որոնց ենթարկվել են թե՛ այլազգիները և թե՛ թուրք ժողովուրդը, անկախ սոցիալական վիճակից<sup>43</sup>; իսկ վերջում որպես եղրակացություն ասում է.

Տէրն փրկէ խիստ զալըմէ՝  
Սորա դանն, տուգանն և զընտան...<sup>44</sup>

«Ստամպօլոյ պատմութեան» մեջ նման հատվածները ընթերցողին զարմացնում են իրենց համարձակությամբ, անողոք մերկացումներով, ժամանակի իրականության սուր քննադատությամբ և խոսում Քյոմուրճյանի հումանիզմի մասին։

Ժամանակի կյանքի ճշմարտացի արտացոլման շնորհիվ Քյոմուրճյանի «Ստամպօլոյ պատմութիւնը» դառնում է ճանաչողական տեսակետից արժեքավոր մի երկ և մի տեսակ լրացնում է օսմանյան թագավորների պատմությունը։

Սակայն «Ստամպօլոյ պատմութիւնը» հետաքրքիր և ուշագրավ է նաև որպես ուրույն տիպի գրական երկ։

Հարցը միայն այն չէ, թե այս պատմությունն էլ, ինչպես «Պատմութիւն համառոտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւօ-

43 Օրինակ ասում է՝

Գընտնուն զմեծամեծ կանայ՝  
Ի պարտէզոն նստեալսն ի զքսան,  
Ջգոտիս, զգինտո և զէպրէնձան՝  
Փրկելոյ զանձինս պիտի տան։

Կամ

Յոնք ուխտատեզի դիպման՝  
Նախ չերթալ և կաշառ շըտան,  
Երբ զթաթար անդ հասանի՝  
Պրծին որք զշատ փողն դէմ տան։

(«Ստամպօլոյ պատմութիւն», Հ. Ա, էջ 107)։

44 Նույն տեղում, էջ 109։

բացն...» երկը, շափածո է գրված, այլև այն, որ հեղինակը  
այստեղ ևս օգտագործել է իր իմացած ժողովրդական զրուց-  
ները, լեզենգները, նովելները, վիպական պատմությունները,  
իսկ իրական փաստերը նկարագրել ոչ թե շոր ու ցամաք, այլ  
բանաստեղծական ավլունով ու հնարանքներով:

Այսպես, հիշատակելով Կ. Պոլսի ձիարշավարանը, Քյո-  
մուրճյանը չի բավարարվում միայն այդքանով, այլև բանաս-  
տեղծորեն նկարագրում է նաև հեծյալների մրցությունը.

Կամ զերիվարս աստ փորձել՝

Ջքաջութիւնս ցուցանել ջանան,

Գլոխն գըլորին ձիոցն մինչ

Կոխել զմիմիեանս յազթութեան:

Ոմանց թեք և գլուխք բեկին՝

՚ի այլք ստորև ձիոցնն մնան,

Բարձք ջախեալ և աշք պըտխեալ

Վայվայիւ սէյիրէն դառնան<sup>45</sup>

Կամ ահա թե ինչպես է նկարագրում արքայական պալատնե-  
րից մեկի ջրավաղանը.

Մովակ ի միջի հաւուզ

Մինչ նաւակ մի անդ ընթացման.

Ուռամբ պըղպըջեալ հուպապք\*

Ջի ալին զալին էր տոլման:

Ջընարահար ՚ երգողք զուհրապք

Ջեղուին անդ ի պարն բոլորման.

Ահա ցնծայ ծովն ու ծփայ՝

Ընդ զրոյ գոշմամբ յորդորման<sup>46</sup>:

Նույնիսկ օտար երկրների նավերի վրա փողփողացող դրոշ-  
ները չեն վրիպում նրա աշքից և նա դրանք նկարագրում է  
պատկերավոր ձեռվ.

45 «Ստամպօլոյ պատմութիւն», Հ. Ա., էջ 10:

\* Մանր ալիքներ:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 23:

Բնդ ծայրս բարձրացեալ  
 Դըրօշքն խաչանկար պայրախքն կախման  
 Ըստուեալ յոլորման՝ և ի ծալ,  
 ի հողմոցն փառեալ տարբերման<sup>47</sup>:

Եվ առհասարակ, այն բոլոր երկութները, որոնց մեջ նա  
 գեթ մի փոքր գեղեցկություն է տեսնում, ներկայացնում է բա-  
 նաստեղծական պատկերներով: Երկի առանձին հատվածներ  
 հիշեցնում են մեր միջնադարյան տաղերգուներին: Այսպես,  
 օրինակ, երբ երկի վերջում հեղինակը դիմում է Վարդան վար-  
 դապետին ու թվարկում, թե էլ ինչ շեն տեսել քաղաքում, գե-  
 ղեցիկ համեմատություններով ու պատկերներով նկարագրում  
 է նաև ծովի վրայի հողմը, ծովի գեղեցկությունները ցերեկվա և  
 գիշերվա ժամերին.

Զեղե քեզ հնչմունք հողմոցն՝  
 ի հելլէնն որ երկոտասան,  
 Յերեկն յարփոյն ճաճանշից՝  
 Վառելով զծովս ի ծածանման:  
 Երբ զբիբ՝ և ակունք աղվորաց՝  
 Գոլ ծիծաղախիտ ծաւալման,  
 Հըրճուին անձինք դիտողաց՝  
 Ի գահոյսդ յեղանակս ամռան,  
 Զգիշերն ընդ վասիլ լուսնոյն՝  
 Ընդ քաղցրիկ օգոցն հնչման,  
 Ընդ սահիլ ծալիլ ծաւալիլն՝  
 Որ ի ծովս արիֆքն են շըրջման:  
 Երբ լուաք զթոշնոց մրմունջսն՝  
 Զքաղցրածայնսն որ ընդ բուրաստան,  
 Զայն առ ձայն զեղանակելսն՝  
 Զուարթացեալ միշտ սիրտք տըխրական<sup>48</sup>:

47 «Ստամպօլոյ պատմոթիւն», հ. Ա, էջ 73:

48 Նույն տեղում, էջ 113:

Ինչպես տեսնում ենք, այս ոգեշունչ հատվածն ակնհայտ կերպով հիշեցնում է Նարեկացուն: Առջասարակ դժվար չէ նկատել, որ իր այս պատմական երկին գեղեցկություն և բանաստեղծական շունչ տալու նպատակով, Քյոմուրճյանը երբեմն դիմել է մեր միջնադարյան տաղերգուների բանաստեղծական ձեւերին ու հնարանքներին:

Բայց «Ստամոլոյց պատմութեան» մեջ թերեւ ավելի հետաքրքիր են այն լեզենդանման կամ նովելանման հատվածները, որոնք մերթ առընչվում են բուն դեպքերի ու դեմքերի հետ, մերթ մնում որպես զուտ բանաստեղծական գեղումներ:

Այսպես, խոսելով օսմանյան զորքերի կողմից Կ. Պոլսի գրավման մասին, Քյոմուրճյանը հետաքրքիր ձեռվ պատմում է օսմանյան սուլթանների՝ թուրք էյուպ ավանում կապելու սովորության մասին եղած լեզենդը: Կամ այն հատվածում, որտեղ նկարագրում է քաղաքի դռներից մեկի մոտ գտնվող թուրքական գերեզմանոցը և նոճիների պուրակը, ուր թուրք աղախինները կտավ լվանալու սովորություն են ունեցել, մեջ է բերում հալվա պատրաստողների («Հալվաճիների») և այդ աղախինների մասին հյուսված մի գեղեցիկ կենցաղային նովել: Այդ նովելում պատմվում է, թե ինչպես մի անգամ մի թուրք հալվաճի հոգնած նստում է պարսպի վրա, ծառերի շուքի տակ և քնում: Կտավ լվացող աղջիկները գողանում են նրա հալվան: Հալվաճին որոշում է վրեժ լուծել աղախիններից: Նա կրկին հալվա է պատրաստում, բայց դրա մեջ քնարեր գեղ է խառնում: Հետո այդ հալվան վերցնում է, գալիս նստում նույն տեղում և ձևանում քնած: Կտավ լվացող աղախինները կրկին վրա են թափվում և հալվան ուտում: Քիչ անց, նրանք խոր քնում են, իսկ հալվաճին հալվաքում է նրանց կտավը, տանում վաճառում:

Քյոմուրճյանն այս նովելը պատմում է կենդանի հումորով, այնպես որ ընթերցողը գեղագիտական հաճույք է ստանում:

Բացի այս տիպի նովելներից ու լեզենդներից, «Ստամոլոյց պատմութեանը» հատուկ երանգ ու կենդանություն են տալիս նաև մի շարք իրական դեպքերի վիպական կամ երգիծական շնչով կատարված վերապատումները:

Վիպական շնչով են գրված վերը հիշատակված պոստանձի  
պաշու կատարած անիրավությունները և հատկապես մի գեպք,  
կապված Մահտեսի նղիայի հետ: Խոկ հիշատակելով Կ. Պոլսի  
պարսպի վրա եղած կեղտաջրի անցքը, Քյոմուրճյանը մի զա-  
վեշտական պատմություն է անում այն մասին, թե ինչպես քա-  
հանաները խարում են մի վարդապետի: Նրանք վարդապետին  
հավատացնում են, թե այդ անցքից թափվող ջրով սուլթանն է  
լողանում, թե այդ ջուրը ուշիմություն ու խելք տալու դորու-  
թյուն ունի, թե այդ ջրով լողացողը մաքրվում է մեղքերից և  
հարստանում: Վարդապետը հավատում է: Տերտերները մեր-  
կացնում են նրան ու մտցնում կեղտաջրի տակ.

Մերկացնեն անդ զվարդապետն՝  
ի ներքոյ ջրոյն կը դկական,  
Սկսին լուանալ իրիցունք՝  
Գագաթէն մինչեւ յերաստան:  
Վարդապետն ի լուանիլն,  
Օ՛խ, օ՛խ, օ՛խ, ասէ զմաղթանս,  
Դարձո՛յ զցասումն քո ի մէնջ՝  
Իրիցունքն երգեն զշարական:  
Ասէ ընդէր դարձոյ զցասումն՝  
Կու ասէք ո՛վ տեարք պատուական,  
Ասէն լըռէ՛ւ ականջ կալ՝  
Կանգնեսցէ զանկեալդ ի գլորժան:  
• • • • • • • • • • •  
Ասէ՝ բաւ է ո՛վ տիրանք՝  
Մտից ի ծով լիցիմ մաքրական,  
Ասէն՝ չէ՛ չէ՛ վարդապետ՝  
Աղտ ւ աւազդ մնասցէ քո վերան,  
Զի դա է դեղաթափ ախտից՝  
Զմարմնովն քո պարուրական,  
Խոշոր ընդ շապկօքդ մածեալ՝  
Եւ զգեցցիս լիցուք ընթացման:

Աստ կը տըրուածք արծաթ՝ և ոսկոյ՝

Օդ, մատնի և ակն անկեալ կան...<sup>49</sup>

Ինչպես տեսնում ենք, այս իրական դեպքը Քյոմուրձյանը ներկայացրել է կենդանի, երգիծանքով լի երկախոսությունների, սրամիտ ու դիպուկ նկարագրությունների միջոցով, այսպես, որ այն դարձել է հոգեորականների շահամուլությունը մերկացնող գեղեցիկ վիպական պատմություն:

Նման հատվածները բավական շատ են, դրանք «Ստամպօլոյ» պատմութեանը» հատուկ երանդ ու Ցմայք են տալիս և բանաստեղծական ներշնչանքով հորինված մյուս կտորների հատմիասին՝ իր էությամբ պատմական այդ երկը միաժամանակ դարձնում կիսագրական, կիսանոթագրական մի ուրույն ստեղծագործություն:

Մեր մատենագրության մեջ Կոստանդնուպոլսի մասին Քյոմուրձյանից ավելի վաղ (1612) խոսել է Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրութեան» «Նկարագրութիւն Կոստանդնուպոլսոյ»<sup>50</sup> զլբում: Լեհացին այդտեղ գրի է առել իր ճանապարհորդական տպավորությունները և նկարագրել այն ամենը, ինչ Կ. Պոլսում ուշագրավ է համարել: Լեհացու «Ուղեգրութեան» այդ զլբումը ընթերցողին բավական մանրամասն ծանոթացնում է XVII դարի Կ. Պոլսի կառուցվածքի, նշանավոր շինքերի ճարտարապետական ոճի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք կողմերի հետ:

Սակայն Լեհացու «Ուղեգրութիւնը» Քյոմուրձյանի «Ստամպօլոյ» պատմութեան» հետ համեմատելի է ոչ միայն իր այս ճանաշողական-պատմական նշանակությամբ, այլ թերևս շատ ավելի իր ոգով ու բնույթով: Ինչպես Քյոմուրձյանը, Լեհացին ևս իր տեսածների անտարբեր ու սառն արձանագրողը չէ: Նրա բոլոր նկարագրություններում առկա է հեղինակի վերաբերմունքը: Նա ևս շատ ուշագիր է հայերի վիճակի նկատմամբ:

49 «Ստամպօլոյ պատմութիւն», հ. Ա, էջ 17:

50 «Հանդէս ամսօրեալ», 1932, № 7—9, էջ 468—483 (հրատարակել է Ակինյանը):

Բոլոր դեպքերում ու պարագաներում կ. Պոլսի բոլոր բարեմասնությունները նկարագրելիս, նա ամենից առաջ իր հայրենակիցներով է հետաքրքրվում: Քյոմուրճյանի նման կեհացին ևս ատելությամբ է լցված դեպի օսմանյան տիրակալները: Դրա համար էլ համակիր է բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, մի բան, որի լավագույն ապացույցը գերիների շուկայի նրա սքանչելի նկարագրությունն է:

Աստվածավախ և հնագանդ քրիստոնյա է նա, և, այնուամենայնիվ, աստծու անարդարության գեմ գժղոհության ու բողոքի հաղիվ զսպված հառաջանքներ և դառը խոսքեր է մրրմընչում: Մի բան, որն զգացվում է նաև արտաքնապես ավելի զուսպ, բայց ըստ էության ավելի մոլեգին Քյոմուրճյանի երկերում:

Լեհացու «Ուղեգրութիւնը» նախորդել է Քյոմուրճյանի «Ստամպօլոյ պատմութեանը», սակայն վերջինս ամենայն հավանականությամբ ծանոթ չի եղել լեհացու գործին:

Այս երկու ստեղծագործությունների նմանությունը, հոգեհարազատությունը, ոչ թե ազդեցության կամ ընդօրինակման հետևանք է, այլ արդյունքը դրանց հեղինակների՝ XVII դարի այդ երկու առաջադեմ մտածողների, գաղափարական դիրքորոշման նմանության:

Քյոմուրճյանի «Ստամպօլոյ պատմութիւնը», որն, ինչպես տեսանք, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև գեղարվեստական առումով, մեր կարծիքով, թերևս առավել հետաքրքիր է որպես մեր գրականության պատմության մեջ դեռևս XVI դարի վերջներին սկզբնավորված մի նոր երևույթի արտահայտություն: Այն պատկանում է իրենց բնույթով ռեալիստական այնպիսի շափածող երկերի շարքին, որոնցում նկարագրվում են այս կամ այն տեղավայրը, դրա բնակիչների կյանքն ու կենցաղը, տեսարժան վայրերը և այլն: Այս տիպի երկերը, որոնց առաջացումը կապվում էր հայերի սփյուռքի և հայկական գաղութներում զարգացող առևտրական հարաբերությունների հետ, թե՛ ձեռվ, թե՛ բովանդակությամբ շատ մոտէին ժողովրդական ստեղծագործություններին:

Քյոմուրճյանի պատմական բովանդակություն ունեցող

մյուս երկերը մեր ձեռքի տակ չեն եղել և դրանց մասին մենք դիտենք այնքան, որքան հազորդում են բանասերները:

Հ. Օշականը «Երեմիա Զէլէպի» աշխատության<sup>51</sup> մեջ հազորդում է, թե ինքը երուսաղեմի ո. Հակոբի վանքի մատենագարանում տեսել է «Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» երկը<sup>52</sup>: Նա գրում է, թե այս պատմության նյութը Կ. Պոլսի 1660 թվականի հուլիսի 14-ի հրդեհն է նկարագրված մեջ ընդ մեջ կաֆաներով, որոնք ասվում են աղետի մատնված բնակիչների, կենդանիների, թաշունների, ծովերի, քամիների, ինչպես նաև իր՝ հեղինակի անունից:

Սակայն Հ. Օշականը գտնում է, թե այս երկում շատ են կրկնություններն ու խճռումները, թե այն, ինչ հեղինակը տվել է մոտ հարյուր կաֆաների մեջ, հենց սկզբի էշերից արդեն պարզ ու հասկանալի է ընթերցողի համար, թե կաֆաների մեջ թեև չեն պակասում «սիրուն, հաջողված կտորները», բայց կաֆաների քանակը շատ է, «ուղղակի անհանդուրժելի հեղեղ»: «Կրակն ավելի արագ է զործել, քան Երեմիայի գրիչը», գրում է բանասերը:

Հոդվածագիրը, որպես օրինակ, երկից բերում է արձակի մի կտոր և մի կաֆա: Բացի գրանից, մի քանի շափածո հատվածներ տպագրվել են «Սիրոն» հանդեսում<sup>53</sup>:

51 «Սիրոն», 1939, № 9, 10, 11 և 1940 № 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8:

52 Զեռագիր № 892, էջ 172ր—270ա: Այս գործի մի այլ ձեռագիր օրինակը պահպանվում է Անկուտրայի Կարմիր վանքում, ձեռագիր № 115, էջ 115—252 (տե՛ս «Յուցակ Անկուտրայի Կարմիր վանուց և շրջագայից», կազմեց Բարգեն կաթողիկոս, Անթիւիաս—Լիքանան, 1957, էջ 582):

«Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» երկի մասին մի հետաքրքրի տեղեկություն է տալիս ն. Ակինյանը: Նա գրում է, որ երկին Քյումուրջյանը կցել է մի հիշատակարան, որտեղ պատմում է այն մասին, թե ինչպես ժամանակի վեցիր Քյումուրջը փորձել է հրպեճի փաստը թաքցնել սուլթանից: Ապա կանգ է առել հրկիզումից հետո, հայկական գաղութում տեղի ունեցած իրավարձությունների վրա, հատկապես խոսելով եղիազար Այնթափու և Մարտիրոս Դրիմեցու հակամարտությունների մասին, շեշտելով դրանց աղետալի հետևանքները (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1939, № 11—12, էջ 629—631):

53 «Սիրոն», 1939, № 12, էջ 394—395:

Այս հատվածներից և հատկապես բանասերի մեջըերած կաֆաներից երեսում է, որ երկում շոշափված են թուրքիայի ներքին կյանքի ստվերոտ կողմերը, որ այստեղ ևս դրսեռութել է Քյոմուրճյանի բացասական վերաբերմունքը թուրքական պետության ու նրա աստիճանավորների նկատմամբ։ Կաֆան ասվում է բանտում այրվող գերիների անունից և ուղղված է ննիշերիների դեմ։

Հ. Օշականի վկայությամբ Քյոմուրճյանի դժգոհությունն ու միշտը՝ հայ ժողովրդի ծանր վիճակի համար, ավելի ցայտուն է դրսեռութել երկի վերջում, երբ նա իրեն ներկայացնում է նստած ողբալիս՝ հրգեհված Կ. Պոլսի բնանկարի առջե<sup>54</sup>։

Ինչ վերաբերում է երկի գեղարվեստական կողմին, ապա պետք է ասել, որ մեր ձեռքի տակ եղած պատառիկներով դըվար է քիչ թե շատ պարզ պատկերացում կազմել այդ մասին։

«Սիոն»-ում տպագրված հատվածները գրված են կրոնական բանաստեղծությունների և հատկապես «Երգ-երգոցի» խիստ ազդեցությամբ։ Դրանցում տեղին թե անտեղի օգտագործված են «Երգ-երգոցի» բանաստեղծական հնարանքները։ Այրվող եկեղեցին, օրինակ, բանաստեղծը ներկայացնում է որպես հարս և այլաբանական մի երկախոսություն է հորինում նրա և փեսայի միջև։

Աչք նորա է իբր զաղաւնիս. լուացեալ կաթամբ  
ջուրց բազմալի,

Եւ ձեռք նորա ոսկի մաքրեալ լցեալ ակամբ  
շափիւղայի։

Շրթունք նորայ շուշանք բուրեն, ծնօտք նորա  
տաշտ կնդրուկի.

Կոկորդ նորա լի քաղցրութեամբ, ամենեւիմբ  
յոյժ ցանկալի<sup>55</sup>։

Դժվար չէ նկատել, որ այսպիսի հատվածներն առանձին բանաստեղծական արժեք չեն ներկայացնում։ Թեև Հ. Օշակա-

54 «Սիոն», 1940, № 8, էջ 196։

55 «Սիոն», 1939, № 12, էջ 394։

նը, վերը նշած հոդվածում գրանք համեմատում է ժողովրդական «փոխնիփոխի երգվող» երգերի ու հեքիաթների հետ, և հայտարարում, թե դա «Երեմիայի քերթողական տաղանդին գլուխ-գործոց»-ն է, «մեկը մեր հին ու նոր գրականութեան անառարկելի փառքերէն»<sup>56</sup>:

Այս բոլորից պարզ է գառնում, որ «Պատմութիւն Հրակիկման Կոստանդնուպոլսոյ» երկը ևս կիսապատմական, կիսագրական ստեղծագործություն է: Պետք է ափսոսալ միայն, որ անտիպ է:

Քյոմուրճյանի մյուս գործը կոչվում է «Վիպասանութիւն յառումն Կրետէ կղզւոյ», որի մասին մեզ տեղեկություն է տալիս ն. Ակինյանը վերը հիշատակված աշխատության մեջ<sup>57</sup>:

1669 թվականին Թուրքիայի մեծ վեզիր Ահմեդ Քյոփիուրլուն գրավում է Կրետէի Գանտիա քաղաքը, ապա հալածանք սկսում քրիստոնյաների գեմ՝ եկեղեցիները մզկիթների վերածում, թողնելով միայն երկուաը: Դրանցից մեկը տալիս է հույներին, իսկ մյուսը 1400 տաղանդով վաճառում հայերին: Այդ եկեղեցին գնում է Ապրո Զելեպին:

Ահա այս առիթով նշում է ն. Ակինյանը, Քյոմուրճյանը գրում է այդ եկեղեցու հիշատակարան-կոնդակը, որտեղ ողբախառն պատմում է Գանտիայի առումը և նրա բնակիչներին հասած աղետը<sup>58</sup>:

Այս երկի հետ սերտորեն առնչվում է Քյոմուրճյանի «Վիպասանութիւն յԱպրո Զելէպի» գործը, որը ն. Ակինյանը 1936 թվականին տեսել է Մյունխենում, մի գրավաճառի մոտ<sup>59</sup>: Այն գրված է 1666—1672 թվականներին: Զեռագրի գրիչն ինքը հեղինակն է՝ Երեմիան, իսկ ստացողը՝ Աբրահամ (Ապրո) Զելէպին:

Այս երկում, ըստ Ակինյանի, Քյոմուրճյանը պատմում է մի

56 «Սիսն», 1940, № 8,էջ 195:

57 Սրա ձեռագիրն, ըստ ն. Ակինյանի, գտնվելիս է եղել Հ. Զավարյանի մոտ, Փարիզում:

58 «Հանդէս ամսօրեալ», 1932, № 11—12, էջ 642—648:

59 Ըստ Ակինյանի ենթադրության, այն այդտեղ է ընկել Ապրոյինց գրադարանից:

շարք դրվագներ իր մեկենասի՝ Ապրո Զելեպիի կյանքից և մի-  
կնույն ժամանակ ողբում Կրետեի գրավումը թուրքիայի կող-  
մից: Երկի ստորին լուսանցքների վրա հայատառ պարսկերե-  
նով դրված են Հաֆիզյան քառյակներ<sup>60</sup>:

Քյոմուրճյանը ունի նաև «Պատմական բանք իւրոյ ժամա-  
նակին, յորինեալ յամի 1682» խորագրով մի երկ, որի մասին  
առաջին անգամ ակնարկել է Տ. Պալյանը<sup>61</sup>: Նա ասում է, թե  
այն տեսել է 1885 թվականին, Հուպեյում, Գերմանիայի Հյու-  
պատոս Ա. Մուրադյանի մոտ, բայց ոչինչ չի հաղորդում դրա  
բովանդակության մասին:

Այս աշխատության մասին երկրորդ անգամ Հիշատակել է  
Հ. Գ. Մըրմրյանը<sup>62</sup> և նշել, որ դրանից Զամշյանը շատ բան է  
վերցրել:

Երկի անունը, ի շարս Քյոմուրճյանի մյուս գործերի, տակին  
են նաև Մ. Նշանյանն ու ն. Ակինյանը:

Ժամանակագրական առումով Քյոմուրճյանի վերջին պատ-  
մական երկը «Տարեգրական պատմութիւնն» է, որը դրված է  
1692—1693 թվականներին<sup>63</sup>:

Սրա մասին առաջինը Հիշատակել է Հ. Թորոսյանն իր  
«Վարք Մսիթարայ Աքրայի Սեբաստացոյ»<sup>64</sup> աշխատության  
մեջ: Իսկ ավելի հանգամանորեն դրա մասին խոսել է Ս. Երեմ-  
յանն իր «Երեմիա Զէլէպի — «Տարեգրական պատմութիւն»  
հոդվածում<sup>65</sup>:

Երկի բովանդակության և նյութի մասին խոսել են նաև ն.  
Ակինյանն ու Թորոսյանը Հիշատակված աշխատություննե-

60 Ն. Ակինյանը նշված աշխատության մեջ տալիս է նաև այս երկի հինգ հատորների մանրամասն բովանդակությունը (էջ 638—642):

61 Տե՛ս «Բիբրակն», Կ. Պոլիս, 1898, Խ 10, էջ 611—612, «Երեմիա Քէմիքընեան» հոդվածը:

62 Տե՛ս Հ. Գ. Մըրմրյան, Ստուերը Հին դեմքերու, 1907, էջ 5—11:

63 Անտիա է. ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մսիթարյան մատենա-  
դարանում, Խ 509:

64 Վենետիկ, 1901, էջ 28—30:

65 «Բաղմալէպ», 1902, Խ 8, էջ 367—369, Խ 9—10, էջ 473, 479:

բում և Մ. Նշանյանն իր հրատարակած «Օրագրութեան» ներածության մեջ<sup>66</sup>:

Հստ բանասերների, այդ գործը կարելի է բաժանել երեք մասի. առաջին մասը՝ Կ. Պոլսում և գավառներում պատահած հրդեհների մանրամասն պատմությունն է, ինչպես նաև երկրաշարժերի, հեղեղների և համաճարակների նկարագրությունները:

Երկրորդ մասը՝ XVII դարում Հունգարիայի, Ավստրիայի, Վենետիկի և եվրոպական մյուս պետությունների գեմ թուրքիայի մղած պատերազմների նկարագրություններն են և ժամանակի սուլթանների ու վեղիրների նշանավոր գործերի, ինչպես նաև պալատական երկպառակությունների պատմությունը:

Երրորդ մասը՝ Հայոց կաթողիկոսների, Կ. Պոլսի, Երուսաղեմի պատրիարքների և էջմիածնի նվիրակների ներքին պայքարի ու կոփառների մանրամասն շարադրանքն է:

Այսպիսով, այս գործում տրված է 1648—1690 թվականներին Կ. Պոլսում պատահած կարենոր քաղաքական իրադարձությունների և արևմտահայ գաղութի կյանքի նկարագրությունն ու գնահատականը: Այս իմաստով «Տարեգրական պատմութիւնը» պիտի որ նշանակալից երկ լինի և ցալվալի է, որ առայօր անտիպ լինելով՝ անծանոթ է մնացել լայն հասարակայնությանը:

Բացի այդ, Մ. Երեմյանի «Երեմիա Զէլէպի—«Տարեգրական պատմութիւն» հոդվածում բերված առանձին հատվածներից երեսում է, որ երկում նկարագրված է նաև հոգևոր հայրերի և աշխարհիկ տերերի միջև եղած ներքին հակամարտությունը, ընդ որում հայ հարուստներն այստեղ ներկայացված են նույնշափ ընշաբաղց, քսու և դաժան, սրբան և հոգևոր հայրերը, որոնց նկատմամբ, ինչպես ցույց ենք տվել, Քյոմուրհյանը յուրօրինակ քննադատական վերաբերմունք է ունեցել:

66 Տե՛ս «Օրագրութիւն», ներածություն, էջ ՍԲ.

«Տարեգրական պատմութեան» համար որպես նյութ ծառայել է Քյոմուրձյանի «Օրագրութիւնը»<sup>67</sup>, որն ընդգրկում է 1648—1662 թվականների դեպքերը:

Ինքը՝ Քյոմուրձյանն իր այս գործը կոչել է «Ժամանակագիր և պատմութիւն»<sup>68</sup>: Սակայն ձեռագրի վերջում կա մի հիշատակություն, ուր երկն անվանվում է «Օրագրութիւն» («Հեղինակ օրագրութեանս է Երեմիայ Զէլէպի, որդի Տէր Մարտիրոս քահանայի»)<sup>69</sup>, որից ելնելով էլ հետագայում այն կոչել են «Օրագրութիւն»:

Հայկական իրականության մեջ առաջին օրագրությունները հանդես են եկել XVII դարում, դրանցից են Զաքարիա Ագուեցու և Մինաս պատրիարք Ամդեցու օրագրությունները<sup>70</sup>: Դրանցից մեկն է նաև Երեմիա Քյոմուրձյանի այս երկը:

Այս օրագրությունները, նկատելի շափով անջրաբետվելով ժամանակագրություններից, դեռևս որոշակիորեն նման էին նրանց, որովհետև սրանցում, անձնական-ինքնակենսագրական փաստերի կողքին, հեղինակները զգալի տեղ են հատկացրել պատմական իրադարձություններին: Մյուս կողմից, որոշ ժամանակագրություններ, ինչպես, օրինակ, Գրիգոր Դարանաղեցու «Ժամանակագրութիւնը»<sup>71</sup>, կարելի է հայ օրագրական գրականության անդրանիկ փորձերը համարել, քանի որ դրանցում առաջին անգամ ժամանակագրական փաստերի կողքին

67 Ինքնագիրը պահպատ է Երուսաղեմի ս. Հակոբի վանքի մատենադարանում (Ճեռագիր № 1893): Այս Ճեռագրից է, որ այն հրատարակել է Մ. Նշանյանը:

68 Զեռագրի 2 թ էջում:

69 Զեռագրի 353 թ էջում:

70 Զաքարիա Ագուեցու «Օրագրութիւնը» (1647—1681) առաջին անգամ տպագրել է լրագրապետ և հրապարակախոս Ալեքսանդր Քալանթարը: 1938 թ. թ. Ավղալբեկյանը պատրաստել է «Օրագրութեան» գիտական տեքստը, որը և հրատարակվել է նույն թվականին: Խոկ Մինաս Ամդեցու «Օրագրութեան» համառոտ բարեկարգությունը Մ. Նշանյանը շարադրել է Քյոմուրձյանի «Օրագրութեան» ներածության մեջ:

71 «Ժամանակագրութիւն» Գրիգորի վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ», Երուսաղեմ, 1915:

Հաղինակները հաղորդում են նաև ինքնակենսագրական տեղեկություններ: Սակայն քանի որ Զաքարիա Ագուեցու, Մինաս Ամդեցու և Քյոմուրճյանի օրագրություններում ինքնակենսագրական փաստերն անհամեմատ ավելի մեծ տեղ են բռնում, ապա և դրանք փաստորեն դառնում են առաջին խոկական օրագրությունները, կրկնում ենք, դեռևս շատ բանով կատված ժամանակագրությունների հետ: Այսպիս, Զաքարիա Ագուեցին, սրի օրագրությունն ընդգրկում է 1647—1681 թթ. դեպքերը, ճիշտ է, հարուստ տեղեկություններ է տալիս Թուրքիայում, Պարսկաստանում և Եվրոպայում կատարած իր ճանապարհորդության, այդ վայրերի բուսական աշխարհի, կլիմայական պայմանների, առևտրական ճանապարհների, արտադրության և առևտրի վիճակի մասին, բայց և մեծ ուշադրություն է դարձնում նաև սեփական կյանքի փաստերին: Նա, օրինակ, բազմակողմանի և մանրամասն տեղեկություններ է հաղորդում իր ծնողների, ընտանեկան գրության և իր առևտրական գործունեության մասին<sup>72</sup>:

Այս երևույթը ավելի բնդգծված է Քյոմուրճյանի «Օրագրութեան» մեջ: Այն իր բնույթով ինքնակենսագրական երկ է, որի մեջ բազմաթիվ էջեր կան հեղինակի կյանքի ու նրան ամենից ավելի հուզող դեպքերի մասին, որը հարուստ նյութ է տալիս Քյոմուրճյանի հետաքրքրությունների, մտածելակերպի ու աշխարհայցրի, խոհերի ու արքունների, ինչպիս նաև շրջապատի մարդկանց, միջավայրի մասին:

Սակայն դեռ պատանի հասակից մեծ հետաքրքրություն ունենալով դեպի հասարակական-քաղաքական հարցերը, Քյոմուրճյանն այս երկում մեծ տեղ է նվիրել նաև ժամանակի պատմա-քաղաքական իրազարձություններին, ավելի ճիշտ, իրեն դիտել դրանց ֆոնի վրա, այդ դեպքերի ոլորտի մեջ: Հենց այդ պատճառով էլ նրա «Օրագրութիւնը», զուրս գալով սոսկ անձնական-ինքնակենսագրական հարցերի սահմաններից, ընդգրկել է 1648—1662 թթ. Թուրքիայում տեղի ունեցած մի

72 Այս մասին տե՛ս Կ. Գանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 72—73:

շարք կարևոր, հատկապես արևմտահայ գաղութի հասարակական-ազգային, եկեղեցական գործերի հետ առնչվող դեպքները:

Այդ իրադարձություններն ու դեպքերը նկարագրելիս նա կամաց թե ակամա, երբեմն ընդգծված, երբեմն թեթևակիորեն բնութագրել է նաև ժամանակի աշբի ընկնող պատմական դեմքերին՝ թուրքական սովորական երին և հայ եկեղեցու գործիչներին, հատկապես, Եղիազարին և Մարտիրոսին: Ընդ որում, որոշ շափով շեղվելով օրագրության հիմնական սկզբունքներից և գեռուս պահպանելով ժամանակադրություններից եկած ավանդությունը, Քյոմուրճյանն այստեղ մի փոքր ավելի է տարվել պատմական բնույթի, հատկապես Թուրքիայի պատմությանը վերաբերող փաստերով:

Այդ շեղումը Քյոմուրճյանի «Օրագրութիւնը» դարձրել է պատմական տեսակետից արժեքավոր մի երկ: Այն լրացնելով «Պատմութիւն Համառօտ ԴՅ տարւոյ. օսմանցոց թագաւորացն...» երկի նյութը, ամբողջական պատկերացում է տալիս պատմական տվյալ ժամանակաշրջանի մասին:

XVII գարի Թուրքիայի պատմության համար «Օրագրութիւնը» արժեքավոր աղբյուր է նաև այն իմաստով, որ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում այդ երկրի բնակիչների կենցաղի, ծիսական սովորությունների և առհասարակ ներքին կյանքի, ինչպես նաև սոցիալական հարաբերությունների մասին<sup>73</sup>: Այս իմաստով «Օրագրութիւնը» որոշակի տեղ է

73 Օբինակ, Հիշատակնելով օսմանյան վեղիրներից մեկի մահը, Քյոմուրճյանը մանրամասն նկարագրում է լալիքի ծննդը. «Եւ յետ պահոյ միոյ լիալ բարեկամացն եկին, բազում կանայս սև զգեցեալ, և սև լաթ առեալ ի վերայ գլխացն, ի հետատանէ ձայնս արկեալ ճշէին մեծապէս և գոռալով բարձրաձայն աղաղակէին, մինչեւ զամենեսեան որ անդ կային՝ ի լաց հանէին և նւազեալ սրտիցն յարտառը բղիքէին և նորա այնպես եկեալ մտան ի տուն նորա» (տե՛ս «Օրագրութիւն», էջ 151):

Շատ հետաքրքիր է նաև օսմանյան թագավորների պատերազմ գնալու ծեսի նկարագրությունը: Գա մի ամբողջ թափոր է, որի առջնից զինավառ գնում են զորքի բոլոր տեսակները: Նրանց հնտեսում են երկրագործները, որոնք իրենք թե ցանում են, ապա չահակիրները, հացալվածառները (որոնց մեծ մասն ի գեպ, հայեր են), մսավաճառները՝ զարդարած ոչխարներն ու

գրավում մեր մեմուարային գրականության պատմության մեջ և պատճական չէ, որ Կ. Դանիելյանի «Հայ մեմուարային գրականության պատմությունից» գրքում այն ստացել է իր արժանի գնահատականը. «Քյոմուրճյանի օրագիրը XVII դարի հայկական հիշատակարանային գրականության ամենաաշքի ընկնող երեսությներից մեկն է: Մեծարժեք և բազմահարուսա իր պատմական մասով, այդ օրագիրը արտացոլում է ժամանակի մարդկանց բարքերը, սոցիալական ըմբռնումները, մտածելակիրապը, մի խոսքով՝ պատմա-հասարակական հոգերանությունը»<sup>74</sup>:

«Օրագրութիւնը», սակայն, մեզ համար այսօր առավել արժեքավոր է XVII դարի Կ. Պոլսի հայկական գաղութի ներքին կյանքի և հատկապես բարձրաստիճան հոգնորականության կենցաղի, հակամարտությունների մասին հաղորդած անկողմնակալ ու հետաքրքիր տեղեկություններով: Նկարագրելով եկեղեցու հայրերի ներքին պայքարը և այն գնահատելով՝ սեփական ժողովրդի շահերի տեսակետից, Քյոմուրճյանն «Օրագրութեան» մեջ, հատկապես վերջին մասերում, ստեղծում է ժամանակի հոգեոր ավագանու ներկայացուցիչների ճշմարտացի, տիպական կերպարներ:

Իհարկե, Քյոմուրճյանի երկում կան և ոչ կարեոր տեղեկություններ, մանր կենցաղային դեպքերի նկարագրություններ, մասնավորապես առաջին շրջանի գրառումներում, երբ հեղինակը 11—14 տարեկան է եղել, սակայն ուշ շրջանի գրառումներում դրանք զգալիորեն պակասում են, աստիճանաբար ավելի է ընդգծվում հեղինակի միտումը պատմական փաստերի ընտրության գործում, պարզորդ է դառնում նրա բացասական վերաբերմունքը թուրքական պետության, դրա աստիճանավորականը բշելով, մրգավաճառները՝ մրգերով բարձած ուղտերով: Սրանց հետքում են մյուս արհեստների ներկայացուցիչները (մեկ առ մեկ թվարկում է) իրենց արտադրած բարիքներով, յուրաքանչյուրն իր արհեստը ցուցադրելով՝ ջուհակը կտավ գործելով, դերձակը՝ կարելով, խոհարարը՝ եփելով, այսպես և մյուսները: Սրանց հետ միասին գնում են նաև խանութպանները, իրը թե ապրանք վաճառելով, և այլն:

74 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 74:

ների, ինչպես նաև այլասերվող հայ հոգևորականության նկատմամբ: Այսինքն, երկում աստիճանաբար ավելի ու ավելի մեծ տեղ են բռնում հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող հարցերը: Այս իմաստով «Օրագրութիւնը» Քյումուրճյանի քաղաքական հասունացման, նրա աշխարհայացքի ձևավորման պատկերը ներկայացնող մի հիանալի վավերաթուղթ է:

«Օրագրութիւն»-ը հետաքրքիր է նաև իր գրելաձեռով:

Ինչպես արդեն նկատել ենք, Քյումուրճյանը սիրել է շափածո խոսքն այնպես, որ նույնիսկ իր պատմական բնույթի երկերի մեջ մասը շափածո է Հորինել: Բացառություն են կազմում միայն նրա մի քանի երկարաշունչ գործերը՝ «Տարեգրական պատմութիւնը», «Պատմութիւն Հրակիղման Կոստանդնուպոլսյն» և «Օրագրութիւնը»:

Քանի որ զրանցից առաջինն ու երկրորդը մեր ձեռքի տակ շեն եղել, ուստի «Օրագրութեան» և մասամբ նամակների հիման վրա ենք գաղափար կազմում Քյումուրճյանի արձակի մասին:

Պետք է ասել, որ այստեղ ես, ինչպես պատմական բնույթի շափածո գործերում, Քյումուրճյանը կատարել է մի շարք շեղումներ՝ պատմել բուն դեպքերի հետ քիչ կապվող առանձին լեզենդանման կամ նովելանման պատմություններ, որոնք թեև որոշ շափով խաթարում են երկի կառուցվածքային ամբողջականությունը, բայց և միենույն ժամանակ ավելի հյութեղ, կենդանի են գարձնում այն:

Ավելի հետաքրքիր է «Օրագրութեան» ոճը:

Քյումուրճյանն առհասարակ սիրում է պերճ խոսքը, առիթը բաց շի թողնում ստեղծելու ճոխ գեղարվեստական պատկերներ, հետաքրքիր նկարագրություններ, երբեմն փոխ առնելով մեր պատմիշների ոճը: Այսպես՝ պատմելով թուրք տիրակալների գեմ ծագած զինվորական ապստամբություններից մեկը և աշխատելով գրավիչ դարձնել ապստամբների ու պալատական զորքերի միջև տեղի ունեցած ընդհարման պատմությունը, Քյումուրճյանն ընդօրինակում է Եղիշեին.

«Եվ կացին յերկուց կողմանց ճակատ առ ճակատ և յարեան

ի վերայ միմեանց դադանացեալ զօրութեամբ. քաջքն խիզախէին, արիացեալքն գոչէին, սուսերքն փայլփայլէին և սաղաւարտքն շողշողային և ի բազմախուռ նիզակացն և ի փայլմանէ պատենազէն վառելոցն՝ ընդ ճառագայթից արեգականն սոսսոսսային (\*): Եւ աստ էր տեսանել զաղետ և զտագնապ կորըստեան նոցա, զի որպէս այտք հարեալք ի փայտահարաց, այնպէս հարեալք ի միմեանց բազմահար հարուածովք՝ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղացին ի մեջ ճապապի արեանց»<sup>75</sup>:

Համանման մի պատկեր տեսնում ենք նաև «Օրագրութեան» 258-րդ էջում, որտեղ հեղինակը նկարագրում է թուրքական նավատորմի մղած ծովամարտը «ֆրանկների» (եվրոպացիների) դեմ:

Իր, մանավանդ ծովի վրա կատարած, հանապարհորդությունները, Քյոմուրձյանը նկարագրում է բանաստեղծական ոգեշնչմամբ ու հուզզով, գեղեցիկ համեմատություններով:

Օրինակ, պատմելով Մարտիրոս Ղրիմեցու և Աստվածատուր վարդապետի հետ գեպի երուսաղեմ կատարած իր հանապարհորդությունը, նա ստեղծում է ծովի վրա իրենց կրած նեղությունների հետևյալ կենդանի նկարագրությունը. «Եւ կացեալ զգիշերն ի բուն անդէն, առաւտեան պահու հանգարտ հողմով երերեալ ծփայաք ի մէջ ծովուն և ի ջերմութենէ արփւյն խորշակահար տօթոյն շունչը մեր նուազէին և նեղէին ի ծարաւց, և էինք անկեալք իբր զկոճդ մի ի գետնի և բնափին ի կղզէացն յառաջ քան զմզոնս թ ոչ կարէաք երթալ, և կայաք զաւուրս թ հանդէս քաղաքին»<sup>76</sup>:

Կամ երբ հիշատակում է զատկվա տոնի ժամանակ ծովի վրա կատարած իրենց զբոսանքը և պատահած փոթորիկը, ապա դարձյալ շի բավարարվում զեպքի չոր ու ցամաք վերապատումով, այլ աշխատում է այն զեղեցիկ ու նկարեն ձեռվ մատուցել ընթերցողին. «...Եւ ի նսեմանալ երեկոյին եղեւ մրրիկ հողմոյ մեծ և տատանէաք մեծ կոծով և երկիւզիւ ի մէջ

75 «Օրագրութիւն», էջ 5:

76 Նույն տեղում, էջ 357:

փոքր նաւին, որ ահազնատեսիլ ունէր անհում ծովն, միայն դիմքն ցուցանելով իբրև զլերինս ի վերայ մեր, մերթ ի վերայ իւր առնելով բարձրանայք և մերթ յանդունդ կարծէաք զմեղ գուլ<sup>77</sup>:

Հաճախ էլ, երբ նա աշխատում է ավելի ցայտուն արտահայտել իր վերաբերմունքն այս կամ այն երեսովթի մասին, նարեկացու նման դիմում է հոմանիշ բառերի ու մակդիրների թվարկման ձևին: Այսպես՝ իր խնամակալ Մահատեսի Ամբակումի կենսագրությունը պատմելիս, Քյոմուրճյանը կրօտ ձևով է գովարանում նրա կատարած բոլոր բարեգործությունները, որպեսզի զրանով արտահայտի իր զայրուցիլ եսասեր, շահամոլ հոգեորականների և հարուստների վարքագծի դեմ. «Քանզի սիրեցեալ լինէր զկարգաւորս և տայր յամենայն ընչիցն բաժին Աստուծոյ պատուէր զծնողս, հարկէր զազգատոհմս, զթայր ի վերայ որբոց, խնամս տանէր այրեաց, զբանտարգեալս ազատէր, զանկարիսն ի կար ածէր՝ յոյր ձեռն հասանէր, զմերկս զգեցուցանէր, զքազցեալսն կերակրէր, զմոլորսն խրատէր, զստահակս և զանհոգս տիրապետէր և ի գործի կացուցանէր, զրամի տէր առնէր, կարգէր և ի տեղիս մարգկան կացուցանէր, զաշակերտս գործոյն՝ պետս յօրինէր, շանայր ստիպէր ի բաց կալ ի հպարտութենէ և յարբեցութենէ, զծերս պատվել և յեկեղեցիս կանխելը<sup>78</sup>:

Քյոմուրճյանի երկի թափը հատկապես ուժգին է դառնում այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է թուրք տիրակալների կողմից հայ ժողովրդի հանդեպ կիրառվող դաժանություններին ու հալածանքներին: Այդպիսի զնպքերում նա սրտի կսկիծն արտահայտում է իր սեփական հոգուց բխող պողիկումներին խառնելով մեր պատմագրության ու տաղերգության մեջ մշակված՝ հայտնի բանաստեղծական համեմատությունները, սլատկերներն ու գեղարվեստական խոսքի այլ ձևերը:

Դրա փայլուն օրինակներից մեկը «Օրագրութեան» այն հատվածն է, ուր նա խոսում է թուրք տիրակալների կողմից հայկական եկեղեցիները թալանելու, ավերելու և դրա դեմ հա-

77 «Օրագրութին», էջ 15:

78 Նույն տեղում, էջ 307—308:

յերի բարձրացրած բողոքի մասին: Այստեղ նա չի բավարպւմ միայն ժողովրդի բողոքի ցուցը նկարագրելով, այլ դարձյալ օրինակ ունենալով Եղիշեին, նախ տալիս է կանաց մասնակցությունը այդ ցուցին, ապա ստեղծում բրիստոնեական լեզենդ Հիշեցնող մի պատկեր. «Եւ այլոց կանաց ումանց վառեալ արութեամբ ի բաց գնելով զերկիւղ, երթալ առ բռնակալօքն պար առեալ՝ կացորդս յօրինեալ, զգլուխս շարժելով, թեատրածելով բողոքս բարձեալ, նոր ողբս երգելով, զանիրաւութենէ նոցին հոչակս հանեալ և դթշվառութեանց մերոց ճիշ և բողոքս վերամբարձեալ կողկողէին, մինչ զի և զքակողացն ձեռն թուլացուցեալ՝ ի նոյնս զարմացեալ պշնելով և բռնակալացն սիրոք ճմլեալ, յարտասուս հարեալ ի մեծ իմն և ի նորոգ խղճէ նոցին թուլեին անդրէն և յետս դառնային: Յանժամամ և սուգ առնոյր երկին և ողբայր երկիր վասն դիպուածոց մերում թշուառութեանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ աջափին և ամպ մթագին և արև ծածկեցաւ և հողս սաստիագին յոյժ յոյժ մինչև ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զալաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն և փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, և ծովն ալիօքն փրփրայր և բարձրանայր ընդ պարիսպն և անձրև դայր»<sup>79</sup>:

Այս և նման հատվածները ցուց են տալիս Քյոմուրճյան արձակագրի շնորհքը և նրա «Օրագրութիւնը» դարձնում մեր ուշ միջնադարի գեղարվեստական արձակի հետաքրքիր և արժեքավոր նմուշներից մեկը: Սրանք միաժամանակ հուշում են, որ իր արձակում (իսկ ինչպես կտեսնենք պոեզիայում ավելի ևս) Քյոմուրճյանն աշխատել է վերականգնել մեր անցյալի գրականության բանաստեղծական ձևերը:

Մեր կարծիքով «Օրագրութեան» հետ իր բնույթով ու գրելաձեռվ սերտորեն առնշվում է «Օրագրութեան» հավելվածի (Նամակների) բաժնում գետեղված այն հատվածը, ուր Քյոմուրճյանը նկարագրում է Ղրիմի և Աստվածածնի տաճարի

79 «Օրագրութիւն», էջ 386:

մոտ հույների Այա-Դրետտա տոնի ծեսը և ովտագնացությունը<sup>80</sup>, որին ինքը ներկա է եղել:

Հատվածը զդալի ճանաշողական արժեք ունի, քանի որ շատ մանրամասն տալիս է տոնակատարության ու տոնի հետ կապված ծիսական արարողությունների նկարագրությունը: Սակայն, մնդ համար այն ևս ավելի հետաքրքիր է, որպես ժամանակի գեղարվեստական արձակի մի ինքնատիպ նմուշ: Նրանում առանձնապես գեղեցիկ են այն մասերը, որտեղ ներշընչանքով են նկարագրված հույն կանանց ու աղջիկների պարը: Այս հատվածը նույնպես պատմիչների, տաղերգունների, և հատկապես Նարեկացու, ոճական ավանդների կիրառման մի հետաքրքիր օրինակ է: Այսպես՝ հետևյալ տողերն, անտարակույս, հիշեցնում են Նարեկացուն. «Եւ ի քայլափիսութեանց հոտոտէր բուրմունքն որ յանձանց և ի ծաղկանց վարմագանից գեղաւորաց ի վայրն կանաշորակ ծաղկանց ծիրանեաց և գեղնեաց և երկրագունիցն և մանուշակորաց և սպիտակաց երին երին յօրինուածոց յօրինեալ ի Յօրինողէն»<sup>81</sup>:

\* \* \*

Քյոմուրճյանի գրական ժառանգության մեջ իրենց ուրույնակն ունեն նաև նրա նամակները, գրված իր որդի Գրիգորին, Եղիազար Այնթափցուն, զանազան վարդապետների, ժամանակի մի շարք նշանավոր անձանց:

Քյոմուրճյանի նամակներն այժմ հետաքրքիր են հիմնականում կենսագրական առումով, քանի որ ընթերցողի համար պարզում են ժամանակի կարեսը հարցերի նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, ծանոթացնում նրա խոհերի ու ապրումների հետ, բացում նրա՝ որպես գրողի ու մտածողի, հոգու գաղտնաբանները:

80 Տե՛ս «Օրագրութիւն Երեմիա Զելչպի Քէօմիւրճեանի». Հրատարակեց Մ. Նշանյան (Երևան, 1939, էջ 512), «Նկարագրական հատուած մը Ղրիմի մէջ գրուածն խորագրով»:

81 «Օրագրութիւն», Հավելված, էջ 514:

Դրանցում, ինչպես և Քյոմուրճյանի ողջ ժառանգության մեջ, ընթերցողի առջև կանգնում է ժամանակի ակտիվ քաղաքական գործիչն իր սկզբունքներով, իր անսրող ատելությամբ օսմանյան պետականության և նրա պաշտոնյաների նկատմամբ, իր բննագատական վերաբերմունքով դեպի բարձրասահման հոգևորականության վարքագիծը, իր մասրումներով ու հումանիւմով։ Մի խոսքով, այս նամակները Քյոմուրճյանին, որպես ժամանակի գործչի գնահատելու կարեոր աղբյուրներն են։ Բայց միաժամանակ, այս բոլորի շնորհիվ, դրանք հնարավորություն են տալիս զաղափար կազմելու ժամանակի սոցիալ-քաղաքական իրադարձությունների ու դեպքերի, ինչպես նաև նշանավոր գործիչների մասին։

Մեղ Համար ամենահետաքրքիրը, թերեւս, այն է, որ նամակներ գրելիս էլ Քյոմուրճյանն իրեն գրող-քանաստեղծ է զգացել։ Ալդ պատճառով նրա նամակները ես, երբ հատկապես դրանք վշտալի իրադարձությունների նկարագրություններ են պարունակում, լի են բանաստեղծական հատվածներով, արձակի գեղեցիկ նմուշներով։ Այդ տեսակետից ուշադրավ են ուն Շաթր Երեցի որդու մահվան առիթով՝ Եղիազարին, իր կրտսեր որդի Հովսեփիկի մահվան առիթով՝ Գրիգորիսին, և Գրիգորիսի մահվան առիթով՝ Եղիազար Այնթափյուն գրած նամակները։ Նա չի հաղորդում սոսկ Շաթրի որդու մահվան լուրը, այլ շնորհալի ձեռվ օգտագործելով թե՛ «Երգ-Երգոցից», թե՛ տաղերգուններից և թե՛ միջնադարյան ժողովրդական երգերից եկող բանաստեղծական հնարանքները, ստեղծում է մի հուղիչ եղերերդ։ «Միթէ պատանօք պատեցա՞ւ անձն քո վայելշահասակ, միթէ ի դագաղ մահու բարձա՞ւ, կիսպարաբաղդատք տի տի. միթէ փշրեցա՞ն աղեղանման և կամարայար ուներ քո. միթէ հողով կափուցա՞ւ այդ ծով ծով աշեր քո. միթէ փակեցա՞ւ ձոխութիւնք աղվոր բերանոյ քո. միթէ լուեցա՞ն քաղցրանուագ բարբառ քո. միթէ անզարդացա՞ւ քաղցրատեսիլ կերպարան քո. միթէ խցա՞ւ անուշասփիւռ ձայն եղանակի քո. միթէ միթէ հարաւի կարկտէ ծաղկեալ նոնենիդ. միթէ ի հո՞ղ գրաւեցին զանձն սիգաճեմ զոր յուսացի ի գէպ ժամանակի տեսանել.

վա՝ տեսանհլացա, միթէ ընդ երկաւ գերեզմանի՝ ամփոփեցաւ տիպդ վարդէ՛ռու»<sup>82</sup>:

Իսկ իր 14-ամյա որդու՝ Հովսեփիկի մահվան մասին, Գրիգորիսին զրած նամակում, բնության երևութների պատկերներով արտահայտում է իր վշտահար սրտի տառապանքը. «Զի՞նչ քեզ օրինակ զորս ի քաղաքս և զորս յանդեայսսդ և ի բուրաստանհացդ վայրս տեսեր արդեօք զանբան անասունս օդեղինս հանեալ ի ձուց դձագս՝ թէ ո՛բքան դողան ի վերայ՝ խնամօք պահպանութեամբ ի թշնամեաց, յօծից և ի կարճաց և յափշտակօղ թունոց, մինչև կերակրեցեալ, մհծացուցեալ, թեաւրիեալ ուսուցանեն սակաւ սակաւ բացէ ի բաց ինքեանք թոշին և զնոսա կոչեն թոշիլ ընդ ծառ՝ ճիւղից ի ճիւղս սովորեցուցեալ...»<sup>83</sup>:

Աչա գրելաձեի այս կողմն ի նկատի ունենալով է, որ Քյումուրձյանի նամակների զգալի մասը կարելի է դիտել ոչ միայն որպես վավերաթղթեր հեղինակի կենսագրության մասին, այլ գեղարվեստական ստեղծագործություններ՝ արձակի հատվածներ, որոնք զուրկ չեն հուզականությունից:

\* \* \*

Քյումուրձյանն ունի նաև չափածո ուղերձներ, գանձեր, ողբեր և տաղեր, որոնք հեղինակն ինքը դիտել է որպես բնարական ստեղծագործություններ: Բայց դրանք, հատկապես ուղերձները, որոնք ձոնված են այս կամ այն ժամանակակցին, ինչպես նաև գանձերի և ողբերի մի զգալի մասն իրենց բնությով ու բովանդակությամբ ոչ այնքան գրական, որքան կենսագրական և պատմական նշանակություն ունեցող երկեր են: Խսկական գրական նշանակություն ունեն միայն տաղերը և մի քանի ողբ: Մնացածները հետաքրքրական են դարձյալ առավելապես հեղինակի կենսագրության այս կամ այն մոմենտի հետ ծանոթանալու, նրա մտածելաձեի, նրա հուզերի ու հետաքրքրությունների ոլորտը սկարզելու տեսակետից: Մի քանիսն

82 «Օրագրութիւն», Հավելված, «Թուղթեր», էջ 441:

83 Նույն տեղում, էջ 446:

ուղղված լինելով մտերիմ մարդկանց՝ ծանոթացնում են Քյո-  
մուրճյանի միջավայրի հետ: Այսպես, 1686 թվականին Քյո-  
մուրճյանը մի ուղերձ է ձոնել Նաղաշ Հովնաթանին: Այստեղ իր  
խոսքը պատկերավոր ձևով նմանեցնելով «բանաւոր թռչունի»,  
խնդրում է նրան սլանալ Շոռոթ և իր չերմ ողջույնն ու սերը  
հաղորդել Հովնաթանին:

Ե՛ բանաւոր թռչուն յարգոՅ,  
էլող ի մտաց մատանցս բերոՅ,  
Բամկիս զբաղձանսըն դու լլցՈ,  
Բոտեալ սլացիր և զբանս մատՌ,  
Երթալդ ի բաց վըստահելոՎ,  
Եղեալ բերան իմ խօսելոՎ,  
Մի՛ պատկառիր նախ ընդ ողջոյն  
Մին համբոյք տալ ընդ զըրկելոյն,  
Իղծս իմ զհամայն նըմա յայտնէԱ,  
Ի քեզ յանձին՝ յաւանդ վարկԱ,  
Անմոռաց լե՛ր փութալ յիմս գութ,  
Անուն գեօղջն որ յայտնի ՇոռոԹ,  
Յիստորագասդ անուն իւր կԱ.  
Յաւարտ բանիս եւ յատկան Ա,  
Ի ՅԱՅԴ ՃԵՄԵՄ<sup>84</sup> աստ զթուականն,  
Ի ձեռն այնմ որ իմ Յովնաթան<sup>85</sup>:

Այս ուղերձը զրականության պատմության համար պար-  
զում է առ այսօր անհայտ մի կարևոր փաստ, որ XVII ւարի  
կ. Պոլսի անվանի հասարակական գործիշ և բանաստեղծ Երե-  
միա Քյոմուրճյանը ճանաշել և սիրով կապված է եղել իր ժա-  
մանակի ամենաականավոր հայ բանաստեղծի՝ Նաղաշ Հովնա-  
թանի հետ: Խսկ սա մի փաստ է, որ կարող է մեծապես օգտա-  
կար լինել մեր մշակութիւն երկու հատվածների կապերի հետա-  
գա ուսումնասիրության գործում:

84 Նշանակում է 1686 թվականը

85 «Օրագրութիւն», հավելված, էջ 571:

Քյոմուրճյանի տաղերը, ուղերձները, գանձերն ու ողբերը պարզում են նրա վերաբերմունքը դեպի ժամանակի կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությունները և դեպի այն անձինք, որոնք նշանակալից գեր են խաղացել դրանցում:

Ինչպես ասացինք, հեղինակն իր այս տիպի երկերը բանաստեղծություններ է համարել: Բայց դրանց զգալի մասը գեղարվեստական արժեք չունի, գրված է միջնադարյան հոգևոր երգերի ձեական կանոնների ու կաղապարների համաձայն: Ուղերձների մեծ մասն, օրինակ, հորինված է ակրոստիքոսների ձևով, բայց որում, երբեմն այնպես, որ ոչ միայն տողերի սկզբնատառերը, այլև վերջնատառերն են հոգևոր այս կամ այն անունը կամ բառը<sup>86</sup>: Կիրառված է բանաստեղծության բոլոր տողերը, նույնիսկ, բոլոր բառերը միևնույն տառով սկսելու ձևը<sup>87</sup>: Հասկանակի է, որ այս հանգամանքը շի նպաստել այդ երկերի գեղարվեստականությանը, այլ, ընդհակառակը, դրանք դարձել է բոնազբոս, սխեմատիկ, երբեմն, նույնիսկ, անիմաստ:

Այնուհետև, ուղերձներում ու գանձերում Քյոմուրճյանն աշխատել է ընդօրինակել նաև միջնադարյան հոգևոր երգերի պատկերները, ոճերը, դարձվածքները, համեմատությունները, նույնիսկ բառապաշարը.

Ի գերահրաշ լուսոյն լցեալ,  
Շնորհօք նորին գերազարդեալ,  
Պարզե նորին աղբիւրացեալ,  
Վըտակօրէն ի քեզ հեղեալ:  
Մաղկին նման որ ի ծովուն,  
Շուշան վարդից համասփիւռ բուն,  
Հոտով զմայլեալ ես գերազոյն,  
Եւ բուրես դու միշտ քաղցրազոյն<sup>88</sup>:

86 Այսպիսիք են «Օրագրութեան» հավելվածի 566—570, 572, 573, 579—580 և այլ էջերում գետեղված ուղերձները:

87 Նույն տեղում, էջ 576—577:

88 «Օրագրութիւն», հավելված, էջ 559:

իր այս երգերում Քյոմուրձյանը բանաստեղծական ձևեր ու պատկերներ է վեցըրել նաև մեր միջնադարյան տաղերգունիքից, հատկապես Գրիգոր Նարեկացուց: Նա աշխատել է նարեկացու նման բառաբարդություններ ու բառակուտակումներ հորինել, օգտագործել նրա մակդիրները.

Ուղիաշափի ակնավեճիտ պատուականի  
Յար մուշթերուցն՝ և առաւօտեանն արուսակի  
Սոսուն ծաղկին վարդն որ ազնիւ վայելչանա  
ի բուրաստանս մէջ ագրանիդ զուարձանա...<sup>89</sup>

Կամ նրա օրինակով ստեղծել ոտանավորը բարեհնչչուն  
դարձնող առձայնուցի.

Եոր ներկուու ներգրաբար, ներմասուրեամբ ներակյեալ  
նեկատիդ Հոգեպէս, նախընքացն քեզ օգնող

• • • • • • • • • • •  
Նոր ինձ էր երանի, նոր տեսոյդ հանդիպիլ,  
Նկրտիմ՝ նուաղիմ, նաեւանամ՝ նրբողիմ:  
Նեղիմ նոր անձկութեամբ, նուիրանաց նիաղեմ,  
Նոյանակերպ նշուլիւք, նաւուղիլ նախնազան<sup>90</sup>:

Ինչպես տեսնում ենք, Նարեկացուն նմանվելու ճիզն ակնհայտ է:

Սակայն, եթե Նարեկացու երկերում բառակուտակումները և բառաբարդումներն իրենց տեղում են, ունեն ներքին խորը հուզականություն և ընդգծում են հեղինակի հոգու խոռվքը, նրա մոլեգին թափը, այնպես որ պոետի զգացմունքների հախուսն հեղեղն իր մէջ է առնում նաև հեասպառ ընթերցողին, ապա Քյոմուրձյանի ուղերձներում դրանք սոսկ պաճուճանքներ են:

Եթե սրան ավելացնենք նաև, որ այս ուղերձների, գանձերի մեծ մասը, իսկ երբեմն նաև ողբերը միահանգ են կամ միայն

89 «Օբագրութիւն», հավելված, էջ 536:

90 Նույն տեղում, էջ 577:

Երեմն-Երբեմն են փոխում հանգը, ապա պարզ կդառնա, որ  
 դրանք որպես բանաստեղծություններ բավականաշափ տաղ-  
 տուկ են, միօրինակ և անկենդան։ Սակայն բնավլ էլ դրա պատ-  
 ճառն այն չէ, թե Քյոմուրճյանը չի կարողացել ստեղծել սեփա-  
 կան պատկերներ ու համեմատություններ (նրա մի շարք  
 ողբերն ու տաղերը հակառակն են ցույց տալիս), այլ նաև այն,  
 որ նա XVII դարի մի շարք բանաստեղծների նման նպատակ  
 է ունեցել վերականգնել միջնադարյան բանաստեղծական ձե-  
 վերը և ապա, ըստ երեսվթին, հետեւ է ուշ միջնադարում  
 սկիզբ առած և հետագայում կեղծ դասական պոելիայի ջիմ-  
 քերից մնելը դարձած այն սկզբունքին, ըստ որի, այսպիս կոչ-  
 ված «ազնիվ» թեմաների մասին անպատշաճ էր դիտվում  
 պարզ ու անմիջական ձեերով ու ժողովրդական լեզվով գրելը։  
 Այդ թեմաների համար պարտադիր էին համարվում գրաբարն  
 ու բանաստեղծության կանոնիկ ձևերը։ Ըստ այդ սկզբունքի,  
 պարզ, հասարակ, անմիջական ձեերով և ժողովրդական լեզ-  
 վով կարելի էր գրել միայն առօրյա, կենցաղային թեմաների  
 մասին։ Որ այդ այդպիս է, երեսում է Քյոմուրճյանի այն փոք-  
 րաքանակ ուղերձներից, որոնցում շոշափիված են հենց այդպի-  
 սի՝ առօրյա-կենցաղային հարցեր։ Նման դեպքերում նա իրեն  
 ազատ զգալով ձևական բանաստեղծական պարտադիր կանոն-  
 ների կաշկանդումից, ստեղծում է միանդամայն անկեղծ, ան-  
 միջական և կենդանի ոտանավորներ։ Այդպիսին է, օրինակ,  
 նրա անխորագիր ուղերձը, ուր նա տգիտության, անբարտա-  
 վանության համար ծաղրել է մի ուժն խոչա Մալխասի։

Ինչ կամէր այրն, որ զինքն տանջէ,  
 Պոստանձի՞է՝ թարխուն միթէ,  
 Հարցէք Մալխասն ի՞նչ լեզու է,  
 Հայ բարբառ է թէ տաճկի է:  
 Սուրեանի<sup>91</sup> է, թէ ջհափի է,  
 Տատիա՞ն է, խրւաթի է<sup>92</sup>,

91 Ասորերեն։

92 Խորվաթերեն։

Ախըրեա՞ն է, նասրանի՝ է<sup>93</sup>,  
 Յո՞յն լեզու է թէ ֆրէնկի:  
 Անուն Մալխաս, զի՞նչ խորհուրդ է,  
 Ըզթէֆսիրաթի<sup>94</sup> ինձ մեկնեսցէ,  
 Թէշրիհ առցէ<sup>95</sup>, թէֆրիդ գրեսցէ<sup>96</sup>,  
 Ալայ մալայ մին հարմունք է.  
 Բամկականաց էլֆաղ<sup>97</sup> ունիս,  
 Թուրքի հայրենի խակ գովիս,  
 Տին տաւասօք<sup>98</sup> երբ որ վարիս,  
 Մեծ ամօթ է քեզ, իմ որդիս:  
 Դու շինականին ևս խամ ես,  
 Երբ շընական դու զքեզ ասես,  
 Շինականն շնականն շզատես,  
 Ի հավատս զքեզ քննող դընես<sup>99</sup>:

Ինչպես տեսնում ենք, այստեղ թուրքերենախառն բարբառով, որը հենց ժամանակի Կ. Պոլսում ապրող հայերի խոսական լեզուն էր, դիպուկ ու սրամիտ հարցադրումներով և համեմատություններով, անսքող երգիծանքով, առանց «գեղեցիկ» պաճուճանքի, հեղինակը կարողացել է ստեղծել տգետ և անբարտավան խոչայի կենդանի կերպարը:

Գեղարվեստական որոշակի արժեք ունեն նաև այն ուղերձները, որոնցում վերաբտագրելիք ապրումը համընկել է հեղինակի զգացմանը, և, հետեւապես, եղել միանգամայն անկեղծ: Նման գեղքերում ուղերձն ստացվել է անմիջական, անսեթեգեթ: Այսպես՝ Քյոմուրճյանն իր անխորագիր ուղերձներից մեկը հղել է մի ոմն որդեկորուս հոր և նպատակ է ունեցել նրան միսիթարել: Եվ որովհետև որդու կորստյան խոր վիշտ է ապրել

93 Քրիստոնյա:

94 Մեկնություն, բացատրություն:

95 Մկրտել:

96 Անշատել, մի կողմ դնել:

97 Խոսք, զրոյց, լեզու:

98 Կրոնական վեճ:

99 «Օրագրութիւն», հավելված, էջ 547:

նաև ինքը՝ ուստի և ուղերձում կարդում ենք անկեղծ, հուզիշ  
տողեր, վշտի մեծությունը ընդգծելու համար տեղին կիրառված  
հիպերբոլիկ պատկերներ.

Իմ որդի է՝ պակասիս տանէս մերոյ,  
ի՞նչ բօթ է այս տանց մերոց հանդիպելոյ:  
Լացցեն երկինք՝ և երկիր ընդ իս անմխիթար,  
Վշտակցեալ բարեկամք մեր, ցաւս իմ դժար<sup>100</sup>:

\* \* \* \* \*

Յաւալից զմայրն և սփոփես այսու յուսովս,  
Վա՛յ ծընօղին, զի՞նչ արացէ դառն կսկիծովս<sup>101</sup>:

Այս բանն ավելի ակնհայտ է Քյոմուրճյանի գանձերում և,  
մանավանդ, ողբերում: Սրանցում ամենից ավելի է երեսում  
մեր նշած ներքին հուզղի, ապրած զգացումների դրսկորումը:  
Այն մի քանի ողբերը, որոնց նյութն իսկապես չի հուզել հեղի-  
նակին, չեն հուզում նաև ընթերցողին, և չնայած հեղինակի մե-  
ծագույն զանքերին, համապատասխան տրամադրություն չեն  
ստեղծում: Այսպիսին է, օրինակ, Աբրահամ Զելեպու դստեր  
մահն ու թաղումը նկարագրող «Ներբողեանը»<sup>102</sup>, ուր անկեղծ  
հուզղ արտահայտող պատկերների փոխարեն կիրառված են  
հուետորական, փքուն ոճեր:

Ազնուամեծարդ գեղաւորեալ և գեր պանծայ,  
Վճտակիր տիպդ ակն զուտափայլ խիտ առ խիտ կայ:  
Երկիւղ բարեաց միշտ զարդացեալ, խոհեմ անձինդ  
Սիրով հոգոյն յար զմայլեցեալ մաքուր հոգիդ:  
Մաղիկդ զմոսեայ քաղցրաբուրեալ խունկ բերկրալի,  
ի սուրբ սերմէ շառաւիղեալ տունկ սխրալի:

\* \* \* \* \*

100 «Օրագրութիւն», հավելված, էջ 554:

101 Նույն տեղում, էջ 556:

102 «Ներբողեան ասացեալ նրեմիայի առ ի թաղումն Աբրահամ Զելեպու  
դստերն փոքեր, որ ի թուական ԾՃԺ և իէ օգոստոսիօ (տե՛ս «Օրագրութիւն»,  
հավելված, էջ 589—590):

Արքայաշուրբդիմ փարելի բարեշափղ,  
Տիգ ճոխափառ իմ պանծալի օրհնութեան շիւլ<sup>103</sup>:

Բայց, բարերախտաբար, ողբերի ու զանձերի մեջ այս տիպի ոտանավորները գերակշռող չեն: Դրանց զգալի մասը զըրված է այնպիսի դեպքերի ասթիվ, որոնք խորապես հուզել են հեղինակին: Այդ պատճառով որքան էլ նա ցանկացել է պահպանել հնից եկող կանոնիկ ձեզ, այնուամենայնիվ, այդ երգերը անկեղծ, անմիջական բանաստեղծություններ են՝ լի կենդանի, մարդկային հոգեվիճակների դրսեռումներով, ինքնարութ ու սրտահույզ խոսքերով: Դրանց մեջ ավանդական գանձերից, ինչպես նաև տաղերգուներից վերցվնել են այն մակդիրներն ու ոճերը, որոնք համընկել են հեղինակի ներքին զգացմանը:

Այդպիսի բանաստեղծություններ են, օրինակ, իր մոր և գտտեր մահվանը նվիրված «Գանձ» ողբերլ<sup>104</sup>:

Հասկանալի է, որ մոր մահվան կսկիծը նա չէր կարող անկեղծ շզգալ: Դրա համար էլ թեև մակդիրներն այդտեղ քիչ են, պաճուճանքները պակաս, բայց բանաստեղծությունն ազգում է իր անմիջականությամբ, ներքին ողբերգականությամբ, սրտահույզ հոգեվիճակների նկարագրությամբ:

Իմ քաղցրիկ մայր, զգլուխդ մէկ ի վեր ա՛ռ,  
Ճուղապ մի տուր Քրիստոսի համար,  
Միթէ զիտե՞ս կամ հասու եղա՞ր,  
Զողըս և զաղէտս մեր ցաւագնաբար<sup>105</sup>:  
Ո՞ւր զընացէր որ յետ շես դառնար  
Միթէ իսկի շես եկեալ յաշխարհ,

103 Նույն տեղում, էջ 590:

104 «Գանձ» ասացեալ երեմիայի ի վերայ մօրն իւրոյ ՌՃԺԲ թվին հայոց յորում ամի հանգուցեալ լինի ի Քրիստոս: Նորա և մեզ և ամենեցուն Տէր ողորմի: ամէն» (տե՛ս «Օրագութիւն», Հավելված, էջ 611—622) և «Գանձ ասացեալ ի վերայ վաղամեռիկ դատէրն Սողոմէի» (նույն տեղում, էջ 627—634):

105 «Օրագութիւն», Հավելված, էջ 615:

ԱՇ թէ գիտէիր լաց մեր և շիւար,  
Լինէր թէ քեզ մեռանել չկայր<sup>106</sup>:

Այ իմ ծընօղ՝ փափաք հմ տեսողդ,  
Կերպարանօքդ ի հող մաշեցար,  
ԱՇ վաղակտուր հասակ մանկամեռ.  
Ընդէ՞ր փութով մեզ բերեր դիմար<sup>107</sup>:

Սակայն հարցը միայն հուզի առկայությունը չէ և ոչ եւ  
հիշտ գտնված հնարանքները: Ինչպես հայտնի է, բանաստեղ-  
ծությունն իմաստալից և հուզական է գառնում ամենից առաջ  
իր բարձրացրած կենսական հարցերով: Այս իմաստով ևս Քյո-  
մուրճյանի լավագույն ողբերը հետաքրքիր և ուշազրավ երկեր  
են: Օրինակ, վերը հիշատակված ողբում, բացի անձնական  
վշտից, տրված է նաև առհասարակ բոլոր մարդկանց հուզող  
հարցերից մեկը՝ կյանքի դեղեցկություններից ու վայելքներից  
զրկվելու մեծագույն ողբերգությունը: Մի հարց, որը թեև նո-  
րություն չէր մեր գրականության մեջ, բայց որն այստեղ վեր-  
արտադրված է նոր նրբերանգներով:

Կյանքի գեղեցկություններից հեռանալու գառնությունն  
արտահայտվում է կյանքից հեռացած մոր անունից, նա է գան-  
գատվում, թե անժամանակ մահը զրկել է իրեն կյանքի վա-  
յելքներից:

Զինդութիւն իմ որդոցս շտեսի,  
Թէպէտ ժամ և պահ մի խնդացի,  
Յետինս այս մահըս գառն ու լեղի,  
Ի խոր գուբըս զանձն իմ մաշեցի<sup>108</sup>:

Ճիշտ է, ինչպես տաղերգուների համանման երգերում,  
այստեղ էլ շիշտվում է կյանքի անցավորությունը.

106 «Օրագրութիւն», Հավելված, էջ 616:

107 Նույն տեղում:

108 Նույն տեղում, էջ 619:

Աշխարհիս շինողքն ո՞ւր են որ չկան,  
իմաստունք շատք ի զուբս սուզեցան,  
Վայելու պատկերօք մանկական,  
Խիզճ մահուամբ որք ի հողս գերեցան<sup>109</sup>;

Սակայն Հենց դրա հետ է, որ չի համաձայնվում հեղինակը:  
Իզուր չէ, որ կյանքից հեռացողը հարազատներին հորդորում է  
լալ, խղճալ, ափսոսալ իրեն: Հենց այստեղ էլ Քյոմուրճյանը  
շատ դիպուկ կերպով օգտագործում է մարդկացին կյանքը  
պտղատու այգու հետ համեմատելու՝ միջնադարում հայտնի  
սքանչելի պատկերը, որը հետազայում ևս մշակել են մեր տա-  
ղերգուներն ու ժողովրդական բանաստեղծները:

Այդի տնկեաց զիս Տէրն, ցանկով սկատեաց՝ գուր  
հնձան փորեաց:

Մնաց ինձ խաղողոյ՝ փուշ բուսուցի, նա հկեալ  
խըլեաց.

Աղաշեմ աղաշեմ՝ վասն իմ առ Տէրն իմոյս մեղաց՝  
թողով խնդրեցէք:

Ծնտրեալ այդիս, կոխան քակեալ հնձանն և  
աւարեցաւ,

Փշոցն դժնեասաղարթ՝ ճիռ ողկուղացն թօթափեցաւ<sup>110</sup>,

Եվ այս՝ աշխարհիկ կյանքի գեղեցկությունների կորուսար  
խիստ վշտացնում է նրան: Որքան էլ, այլ ելք չունենալով, նա  
հույսն աստծու վրա է դնում, այնուամենայնիվ, դժգոհում է  
Գաբրիելի պահանջի դեմ: Նա շեշտում է, որ մարդն իր հոգին  
ոչ թե կամովին, այլ ուժի ստիպմամբ է տալիս.

Գաբրիելն եկն ի խնդիր՝ պահանջելով զհոգիս ի  
մարմնոյս,

109 «Օրագրութիւն», հավելված, էջ 619:

110 Նույն տեղում, էջ 620—621:

Տեսն էր ահազնադեմ՝ պապանձեցոյց ի վայրկեան  
ժամոյս<sup>111</sup>:

Յաշ և յահեակ ճար խնդրեցի՝ ոչ ոք փրկեաց  
ձեռացն հըգօրին,

Յաւագին ուժդին բախմամբ քակտեալ զհողիս՝ ի բաց  
խըլեցին<sup>112</sup>:

Ու որքան էլ բանաստեղծության վերջում մայրը հարա-  
զատներին խնդրում է աղոթել իր հոգու փրկության համար,  
այնուամենայնիվ, հիմնականը մնում է կյանքից հեռանալու  
վիշտը: Այսինքն՝ չնայած հեղինակի քրիստոնեական բարոյա-  
խոսությանը, երկում հաղթում է սերը դեպի աշխարհիկ կյանքն  
ու նրա ուրախությունները, ակամա բողոքը դրանք առ ոչինչ  
համարելու դեմ:

Իհարկե, ինչպես արդեն վերը նշեցինք, այս բոլորը նորու-  
թյուն չեր մեր գրականության մեջ, դրանց հաճախ շատ ավելի  
բարձր արվեստով հանդիպում ենք և՛ Կոստանդին Երզնկացու,  
և՛ Մկրտիչ Նաղաշի, և՛ Գրիգորիս Աղթամարցու ու մյուսների  
տաղերում, սակայն հարցն այստեղ հենց այդ ավանդների շա-  
րունակումն ու վերականգնումն է, որը բնութագրական էր  
XVII դարի գրականության ներկայացուցիչների համար:

Այս առումով ուշագրավ է նաև Քյոմուրճյանի «Գանձ ասա-  
ցեալ ի վերայ վաղամենիկ դստէրն Սողոմէի» երկը: Այստեղ  
առաջին տողերում նա օգտագործել է նարեկացու բանաստեղ-  
ծություններում և հայրեններում հաճախ հանդիսող պատկեր-  
համեմատությունը.

Եթէ ծովուն թանաք մարթացեալ,  
Կամ մորենեաց ի զրբիշի կազմեալ,  
Համատարած երկինքն թուղթ սփռեալ,  
Զգանգատս ի գիր ումեք շկարողացեալ<sup>113</sup>,

111 «Օրագրութիւն», հավելված, էջ 621:

112 Նույն տեղում, էջ 622:

113 Նույն տեղում, էջ 627:

Այստեղ ևս ջահել դստեր մահվան պատճառով ունեցած իր աղեխարշ ապրումները, Հեղինակը հաճախ չի կարողանում տեղավորել գանձերի կանոնիկ ձևերի, աստվածաշնչից եկած պատկերների մեջ: Հուզիքի հեղեղը նրան լիովին իր մեջ է առնում, նա մի կողմ է թողնում ոչ միայն գանձերի ավանդական պատկերները, այլև նույնիսկ գրաբարը, և ժողովրդի լեզվով, ժողովրդի երգի՝ հայրեններ հիշեցնող ձևերով ողբում իր անդարձ կորուստը:

Ես լամ և ասեմ թէ մահրում մնացի,  
Դու լաս և ասես թէ որբուկ մնացի:  
Ես մորմոքամ թէ մուրւէթ շտեսի,  
Դու լաս և ասես թէ խոռ մնացի.  
Ես լամ և ողբամ որ աշքս ի յետի,  
Դու սրտակոտոր ի յաստըորի:  
Ես զծաղկելոյ զօրերդ շըտեսի,  
Դու լաս և ասես՝ ա՞զ մարիկ պիտի.  
Ես հեծելով զատիլս հառաշէի,  
Դու զայլոց մայր տեսնելուդ ողբալի:  
Ի ցաւ մահուս զքեզ համբուրէի,  
Որբուկ մընալդ քան զմահս էր լեղի.  
Դու մար յիշելն այլոց թէ դիպի,  
Միրտդ արինով պիտի որ լցուի<sup>114</sup>:

Ինչպես տեսնում ենք, սա արդեն քիչ է հիշեցնում հոգմոր երգերի՝ գանձերի ընդունված ձևը: Սա մի իսկական քնարական, խորը վշտի տրամադրություն ստեղծող բանաստեղծություն է:

Սակայն այս բոլոր բանաստեղծություններից, թե՛ բովանդակության, թե՛ ձեփի տեսակետից ամենաուշագրավ և արժեքավոր գործը Ազուկեցի խոչա Խոսրովի մահվան հանդամանքները նկարագրող գանձն է<sup>115</sup>:

114 «Օրագրութիւն», հավելված, էջ 629—630:

115 «Ազուկեցի Խօսայ Խոսրովի մահուան, ճառ ի սկզբանէ մինչ ի նորին վաղձան: Ասացեալ ի խնդրոյ ամուսնոյ նորին»: («Օրագրութիւն», հավելված, էջ 635—648):

Այստեղ Քյոմուրճյանը պատմում է խոչայի ողբերգական կյանքն ու մահը: Սրտառուշ տեսարաններով պատկերում, թե Խոսրովն ինչպես է իր կեղծ բարեկամների պատճառով պարտքերի տակ ընկնում, սնանկանում, բանտարկվում և ի վերջո՝ վշտից ու նեղություններից օտարության մեջ, բանտում մեռնում: Քյոմուրճյանը ստեղծում է ժամանակի առևտրական-խոչայական կյանքի ճշմարտացի, տիպական պատկերը, խարազանում առևտրականության հատուկ արատները՝ շահամությունը, երկերեսանիությունը, ընչափացությունն ու եսասիրությունը: Նա դառնացած նկատում է, որ Խոսրովի բարեկամները նրա հետ մտերիմ են, նրա սեղանի շուրջը նստած բարեկամության ցուցեր են անում քանի դեռ նա հարուստ է, իսկ երբ խոչան նրանց իսկ պատճառով սնանկանում է, «բարեկամները» մոռանում են նրան: Դեռ ավելին, այդ ամենից հետո թշնամանում են՝ նրա հետ, հրաժարվում իրենց պարտքերից, նույնիսկ կեղծիքներով ու կաշառքներով նրան պարտապան դուրս բերում և դրանով ավելի արագացնում նրա կործանումը.

Ոմանք ուրոյն բարեկամ դարձեալ,  
Զծունկ պագէին սորա ւ աղաշեալ,  
Զի պատիւ ի փառս մեծարեալ,  
Որք ի քունճերս պատուարց դեգերեալ:  
Սա զլաւութիւն նոցա արարեալ,  
Բ անգամ ի փառսն վերածեալ.  
Յետոյ ձախմէ սորա այնք նենգեալ,  
Զսորա տըւեալ դրամն ուրացեալ:  
Քան զառաջին բարեկամսն անցեալ,  
Նոյն նենգողաց զպակասն այն լրցեալ,  
Զի զպատառուն պարտական հանեալ,  
Վկայս զըտեալ՝ կաշառուք պարծեալ,  
Հին քիւթէխօրքն ոչինչ մի օգնեալ  
Գըրեն վճռեն թէ պարտատէր լեալ:

\* \* \* \* \*

Զբարին տեսօղքն թշնամիք դարձեալ:  
Զի զհաց ուսողքն զշարիս են նիւթեալ...<sup>116</sup>

Քյոմուրճյանն այս ուսանավորում, հեռանալով միջնադարյան հոգեսոր գանձերի հատուկ ձևերից, ավելի է մոտեցել ժողովրդական կենդանի պոեզիային։ Երկում կողք-կողքի կիրառված են թե՛ վիակերգերից առնված էպիկական պատմելաձեւ և թե՛ XVII դարի Կ. Պոլսի աշուղների երգերը հիշեցնող<sup>117</sup>, կծու երգիծանքով լի պատկերները։ Տարբեր է նաև լեզուն, խրթին գրաբարի փոխարեն, այստեղ օգտագործված են ժողովրդական լեզվաձևերը։

Այս բոլորն զգալու համար բավական է կարդալ թեկուզ գանձի այն հատվածը, որտեղ Քյոմուրճյանը պատմում է Խոսրովի «բարեկամների» կազմակերպած խրախնանքները՝ ընդգծելով այդ մարդկանց կեղծությունն ու երկերեսանիությունը։

Մուրատ Մագսուտ սորա մաաշին<sup>118</sup>  
Զաշքերն տընկեալ հազըր լոխմային<sup>119</sup>  
Հօտն բուրէր քաղցր խօճի մաթպաղին<sup>120</sup>,  
Վասն այն մըտնել խաբել ջանային։  
Դապունիս փիլան գովելն լըսէին,  
Շատք ցանկ աշնայ լինիլ<sup>121</sup> ծըկլային<sup>122</sup>,  
Եաղշի կեռնտէ<sup>123</sup> ի դուռն շըփուէին,  
Խօշամէտճիքըն<sup>124</sup> շատանային։  
Սանահար ու կընքահար լինէին,

116 «Օրագրութիւն», հավելված, էջ 659։

117 Հիշեցնում է Հատկապես Կ. Պոլսի աշուղ Ճերեան Օղլուի երգերը։

118 Մաաշ (մէաշ) — պաշար։

119 Արենլյան քաղցրավենիք։

120 Խոհանոց։

121 Աշնա լինել — մտերմանալ։

122 Անտեսանելի մնալով՝ զաղտնի կիրակով մի տեղ նայել։

123 Եեղշի կիւն — լավ օր։

124 Բարի գալուստ մազթողներ։

Խօճին յօտան տիվան առթէին,  
 Զհացն ուտէին, զգինին խըմէին,  
 Փոյթ զտոլէստանն<sup>125</sup> ի շուռ ածէին:  
 Կենդանութիւն լինի խօճային,  
 Փառք ու պարձանք դու Հայոց ազգին,  
 Սեղանդ իլի դըրմընի<sup>126</sup> լինին,  
 Մինչ ի յաւուրըն դատաստանին:  
 Մեկ օրն հաղար լինի պարոնին...<sup>127</sup>

Ճիշտ նույնպիսին է այն հատվածը, որտեղ հեղինակը  
 պատմում է Խոսրովի երբեմնի մտերիմների շարախնդությու-  
 նը՝ նրա մահվանից հետո.

Ո՞ւր քիւֆթէխօր սուտ բարեկամքն, գընային ըմպեկ  
 թաս թաս զգինին.

Գիշեր ցերեկ խօշամէտիւք կանչօղքն խօճին  
 կենդանութիւն:

Ո՞ւր փիլաւիոր<sup>128</sup> սուտ սիրելին, անզամ մի տեսըն  
 շերքային,

Հիմա հոգիդ ենէ ասեն, Է՞ր այլ շատ մեզ շտայիր  
 բաժին:

Ո՞ւր չէնկէպաղ<sup>129</sup> նենգող դրդողքն, տեսնունք զիօճին  
 աստ քաջութիւն:

Ասեն՝ շաշզընն<sup>130</sup> բան չէ զիտցեր, ահա՛ տեսաք զիւր  
 իշութիւն:

Զայս բաշաղողքն տեղաց էին, ոմանք քան զսա  
 յառաջ շրէին:

125 Գույլեր:

126 Գրմնի լինել—դրված լինել:

127 «Յրագրութիւն», հավելված, էջ 637:

128 Փլավի ընկեր, փլավը՝ միասին ուտող:

129 Բարբաջող:

130 Ապուշ, տիսմար:

Միթէ սորա տէրտն չէրիք, սիթէմս այլ զան ու  
խոց սրտին:

Ոմանք խաշեն՝ զանք մեր այս էր, հոս առնէաք մեք  
զքո հոգին.

Ո՞ւր կերթաս՝ նա՛ դընա՛՝ հէրիֆ, տես թէ ինտո՛ր է  
խօճայութիւն<sup>131</sup>:

Վէրջին տողերը առավել շոշափելի և տիպական են դարձ-  
նում առևտրականների կերպարները, որովհետև դրանցում է,  
որ ամբողջ մերկովթյամբ ցուցադրված է այդ խավի մարդկանց  
մտածելակերպն ու խոսելածեր:

Բանաստեղծության այս մասերն ավելի դիպուկ են դառ-  
նում հեղինակի սուր և անսքող հեգնանքի շնորհիվ, որը դարձ-  
յալ շատ է հիշեցնում ժամանակի աշուղական պոեզիան:

Ինքը՝ Քյոմուրձյանը, իհարկե, չի էլ մտածել, թե ինչպիսի  
խոր եղբահանգումներ կարելի է անել իր գանձից: Նա ոլարզա-  
պես նկարագրել է դեպքերը: Բայց բանի որ ինքն ատել է  
մարդկային այդ արատները և համակրել աղնիվ, բարեգործ  
խոսրութին, ուստի և նրան կործանող առևտրականներին մեր-  
կացրել է զայրալից ու կծու խոսքերով: Մի բան, որ ոտանավո-  
րին ավել է սոցիալական սրություն:

Այս գանձն արժեքավոր է ոչ միայն ժամանակի կյանքի  
սեալիստական վերարտագրությամբ, այլև, ինչպես ասացինք,  
որպես քնարական ստեղծագործություն: Մեջ բերված հատված-  
ներից իսկ ընթերցողը կնկատի, որ այս երկում ևս շկան զար-  
գարուն պատկերներ ու համեմատություններ, շկան ուաճու-  
ճանքներ, որոնք առատ են հոգեոր գանձերում: Բայց բանաս-  
տեղծությունը հասնում է նպատակին, տրամադրություն է  
առաջացնում, քանի որ այստեղ կիրառված են ժամանակի  
պոլսահայ աշուղների երգերից եկող կենցաղային մանրուքնե-  
րի սրամիտ նկարագրությունները, կենդանի, տրամախոսու-  
թյունները, ժողովրդական վիտերգերի, հայրենների հնարանք-  
ները: Այս առումով հետաքրքիր են հատկապես այն հատված-

131 «Օրագրութիւն», հավելված, էջ 643—644:

ները, որոնցում նկարագրվում է խոսրովի կնոջ և դստեր սուզը; Դրանցում Քյոմուրճյանը փոխ է առնում ժողովրդական լալիքի երգերի ոճերն ու համեմատությունները.

Երկինք և երկիր մթնեցաւ, ամուսնոյն  
սև սև խոց հեղին.

Սառնամանիք սև սըրտին, որբ և այրի լինիլ  
Մէյրէմին;

Մութն ու մըլարն պատեցաւ, մարդոյ աշք բանալ  
չըտային.

Սա վերայ զըլսին ծեծէր, որ արցունքն զաշքերն  
չըանային:

Փոթոր(կ)եալ խառնակ օդոյն, յօր մահուն տեսաք  
խօսրովին<sup>132</sup>;

#### Կամ

Ճղատկեալ մաղերն Մէյրէմին, ի վերայ կրծոց խօճային:  
Զիւնն որ փշամամբ զօդն ծածկէր, օր և արև  
բնակչաց շըցուցին.

Անդ սև սև մաղերն ծածկէր, զդագաղն ու դմարմին  
սև բախտին:

Զիւնն որ ցընդեալ կու մաղէր, բըքախառն մանէման  
հոսին.

Զիւելքն ցիրուցան մաղէր, մաղկըտէր զսիրդըն  
Մէյրէմին:

Զիւնն որ ի փոս փոս տեղիք, լընոյր որ կուտոց  
դիզէին.

Հանգուց վերայ հանկուցի, ծալիծալ կըսկիծն  
Մէյրէմին<sup>133</sup>,

Ինչպես տեսնում ենք Քյոմուրճյանի այս երկում ինքնա-  
տիպ կիրառում են գտել մեր միջնադարյան բանաստեղծու-

132 «Օրագրութիւն», հավելված, էջ 645:

133 Նույն տեղում, էջ 646:

թյան շատ ու շատ ձեւր: Բայց ուշադիր կարգալուց հետո պարզ է դառնում, որ Հակառակ ուղերձների և դանձերի զգալի մասի, այստեղ հեղինակը համեմատաբար ավելի է մոտեցել ժողովրդական երգի զուգալ ակոնքին, ավելի է զգացել, հետեապես և զգալ տվել նրա վճիռ, պարզ ու անպահույց հմայքը: Դրա համար էլ հեղինակի կողմից ապրված վշտի խոր զգացումը գտել է ժողովրդական տիրաթախիծ երգին հատուկ, հոգու հետ խոսող սրտամոտ զրուցի ձեր, մի զրուց, որի մեջ սփոփանքը ժողովրդի դարերով ամբարած կենսափիլիսոփայությունից է գալիս:

Վերն ասածներից երեսմ է, որ Քյոմուրճյանի ուղերձների, գանձերի և ողբերի մի զգալի մասը, լինելով հեղինակի խորապես ապրած ներշնչանքի արտահայտությունները, լիարժեք բանաստեղծություններ են, XVII դարի պոեզիայի բնութագրական նմուշներ, որոնք այսօր էլ պահպանել են իրենց թարմությունը և արժանի տեղ պիտի զրավեն մեր միջնադարյան պոեզիայի լավագույն երկերի շարքում:

\* \* \*

Ազուկեցի խոշա Խոսրովի մահվան առիթով գրված դանձի հետ հետաքրքիր ձեռվ առնշվում է Քյոմուրճյանի մի այլ՝ բարոյախրատական ոտանավորը<sup>134</sup>, որտեղ դարձյալ շոշափվում են մարդկացին հարաբերությունների, բարեկամության, ընկերության հարցերը՝ կապված տարբեր սոցիալական վիճակների հետ: Այս ոտանավորում ևս հեղինակը շեշտում է, որ մարդուն գնահատում են նկատի ունենալով ոչ թե նրա բարեմասնությունները, այլ հարստությունը.

Յիշես զջատիկն, գքո սիրելիքն՝ և զբարեկամս  
քն տէվլէրին,  
Ի քեզ գային շնորհաւրել համայն խօսիցդ  
պէլի՛ պէլին:

134 Ոտանավորը թերի է, սկիզբն ու վերջը շկա: Տպագրված է «Թրագուրեան» հավելվածի «Խրատականք» բաժնում, էջ 668—670:

Յիշես մատամբ զքեղ ցուցանել՝ ուր գնայիր  
 զքեղ պատուէին,  
 Ուր նստէիր նոքա ցածուն զքեղ մհծարել  
 խիստ փութացին:  
 Յիշես թէ քեղ իր մի դիալէր՝ շուտով ի տունդ  
 վաղվաղէին,  
 Յաւակցէին փառակցէին՝ փառք և պատիւ  
 էր քո սրտին:

. . . . .  
 Այս ամենից այսօր դիմակն՝ քեղ պատահեաց  
 յոյժ վշտագին,  
 Զի հեռացան՝ ոչ երկին՝ այն բարեկամքն  
 ըստ ժամանակին:  
 Օր մի չմիշեն՝ ոչ գան առ քեղ՝ զերես  
 դարձնեն թէ հանդիպին<sup>135</sup>:

Բայց որովհետեւ այս ոտանավորի ընդհանուր նպատակը  
 կյանքի փորձություններին ու գառնություններին համբերու-  
 թյամբ դիմագրավելու քրիստոնեական բարոյախոսությունն է,  
 ապա բացի այս հատվածից, որն իրական, կոնկրետ կյանքից  
 առնված մի պատկեր է, մնացածը տաղտուկի խրատական տո-  
 ղեր են: Այսպես են նաև Քյոմուրձյանից հասած մյուս երկու  
 բարոյա-խրատական ոտանավորները<sup>136</sup>:

Դրա պատճառը ոչ միայն այն է, թե այդ բանաստեղծու-  
 թյունների հիմքում դրված է աշխարհի ունայնության քրիս-  
 տոնեական բարոյախոսությունը, այլև այն, որ դրանցում հե-  
 ղինակը կրկին դիմում է միջնադարյան կրոնա-բարոյախրա-  
 տական ոտանավորների ձեւերին ու հնարանքներին, օրինակ-  
 ների մեծ մասը ոչ թե կյանքից, այլ աստվածաշնչային թե-  
 մաներից վերցնելով:

Այդ ընդհանուր սխեմաների մեջ միայն երբեմն-երբեմն  
 երեւմ են կյանքից եկող իրական-շոշափելի համեմատու-  
 թյուններ ու պատկերներ: Եվ հետաքրքիրն այն է, որ այդպի-

<sup>135</sup> «Օրադրութին», Հավելվածի «Խրատականք» բաժինը, էջ 669:

<sup>136</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 665—666 և 666—667:

սիք, ընդհանուր կրոնական ոգին ճեղքելով, այն ժամանակ են ներխուժում ոտանավորների մեջ, երբ Հեղինակն այլևս չի կարողանում թաքցնել իր ներքին խոռվքը՝ դժոջությունը ժամանակի իրականությունից:

Քյումուրճյանը շարն ու անմարդկայինը տեսնում է ամենուր, նա առհասարակ նկատում է մարդկային հարաբերությունների այլասերումը.

Աշխարհս թամահի ւ ի պատճառ փառաց,  
Ոմանք զիտնոց անկան՝ ոմանք յանգիտաց,  
Ոմանց ինքնաշարժք են՝ ոմն յայլմէ դրդած,  
Սստուած փրկէ ըզմարդն խիստ յիսնաֆսըղաց<sup>137</sup>:

Բայց իր դարի զավակը լինելով, նա իրեն միմիթարում է, թե այդ բոլորն ի վերջո անցողիկ է, թե ամեն ինչ իր ժամանակն ունի և մարդուս նեղություններն է՝ իրենց հատուցումը կունենան հանդերձալ կյանքում: Դրա համար էլ նա կյանքից առած հետաքրքիր համեմատություններով իմաստասիրում է.

Յորժամ կամենայ ոք սիրուն վարդ քաղել,  
Պիտի փշով զձեռսն ի յարին շաղախել,  
Միտդ ա՛ծ զսերմնացանն՝ ո՛րքան համբերել,  
Մինչև գայ ժամանակ որ պիտի հնձել:

Ամենայնի շափ կայ և ժամանակ կայ,  
Թէ առաւօտն ելնուս՝ և իրիկունն կայ,  
Զերէկս թէ յետ ձըգիս՝ և առաւօտն կայ  
Մինչև որ բեղ բարի ժամանակըն դայ<sup>138</sup>:

Այսպիսով, չնայած ընդհանուր կրոնական բնույթին, նույնիսկ այս բարոյա-խրատական ոտանավորների մեջ ար-

137 «Օրագրութիւն», հավելվածի «Նրատականք» բաժնի էջ 667: Վերջին բառը նշանակում է անգութ:

138 Նույն տեղում, էջ 667: Այս երկու բառատողը, որպես առանձին բառատեղություն տպված է «Միուն», 1940, № 1—2, էջ 35:

տացոլվել են ժամանակի արևմտահայ գաղութի կյանքի մի քանի բնորոշ կողմերը, և դա էլ Հենց այս ոտանավորներին որոշակի արժեք է տալիս:

\* \* \*

Հիմնականում պատմա-քաղաքական նշանակություն ունեն նաև Քյոմուրձյանի այն բանաստեղծությունները, որոնց մեջ նա անդրադարձել է Թուրքիայի տիրապետության տակ ապրող հրեաների հարցին:

Այս բանաստեղծություններին հատուկ է մի շատ հետաքրքիր զիծ: Դրանցում հեղինակն ատելությամբ խոսելով հրեաների հավատի մասին, միևնույն ժամանակ մեծագույն սիրով ու համակրանքով է նկարագրում այդ նույն հրեաներին, երբ խոսքը վերաբերում է նրանց մարդկային արժանիքներին, նրանց կրած վշտերին ու տառապանքներին:

Հրեաների նկատմամբ այս երկակի վերաբերմունքը ևս պայմանավորվում է Քյոմուրձյանի Հիմնական քաղաքական սկզբունքներով, այն պայքարով, որ նա մղում էր օսմանյան բոնապետության դեմ, հանուն սեփական ժողովրդի ինքնության պահպանման: Իսկ այդ պայքարի Հիմնական օղակներից մեկը պայքարն էր հանուն քրիստոնեական կրոնի: Դրա համար է, որ Քյոմուրձյանը բոլոր միջոցներով պայքարում է քրիստոնեությունից եղած շեղումների, աղանդների դեմ: Այդ պատճառով է, որ նա իր «Յաղագս գերու Քրիստոսին, որ կելտի կելտի ասի, արարեալ և շարագրեալ Երեմիայի դպրի Կոստանդինուպոլսեցւոյ, որ էր ժամանակակից և տեսօղ իրացն, Ծածքէ թւոշ»<sup>139</sup> խորագիրը կրող երկարաշունչ բանաստեղծության մեջ ծաղրել ու դատապարել է հրեա Սապեթա Սելիմին, որն իրեն նոր մեսիա՝ փրկիչ էր հայտարարել և 1666—1668 թվականներին պայքարի էր դուրս եկել օսմանյան բոնապետության,

139 ՏԵ՛ս Մատենադարանի ձեռագիր № 8780, էջ 3ա—16բ: Հրատարակված է Կ. Պոլսում:

մահմեղականության, ինչպես նաև մյուս բոլոր կրոնների դեմ<sup>140</sup>:

Այս ուսանավորում, որը շատ ավելի շափածո պատմության է նման, Քյոմուրձյանն ամենայն մանրամասնությամբ պատմում է Սապեթայի հանգես գալը, նրա ուսմունքի տարածումը, տալիս այդ ուսմունքի առաջացման հիմնական շարժառիթները և հենց հրեական համայնքի ներսում նրա գեմ եղած պայքարի փորձերը: Ապա նկարագրում է շարժման հզորացումը, ցույց տալիս, որ շարժումն իր մեջ, փաստորեն, զինված ապստամբության սալմեր է պարունակել:

Ուսանավորի վերջում տրված է շարժման ողբերգական ավարտի պատմությունը՝ Հրեա կրոնավորների կողմից Սապեթային կառավարությանը մատնելն ու վարկաբեկելը և թուրք տիրակալների հաշվեհարդարը նրա հետ:

Այդ ամբողջից պարզվում է, որ Սապեթայի զլխավորած շարժման հիմնական նպատակն է եղել Հրեաներին Թուրքիայի լծից աղատագրել, ինչպես նաև աշխարհում ցրված Հրեաներին հավաքել Երուսաղեմում ու ստեղծել մի հզոր թագավորություն:

Զնչէ զքրիստիայնս և ինքն տիրեալ,  
Զտաճիկս ընդ բռամբ հարկատու առեալ<sup>141</sup>,

Յորմէ յառաջէ զայս հանուրց ազդեալ,  
Թէ մեք տիրեսցուք զի օր է մերձեալ,  
Ուժգնութիւն ազգաց առ մեզ նուազեալ  
Եվ մեր տկարութիւն յարգեալ ճոխացեալ:

Համայն աշխարհի մեր թագաւորեալ,  
Գայլոց ընդ գառանց ի զոյզ ճարակեալ<sup>142</sup>:

140 Այս մասին տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, զրուխ ԾԵ, էջ 651—665.

141 Մատենադարան, ձեռագիր № 8780, էջ 10ա:

142 Նույն տեղում, էջ 11ա:

Բանաստեղծության թե՛ այս, թե՛ բազմաթիվ այլ հատկածներից երկում է, որ Քյոմուրճյանին հատկապես զայրացրել է այն, որ Սապեթայի շարժումն ուղղված է եղել նաև քրիստոնեական կրոնի դեմ: Ուստի և չբավարարվելով սոսկ ծաղրով, Քյոմուրճյանն ամեն կերպ ջանացել է ապացուցել Սապեթայի ուսմունքի, նրա «փրկիչ» լինելու կեղծիքը, դրան հակադրելով միայն Քրիստոսի փրկիչ լինելու դոգման:

Սակայն հետաքրքիրն այն է, որ Քյոմուրճյանի վերաբերմունքը գեղի Սապեթայի շարժումը միշտ չէ, որ բացասական է: Ընդհակառակը, երբ խոսքը վերաբերում է շարժման հակառամանյան բնույթին, թուրքական բռնապետության դեմ նրա պայքարին, Քյոմուրճյանի վերաբերմունքը տրամադրությունը կիսվում է: Դրա համար էլ նա խորին զայրույթով ու հոգմունքով է խոսում Սապեթայի պարտությունից հետո հրեաների նկատմամբ կիրառված բռնությունների ու հալածանքների, նրանց աղքային արժանապատվությունը ոտնահարելու փաստերի, այլև հենց իր՝ Սապեթայի նկատմամբ կիրառված հաշվեհարդարի մասին:

Ի միշտ այլոց հենց այսաեղ էլ նա առիթը բաց չի թողնում կրկին անդրադառնալու թուրք պաշտոնյաների կաշոռակերությանն ու կամայականություններին<sup>143</sup>:

Հասկանալի է, որ այստեղ նրա մեջ խոսել է մի այնպիսի աղքի ներկայացուցիչը, որը նույնպես ձնշվում ու հալածվում էր թուրքական լծի տակ:

Այս ոտանավորը հետաքրքիր է նաև այն տեսակետից, որ շարժման պարտության ներքին պատճառները քննելիս, Քյոմուրճյանը մերկացրել է նաև հրեա հոգևորականությանը: Պատմելով 80 հրեա քահանաների՝ Սապեթայի դեմ մղած

<sup>143</sup> Երբ թուրքական կառավարությունն արգելում է Սապեթայի մոտ գնալ-գալը, ապա դա հնարավոր է դառնում կաշոռով.

Զայստանձի պաշին դարձեալ կաշոռեալ,  
Զկամս նախարարաց կրկին հաճեցեալ,  
Ի յերթեցեկո անդր ոչ դադարեալ,  
Զաղնիւ ինչ իրեանց նմա ընծայեալ:

(Մատենադարան, ձեռագիր № 8780, էջ 8ա):

պայքարը, ինչպես նաև նրանց կողմից Սապեթային թուրք իշխանություններին մատնելու փաստը, հեղինակը, անկախ այն բանից, ցանկացել է այդ, թե ոչ, բայց հիանալիորեն բնութագրել է և այդ հոգեռորականությանը, և՛ Սապեթայի աղանդի սոցիալ-քաղաքական էությունը:

Քյոմուրճյանին, որպես մտածողի և գործչի, դրականորեն է բնութագրում նրա համակիր վերաբերմունքը դեպի հրեաները, հատկապես Սապեթայի շարժման պարտությունից հետո: Այդ հանգամանքը լավ է դրսեռորդել նրա մյուս՝ «Նոյնոյ երեմիայի շարադրեալ ստանաւորս վասն վերստին խայտառակութեան հրէից»<sup>144</sup> երկում, ուր նա համակրանքով ու ցավով է նկարագրում հրեաների ծանր վիճակը ապստամբության պարտությունից հետո, շեշտելով, որ իրենց գաղափարների իրագործման համար նրանք կորցրել են ունեցվածքը, տառապանքներ կրել, ենթարկվել սոսկալի հալածանքների ու հավատափոխության վտանգին.

Եղեն և հրէայք ի խոր արտմութիւն,  
Այնք որք խնդային ապաշաւէին,  
Մաքառօղն ընդ մեղ շատ ամաշէին,  
Եւ ուամկաց լինէր սրտի բեկութիւն:  
Մամոնայն և զինչսն յոյժ կոկծային,  
Որ ՚ի երթս և եկս նորա ծախէին,  
Զաղերսեալ ընծայսն տիր ափսոսացին,  
Ղղծանակ լինելն նեղասրտէին<sup>145</sup>:

Յամցամէ յալլ վայրս և որք աստ կային,  
Դարձեալ յօրինաց տաճիկ լինէին<sup>146</sup>:

Իհարկե, այստեղ հեղինակը Սապեթայի պարտությունը և հրեաների մոլորությունն ու ձգտումը դիտում է ամենից առաջ քրիստոնեական ուսմունքի գիրքերից: Բայց թուրքական տի-

144 Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 8780, էջ 17ա—17բ:

145 Նույն տեղում, էջ 17ա:

146 Նույն տեղում, էջ 17բ:

բակալության կողմից Հրեաների նկատմամբ կիրառվող բռնությունները և հալածանքը, այնուամենայնիվ, նա նկարագրում է որպես նույնպիսի հալածանքների ենթակա մի աղքի ներկայացուցիչ: Դրա համար էլ նրան չի ուրախացնում Հրեաների պարտությունը: Քյոմուրճյանի այս երկու ոտանավորների ընդհանուր եղանակը, տոնը, տիտղը է, կարեկցական: Հետաքրքիր է, որ նույնիսկ հավատի հարցերում նա տարրերություն է զնում աղանդի ղեկավարի, քրիստոնեության դիմ դրաշտարձագրած Սապեթայի և Հրեա ժողովրդի միջև: Եթե առաջինը նրա աշքում եղկելի է, հանցավոր ու պատժի արժանի, ապա երկրորդը միայն մոլորված է և այդ մոլորության պատճառով գաղանի երախը քշված, դրա համար էլ օգնության ու կարեկից է Հրեա ժողովրդի արժանի: Նա հատկապես համակիր ու կարեկից է Հրեա ժողովրդի նկատմամբ, որը Թուրքիայում ճնշվում, հալածվում և ամեն տեսակ անարգանքներ էր կրում անկախ Սապեթայից էլ, սոսկ որպես հպատակ: Այս առումով բնութագրական է նրա «ԱՅլ իմն բան Հրէի կնոշն քէրային»<sup>147</sup> ոտանավորը:

Իրենց աղքային սովորության համաձայն Հրեա կանայք գարնանը զվարճանում են բնության գրկում: Կանանցից մեկը պարծենում է, թե կարող է թան ձարել և զնում է մոտիկ արքունական փարախները թան խնդրելու: Արքունի թուրք հովիվները բռնաբարում են նրան, ապա և նրան օգնության շտապող մյուս կանանց: Սա է ոտանավորի բովանդակությունը:

Նկարագչելով Հովիվների անպատկառ ծաղր ու ծանակը, Քյոմուրճյանը ակնարկում է, որ արքունական այդ Հովիվներն իրենց թիկունքում ունեն թուրքական ողջ պետականության հովանավորությունը և որ անարգված Հրեաները, միևնույն է, ոչ մի տեղ արդարություն չեն գտնի:

<sup>147</sup> Այս ոտանավորը, որի տպադրված օրինակին չենք հանդիպել, փաստքն մի չափածո նովել է, որ Քյոմուրճյանը տեղավորել է «Ստամբուլով պատմութեան» ընդհանուր հենքի մեջ, բայց Հրատարակիչ Թորգոմյանը չի տպադրել այն, պատճառ բերելով դրա «անպատկառ բովանդակութիւնը»: Մեղ այն ծանօթ է Մատենադարանի № 1675 ձեռագրից (էջ 272ա—274ա):

Այս երեք բանաստեղծությունները, որոնք միևնույն հարցին են վերաբերում, միևնույն վարպետությամբ ու միևնույն ձևերով չեն հորինված:

Դրանցից առաջինը էպիկական բնույթ ունի և ընթերցողին գրավում է հիմնականում իր սյուժենային հանգուցներով, հետաքրքիր բովանդակությամբ: Այդ բանաստեղծության մեջ պակասում են հուզական մոմենտները, խոսքի պատկերավորությունը, հանգամանքները, որոնք զգալիորեն թուլացնում են ոտանավորը, այն տեղ-տեղ դարձնում իրական փաստի շափածո վերապատռմ: Բայց հենց գեղքերի ճշմարտացի ու տրամաբանական շարագրանքն էլ երկին որոշակի հետաքրքրություն է տալիս:

Երկրորդում, նպատակ ունենալով պաշտպանել քրիստոնեական ուսմունքը, Քյումուրճյանը հիմնականում կանգ է առել հարցի կրոնական կողմի վրա, միայն թուլցիկ կերպով ակնարկելով հրեաների կրած նեղությունները: Դրա համար էլ ոտանավորում պատկերների, համեմատությունների և գեղարվեստական խոսքի այլ ձևերի փոխարեն հաճախ հանդիպում ենք քրիստոնեական դոգմաների հաստատման նպատակին ուղղված, վերացական, շոր ու ցամաք դատողությունների, միջնադարյան հոգևոր տաղերին հատուկ կանոնիկ ձևերի ու Սապեթայի հասցեին ասված թունոտ մակդիրների («Ժպիրձ ծնունդըն Նեռի», «անզգամ» և այլն): Միայն հրեաների վշտին նվիրված տողերում է, որ որոշ անմիջականություն և հուզականություն է նկատվում:

Այդպես շէ երրորդը: Այստեղ չենք գտնում ոչ առաջին երկուսի էպիկական տոնը և ոչ կրոնական դոգման շափածո տողերով պաշտպանելու միտումը: Բանաստեղծությունը ողողված է ժողովրդական, աշխույժ, խոսակցական դարձվածքներով, պատկերներով ու համեմատություններով, որոնք տեղտեղ ոտանավորը մոտեցնում են ժամանակի ժողովրդական երգերին, հատկապես աշուղական խաղերին. ահա այդպիսի մի օրինակ.

Զինչ ուզես տամք քեզ քերայ,  
Մեր գլխոյ վերայ ես գոլման,

Քո քայլրդ մեր աշխց վերայ,  
Բախտ էր մեր ուղորդ անկիւման<sup>148</sup>:

Ճիշտ է, լեզուն այստեղ շատ է խճողված թուրքերեն և ասորերեն բառերով, որով երկի իմաստը փոքր-ինչ մթագնվում է, սակայն այս երեսութք նկատվում է նաև ժամանակի աշուղական գրականության մեջ, և այդ տեսակետից Քյոմուրճյանի օրինակն ամենեին էլ բացառիկ չէ: Իր այս ոտանավորի առաջին տողում հեղինակն այն անվանում է «բան ծիծաղելոյ», սակայն ուշադիր ընթերցողը նկատում է տողերի արանքում թաքնված թախսիծը: Դեպքը ճշմարտացի նկարագրելով, հեղինակը կամա թե ակամա խղճահարության զգացում է առաջացնում ընթերցողի սրառում՝ Ակված հրեա կանանց նկատմամբ:

Այս խմբի բանաստեղծությունների հետ իր էությամբ սերտորեն առնչվում է Քյոմուրճյանի մի երկարաշունչ շափածո երկը՝ «Վասն էքմէքչի առնաւուտ Տիմօյի ումեմն, որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մրգատայ անուն և սուրբ խորհրդով քարոզէ նմա զՔրիստոս և աղջիկն խոստանայ երթալ ընդ նմա ուր և կամեցի մանուկն» խորագրով, որն իր գրական հատկանիշներով շատ է մոտենում պոեմի ժամանքին<sup>149</sup>:

Սա դավանանքով քրիստոնյա, ազգով ալբանացի մի հացավաճառի և մի հրեա աղջկա սիրո պատմություն է, ըստ երեվութին, իրական դեսպի զեղարվեստական վերարտադրություն:

Բովանդակությամբ ու սյուժեով այս երկը աղերսվում է միշնադարում տարածված և գրական մի շարք մշակումներ ունեցող «Հովհաննես և Աշա» ժողովրդական պոեմին և նույն

148 Մատենագարան, ձեռագիր № 1675, էջ 272: Հմմտ. Նոր Զուղայի և Կոստանդնուպոլսի աշուղների երգերի հետ:

149 Այս երկը Մատենագարանի № 8780 (էջ 17ր—30ա) և № 7715 (էջ 67ր—74ր) ձեռագրերից հանել և հրատարակել ենք «Բանքեր Մատենագարանի» հանդեսում, Երևան, 1962, № 6, էջ 409—427, «Երեմիա Չելչպի Քյոմուրճյանի մի անտիպ պոեմը» հոդվածին կից:

սյուժեով արձակ զրուցներին: Այստեղ ևս, ինչպես նշված երկերում, առաջ է քաշվում այլադավան երիտարսարդների միջև սիրո հնարավորության և, հակառակ կրոնական արգելքներին, այդ սիրո հաղթանակի հարցը:

Պոեմի սկզբում հանգամանորեն նկարագրված է երկի հերոսների սիրո ծնունդը, շեշտված է այդ զգացման հզորությունը: Ահա թե ինչ է ասում պոեմի հերոսն իր սիրո մասին.

Ի սէր սիրական սիրո իմ պրկեալ է,  
Որ այժմ և աւէտ ոչ ոք լըռւեալ է<sup>150</sup>...

• • • • • • • • • • •  
Աղուր պատկեր է, որ մարդ տեսեալ չէ,  
Քաղցըր լեզու է, որ լսելոյ չէ,  
Բարք նազելի է, որ ասելոյ չէ,  
Սէրն է հանց յաղթօղ, որ պատմելոյ չէ:

Թէ յաշս համայնից որ գարշ հրէայ է,  
Զգիտեմ թէ ինձ այսպէս որ երևեալ է,  
Զգիտեմ թէ որպիսի հուր ինձ վառեալ է,  
Առանց շուան՝ երկաթ զիս պինդ կապեալ է:

Ո՞րպէս կարացից մեկնիլ ի նման է,  
Ո՞րպէս զատեցայց զնորայն տեսլենէ,  
Ո՞րպոն մոռացայց զսէրն, որ անհան է,  
Որ ճառելոյ չէ, ոչ պատմելոյ է<sup>151</sup>,

Այս և նման հատվածները, որոնցում նկարագրված են հոգեկան բարդ ու նրբին ապրումներ, մարդկային ազնիվ զգացումներ, երկը կապում են մեր միջնադարի հումանիստական պոեզիայի լավագույն ավանդների հետ:

150 «Բանքեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 416—417:

151 Նույն տեղում, էջ 417:

Սակայն այդ սյուժեն Քյոմուրճյանին հարկավոր է եղել ոչ  
այնքան կրոնական կաշկանդումների գեմ սիրո դատը պաշտ-  
պանելու, որքան, ինչպես նախորդ երեք բանաստեղծություն-  
ներում, բարձրացնելու և դրվատելու քրիստոնեությունը, ցույց  
տալու նրա առավելությունը մյուս կրոնների հանդեպ: Դրա  
համար էլ պոեմում նա ընդդեմ հրեականի՝ պաշտպանում և  
քարոզում է քրիստոնեական կրոնը: Նույն նպատակով նա շեշ-  
տում է քրիստոնյայի հավատարմությունն իր կրոնին, աշխա-  
տելով ապացուցել, որ նույնիսկ ամենահզոր մարմնական  
զգացումը՝ սերը, չի կարող սասանել քրիստոնյայի հավատը,  
մինչդեռ այլաղավանը, տվյալ գեպքում հրեան, հեշտությամբ  
կարող է հրաժարվել իր հավատից: Պոեմում հրեա աղջիկը  
շատ խիստ չի դիմադրում տղայի կողմից արված հավատափո-  
խության առաջարկին և միայն իր հարազատների վրեժից վա-  
խնալով է, որ հետաձգում է փախուստը.

Մրգատան սիրով ասէ Տիմօլին,  
թէ բարի ասես զբանդ սխրագին,  
Բայց պակասաւորս որպէս լինիցիմ,  
Հզմհծ գործդ առնել ես իմոյս անձին:  
Ազգն իմ զիս սպանէ յոյժ ողորմագին,  
Եվ քեզ ոչ քողուն կենացը բաժին,  
Ոչ զեզ ողջ քողուն և ոչ զանձըն իմ,  
Այլ կորուստ այսմիկ զինչ օգուտ լիցին<sup>152</sup>,

Դրան հակառակ, քրիստոնյա երիտասարդի հոգեկան խոռվ-  
քը և հրեա աղջկա հանդեպ տածած սիրո տառապանքներն  
այնպես են նկարագրված, որ ընթերցողը համոզվի, թե նա  
կերաղասի մեռնել, բայց չի հրաժարվի իր հավատից:

Այս հարցում, իհարկե, իր արտահայտությունն է գտել  
Քյոմուրճյանի աշխարհայացքի սահմանափակությունը, սա-  
կայն այստեղ կա նաև մի այլ հանգամանք: Քյոմուրճյանն ու  
նրա նման մտածող մարդիկ, հնարավորություն շունենալով

152 «Բանբեր Մատենադարանի», էջ 414—415:

բացեիրաց պալքարելու թուրքական բռնապետության վարած ձուլման քաղաքականության դեմ, դիմում էին զարտուղի ճանապարհների. դրանցից մեկն էր, ահա մյուս կրոնների նկատմամբ քրիստոնեականի «առավելությունների» քարոզը, մի հնարանք, որին դիմում է Քյոմուրձյանը նաև այս երկում: Հասկանալի է, իհարկե, հրեաները երբեք չեն սպառնացել հայերի ինքնությանը, վտանգավոր չեն եղել նրանց համար, մինչդեռ օսմանյան տիրակալները ոչ միայն սպառնում, այլև մահմեդականացման ճանապարհով իրազործում էին ձուլման սպառնալիքը: Փաստորեն դրա դեմ է ուղղված Քյոմուրձյանի պոեմը, և ոչ հրեաների: Այստեղ հրեական կրոնին հակադրվելը պարզապես մի վարագույք, մի պատվար է, որը պիտի քողարկեր հեղինակի հիմնական նպատակը: Այն, որ Քյոմուրձյանն այպանում է հրեական կրոնն ու հրեական աղանդները, իր մեջ հրեա ժողովրդի դեմ ուղղված որևէ միտում չի պարունակում: Դրա լավագույն ապացուցը նրա համակրական վերաբերմունքն է գեպի հրեաները, որն այս պոեմում ավելի ցցուն ու ակնհայտ է, քան նախորդ բանաստեղծություններում:

Հրեաների նկատմամբ հանդես բերած նրա այս դրական-համակրական վերաբերմունքը նույնպես նրա հակաօսմանյան տրամադրությունների արդյունքն էր: Որովհետեւ հրեաները ևս, ինչպես հայերն ու մյուս հպատակ ժողովուրդները, ճնշվում և ամեն տիպի հալածանքների էին ենթարկվում նույն այդ օսմանյան պետականության կողմից: Հենց այս է պատճառը, որ եթե պոեմում Քյոմուրձյանը մի կողմից Տիմոյի բերանով ջատագովելով քրիստոնեությունը, ծաղրում ու պախարակում է հրեական կրոնը, ապա մյուս կողմից՝ հրեա հերոսներին ներկայացնում է դրական գծերով, մարդկային լավագույն հատկություններով: Այսպես, Տիմոն իր եղբորը դրած նամակում անընդհատ այն մասին է խոսում, թե Մրգատան օժտված է մարդկային ամենասքանչելի բարեմասնություններով. նա գեղեցիկ է, «քաղցրախոս», «նազելի բարք» ունի, նա կարող է անսահմանորեն նվիրված լինել և սիրած էակի համար ամեն ինչ զոհաբերել: Դրա համար էլ Տիմոն չի կարողանում հրաժարվել նրանից:

Քյոմուրճյանը Մրգատայի մոր մեջ ևս ամենից առաջ  
մարդն է տեսնում: Նա շեշտում է, որ մայրը կորցնելով սիրա-  
սուն զավակին՝ վշտից ու վիրավորանքից խելագարության  
դուռն է հասել: Ավելին. Մրգատայի մոր վիշտը նկարադրելիս,  
նա մի պահ կարծեք մոռանում է, որ այդ վիշտը նրան իր սի-  
րելի բրիտոնյաներն են հասցրել և անսքող համակրանքով ու  
կարեկցանքով է պատկերում նրա հոգեկան ծանր ապրումներն  
ու խոռվքը.

Աշացս իմ հանդէա զգուատրն իմ խլեցին,  
Թէպէտ կենդանի որպէս մահ ցուցին,  
Ի տանէս իմոյ տարագիր հանին,  
Սուգ ինձ պաշարեաց, ցաւ անհնարին:

• • • • • • • • • •  
Առին ի գրկէս զգուատրն իմ ծաղկածին,  
Արին անզաւակ զմայրս լալագին,  
Զպտուլս ի ծառէս խակակութ հատին,  
Զլոյս իմ շիշուցին, տունս խաւար ածին:  
Կեանքս իմ եղեւ այսօր մեջ աղջամդչին,  
Ոչ հանդիստ աւուր, ոչ ի գիշերին,  
Ալրիմ, տոշորիմ զստերս կարօտին,  
Տապիմ, տագնապիմ ի բոց կրակին<sup>153</sup>:

Նույնիսկ Տիմոյի դեմ վկայություն տված հրեա վաճառա-  
կանների նկատմամբ, որոնց թուրքական պաշտոնյաներն  
առանց որեւէ հանցանքի բանտարկում են, նա համակրական  
վերաբերմունք ունի: Այս համակրանքի աղբյուրը ևս Քյո-  
մուրճյանի հակաօսմանյան դիրքորոշումն է: Եվ իսկապես,  
թե՛ այս, թե՛ հրեաներին նվիրված նախորդ բանաստեղծու-  
թյուններում, նա կարողանում է ակնհայտ դարձնել այն ճշշ-  
մարտությունը, որ հրեաների վիճակը ծանր է, որովհետեւ  
նրանք ապրում են օսմանյան Թուրքիայի լծի տակ: Պոեմում  
Մրգատայի մայրը դժբախտ է ոչ միայն այն պատճառով, որ

153 «Բանքեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 423:

կորցրել է զավակին, այլև նրա համար, որ չի կարող վրեժիսընդիր լինել, հատուցման և արդարության հասնել: Օսմանյան արդարագատության օրգաններին տրված նրա հայցը՝ պատժել դստեր առևանգմանը նպաստողներին, անհետեանք է մնում, որովհետեւ վկայություն տվողները հրեաներ են լինում, իսկ օսմանյան պետության այն ժամանակավա օրենքների համաձայն՝ այլադավանի վկայությունը հաշվի չէր առնվում. մի հանդամանք, որը հպատակ ժողովուրդների անպատճ ձնշման համար էլ ավելի մեծ հնարավորություններ էր ստեղծում: Ակընհայտ է, որ այստեղ Քյոմուրճյանը, պաշտպանելով հրեա կող դատը, խոսում է նաև իր ճնշված հայրենակիցների անունից:

Եվ հենց իր և մյուս հպատակ ժողովուրդների սարսափելի վիճակը ցուց տալու նպատակն է հետապնդում հեղինակի շափաղանց խոսուն «օձատիպ» մակդիրը, որով նա բնութագրում է ողջ օսմանյան բռնապետությունը՝ «Ելցուք՝ յօձատիպ տաճկաց աշխարհի»:

Պոեմը հորինված է գրաբարի, բարբարի, թուրքերինի և որոշ տեղերում նույնիսկ երրաերենի խառնուրդ ունեցող լեզվով, որը շատ մոտ էր Կ. Պոլսի այն ժամանակի խոսակցական լեզվին:

Ուշագրավ է նաև պոեմի գրելաձեր: Այնտեղ, որտեղ հերոսները՝ ժողովրդի մարդիկ են՝ առկա է ժողովրդական պատկերավոր, հյութեղ, կյանքով լեցուն բառ ու բանը, իմաստուն դարձվածքը, անկաշկանդ տրամախոսությունը: Դրա լավագույն նմուշներն են Մրգատայի մոր անեծքը Տիմոյի հասցեին, Տիմոյի նամակն իր եղբորը և այլն:

Բավական զգալի տեղ գրավող այդ տրամախոսությունները գեղարվեստորեն բացահայտում են հերոսների ներաշխարհը, ապրումներն ու խոհերը, հոգերանությունն ու բնավորությունը, բնութագրում նրանց միջավայրն ու կենցաղը:

Հետաքրքիր է նաև, որ այստեղ ևս, ինչպես Քյոմուրճյանի մի շարք տաղերում, ողբերում և գանձերում, քնարական հատվածները մեծ մասամբ ժողովրդական երգեր են հիշեցնում և

Հորինված են այդ երգերին հատուկ համեմատություններով,  
այլաբանություններով և սիմվոլիկ պատկերներով.

Վայ ինձ դստրիկ իմ քաղցրիկ ու շիրին,  
Ասուն ու խօսուն ձագուկ իմ նարին,  
Որսացողք ագռաւք խլեալ զքեզ տարին...<sup>154</sup>

Պոեմի բոլոր այն համապատասխանում, որտեղ հերոսներն են խոսում, Քյոմուրճյանը կարողանում է նրանց հոգեբանությամբ, բնավորությամբ, միջավայրով ու ժամանակաշրջանով պայմանավորվող պատկերներ ու համեմատություններ ստեղծել: Օրինակ, որքան տիպական է, երբ տաք և պտղառատ երկրի բնակիչ կինը՝ իր մատաղահասակ դստեր առևանգումը ծառից խակ պտուղը պոկելու հետ է համեմատում՝ «Ձպտուղս ի ծառէս խակակութ հատին»: Կամ XVII դարի հայի հոգեբանության համար որքան բնորսշ է, երբ շարիքի գերագույն աստիճանը նույնացվում է օտար հրոսակների արշավանքների, նրանց կատարած խժդությունների հետ.

Դու ինձ թամուր-կանկ, ճէլալի եղեր,  
Եաղի և թաթար և դաշը մարդակէր<sup>155</sup>:

Պոեմի կառուցվածքի ամբողջականությանը խանգարում են բավականաշափ տեղ բռնող կրոնական գոգմատիկ դատողությունները:

Սակայն չնայած այս թերությանը, հելինակին, այնուամենայնիվ, հաջողվել է իրական գեղքն այնպես ներկայացնել, որ պոեմը հնչի որպես գեղարվեստական ստեղծագործություն:

Քյոմուրճյանի այս երկը հետաքրքիր է նաև հայկական միջնադարյան պոեզիայի մեջ պոեմի ժանրի զարգացման ընթացքն ուսումնասիրելու տեսակետից:

Մեր միջնադարյան պոեմները կամ պոեմանման երկարաշունչ էպիկական երկերն ամենից ավելի պատմա-քաղաքական թեմատիկա են ունեցել:

154 «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 425:

155 Նույն տեղում:

Դրանցում գովերգվել են առանձին զորավարների ու հերոսների գործերը կամ պատկերվել է հայ ժողովրդի այս կամ այն հատվածին պատահած որևէ աղետալի իրադարձություն։ Դրանց հաջորդում են այլաբանական պոեմները, որոնք բառ է ության աշխարհիկ լինելով, արտաքնապես կրոնական ձև են ունեցել, կամ էլ հեղինակները ցանկացել են, որ դրանք կրոնական իմաստով հասկացվեն։

«Հովհաննէս և Աշա» ժողովրդական պոեմից հետո, Քյոմուրճյանի այս երկը երկրորդ սիրային պոեմն է։ Այս առումով այն ուրույն տեղ ունի մեր միջնադարյան պոեմների շարքում։

\* \* \*

Քյոմուրճյանը հայ գրականության պատմության մեջ առաջիններից է նաև որպես ժողովրդական երգի մշակող։

Ճիշտ է, միջնադարյան մեր համարյա բոլոր տաղերգունները մեծ հմտությամբ օգտվել են ժողովրդական պոետիայի անսպառ աղբյուրից, այնտեղից վերցնելով գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներ, տաղաշափական ձևեր և այլն, իսկ հաճախ ուղղակի մշակելով ժողովրդի մեջ տարածված բանավոր զրուցները, բայց մեր խոսքն այն գեղքերի մասին է, երբ առնվում է համարյա միայն գաղափարը, մտահղացումը, և մշակվում հեղինակին հուզող հարցերի տեսանկյունից։

Այսպիսին են միջնադարյան ժողովրդական «Տաղ զրի վրայ է ասացեալ»<sup>156</sup> բանաստեղծության Քյոմուրճյանի երեք մշակումները<sup>157</sup>։

156 Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր (Երևան, 1956), էջ 152, ինչպես նաև նույն գրքի էջ 155-ում «Հարսն առ զորն և առ զարիպն» և էջ 148-ում տպագրված «Անտունի Ակնայ զաւառաբարբառով» բանաստեղծության մեջ եղած այս տաղի մի այլ տարրերակի մի մասը։ Գրքի կազմողն այս տաղի ծանոթագրության մեջ նշում է Քյոմուրճյանի մշակման մասին։ «Մանոթագրվող երկը, գեռաւ 18 (պետք է լինի 17—Հ. Ս.) դարում, բանաստեղծ Երևմիա Քյոմուրճյանի (Երեմիա Զելեպիի) կողմից ենթարկվել է մշակման, հիմք զանալով երեք գոլտրիկ նոր ու թարմ բանաստեղծությունների»։

157 Գրանք են «ի վերայ ջրոյ» խորագիրը կրող երեք բանաստեղծու-

Ժողովրդական երգի բոլոր տարբերակներում նկատվում է մի հիմնական ձևական ընդհանրություն: Դրանք բոլորն եւ տրամաբանական երկախոսություններ են զրի և մարդու՝ «ջրիկի» և «թուփ մանուկի», «ջրիկի» և «հարսի», «ջրիկի» և «աղջրկա» միջև: Այդ երկախոսությունների միջոցով է բացվում երգի բանաստեղծական իմաստը, որը յուրաքանչյուր տարբերակում տարբեր գունավորում ունի: Այսպես, եթե «Հարսն առ շուրն և առ զարիպն» և «Անտունի Ակնայ գաւառաբարբառով» տարբերակները, ի վերջո, այլաբանական սիրային երգեր են, ապա «Տաղ զրի վրա է ասացեալ» բանաստեղծության մեջ բյուրեղանում է ժողովրդի պատկերացումը զրի կենսական անհրաժեշտության մասին: Այս տարբերակը, որտեղ կիրառվում է տրամաբանական երկախոսության նույն բանաստեղծական ձևը, փաստորեն ամփոփում է մյուս բոլոր տարբերակների իմաստային երանգները: Զուրը հոսում է առվով, և առվի եղերքին բացվում է մանուշակը, զուրը մտնում է պարտեղ, և պարտեղում գեղգեղում են հավքերը, զուրը համնում է ծառին, և ծառը կենդանանում է, դրա տակ կանաչին է տալիս նորածիլ սեղը: Բայց այս տարբերակը սոսկ կենսատու զրի գովերգությունը չէ: Սրանում թաքնված է նաև այլ իմաստ՝ կապված աշխատանքի ու մարդկային հարաբերությունների հետ: Զուրը խոտ է աճեցնում՝ մարդու խնամած գառնուկի համար, գլուխ է աղբարակում՝ «թուփ մանուկի» սիրեցյալի ծարավը հագեցնելու և գնում է միայն այն պարտեղը, ուր աշխատում է մարդը՝ երկիրը շենացնում:

Նույն մոտիվներն ենք գտնում Քյոմուրճյանի երեք մշակումներում: Սրանցում մեկ է հիմնական գաղափար՝ շուրն անսահման բարիք է բնության ու մարդու համար, նա է շունչ ու կենդանություն տալիս աշխարհին, գեղեցկացնում կյանքը:

Սակայն առաջին և երկրորդ երգերում Քյոմուրճյանը հեռացել է ժողովրդական երգի վերը հիշատակված բանաստեղծաբյունները, որոնք տպագրված են «Անհայտի» 1903 թվականի համարում (էջ 188—193) «Տաղը երեմիա Քէօմիրճեանի» ընդհանուր խորագրի տակ: Մանոթագրության մեջ հրատարակիչ Զոսանյանը գրում է. «Այս տաղերը աշուղի չեղվով են գրուած և կարծենք թէ անտիպ են» (էջ 185):

կան ձեից, դրանցում երկախոսություն չկա: Առաջինում, օրինակ, հեղինակը փառաբանում է ջուրը, գովերգում նրա կենաբար ուժը, այնպիսի պատրանք ստեղծելով, թե իր դիմում է բանական էակի:

Չայնիդ եմ փափաք, տեսոյդ կու բաղձամ,  
Քո անուշ խօսիցդ սրտիկս է դողման,  
Դու ճեմես ճոճաս ի նազ սիգական,  
Ես կարօտ մնամ ի քո տեսութեան:

Ոտիցդ հոտոց սրտիկս է դողման,  
Այրէ ու լափէ քայլքըդ մանէման,  
Դու ընթացք առնես ճոխաս ճոճական,  
Ես տապ ՚ւ ի տագնապ այրիմ յանդիման:

Դու գնաս փութով ի յորդորական,  
Իմ խելքս ու խէյալս հետոցդ ըղձական,  
Դու դիմես գնաս նազով ճեմական,  
Ես ի տեսոյդ այրիմ կամ ի փափաքման...

Այս և նման հատվածները, ողջ բանաստեղծությունից անջատ, կարող են դիտվել որպես սիրային երգեր, ուր սիրատուր երիտասարդը սիրո ու կարոտի խոսքեր է ուղղում սիրած էակին:

Զրի կենաբար ուժի գովերգությունն է նաև երկրորդ մշակումը, այստեղ ևս ջուրը շնչավորված է, դիտված որպես բանական էակ: Շնչավորված է նաև բնության տարերքը և հեղինակը սքանչացած գլուխ է խոնարհում ջրի առջե:

Բոյսք և տունկք ցանկեալ ի քեզ պահապան,  
Կանաչ ու կանաչ զգրան ու սայզան,  
Մառք կանգնին յողջոյն քո պերճ ընթացման,  
Խոնարհ զգլիսով ճամփին բարե տան:

Շամբի եղեգնայք ծափ զծափի տան,  
Քեզ երգս յօրինեն պատիւ ընթացման,  
Քեզ պտղաւէտ բոյսք զպտուզս ընծայման.  
Թ'օթափին ի քեզ շնորհուկս գալստեան:

Հողմը քաղցրաշունչ քեզ և երգարան,  
Մաղկունք զհոտ անուշ բաւրումն քեզ տան,  
Ու մանրիկ ցողով վարդէջուր քեզ տան,  
Դու վէտ վէտ ի խաղ լինիս մանէման...

Իր կառուցվածքով ժողովրդականին ավելի մոտիկ է երրորդ  
երգը: Սա տրամաբանական երկախոսություն է հեղինակի, որն  
այստեղ հանդես է գալիս ժողովրդական երգի «թուխ մանուկի»  
դերում, և զրի միջն: Այս տրամախոսության մեջ դարձալ  
շեշտվում է զրի բարերար ազդեցությունը բնության վրա, նրա  
կենարար ուժը: Սակայն այստեղ հեղինակը երկախոսության  
հնարանքն օգտագործում է նաև կյանքի և շրջապատի նկատ-  
մամբ իր հույզն արտահայտելու համար: Զուրն այս տարբե-  
րակում «սուրհանդակ» է, որին բանաստեղծն ուղարկում է սի-  
րեցյալին ու աշխարհին բախտավոր սիրո իր երշանկությունն  
ու իր ողջունը հայտնելու.

Հաղար զենեհար տամ քեզ,  
Ա՛յ օրհնեալ ջուր բարեհամ.  
Ուր երթաս բարե տանիս,  
Ուր գտնուս մեղի սիրական:

Ի մէնջ մատուցես յողջոյն,  
Եւ ասես կան ի յողջութեան,  
Նստեալ յեղերս իմ խնդան,  
Սիրելեօք մէնլիս ՚ սէյրան...<sup>158</sup>

158 Ինչպես հայտնի է, այս ժողովրդական երգը 1911 թվականին մշակել  
է նաև Հովհաննես Թումանյանը: Թումանյանն իր մշակման մեջ փոխելով  
«թուխ մանուկ» միջնադարյան հասկացողությունը, որ նշանակել է երիտա-  
սարդ, երկախոսություն է ստեղծել զրի և երեխայի միջև: Նա շեշտել է ժո-

Եվ հետաքրքիրն այն է, որ ջրի պատասխանի մեջ ևս այս-  
տեղ նորություն կա: Նա այստեղ հիմնականում շեշտում է այն  
հանգամանքը, որ ինքը ուրախացնում, զվարճացնում է մարդ-  
կանց, թե իր խոխոչով ձայնակցում է նրանց երգին ու նվա-  
գին: Դրա համար էլ մարդիկ հրճվում են իր տեսքով, իրեն  
նվիրված գովքեր հորինում.

Յորդոր գնացիցս հանգոյն,  
Նուագեն յոյժ յարմարական,  
Հրճուին ի տեսս և լընթացս,  
Եւ խնդան ի խաղս իմ՝ և ի ձայն:

Նոքա լիմ խաղուց պարուց  
Եւ ձայնից ի խրախութիւն գան,  
Նոր երգս սկսեալ վասն իմ,  
Զիս գովեն ի ձայն գովասան:

Քյոմուրճյանի այս երգերը լրացնում, ամբողջացնում են  
մեր գրականության պատմության մի կարևոր օղակը: Դրանք  
շարունակում և զարգացնում են մեր բանավոր, ինչպես նաև  
միջնադարյան գրավոր գրականության մեջ Կոստանդին Երզն-  
կացու սկզբանավորած բնապաշտության, բնությանը գովեր  
ձոնելու ավանդական գիծը և Կիրակոս եպիսկոպոսի «Վասն  
թոշնոց<sup>159</sup>», Մուրատ Խիլարի «Տաղ գարնան», Ստեփաննոսի

զովրդական երգի հիմնական, բնապաշտական գաղափարը՝ չը կենարար ուժը  
բնության և մարդու համար, գուրս թողնելով երգի սիրային ու այլ գծերը:  
Այսինքն, ժողովրդական երգը Թումանյանին զրավել է առաջին հերթին իր  
բնապաշտական երանգավորումով. մի բան որ հարազատ էր մեծ բանաստեղ-  
ծին: Ինչպես առհասարակ բանահյուսական մոտիվների իր բոլոր մշակումնե-  
րում, այստեղ ևս Թումանյանը հարազատ է մնացել ժողովրդական երգի զե-  
ղարգիստական առանձնահատկություններին: Նրա մշակման մեջ ժողովրդա-  
կանից է գալիս ոչ միայն երկախոսության ձևը, այլև պարզ, հստակ,  
պատկերավոր խոսքը, որ Թումանյանի գրչի տակ մի առանձնահատուկ հմայք  
է ստացել:

159 Այս երգը մեր գրականության պատմության մեջ առ ալոօր հայտնի  
է եղել Հովհաննես եպիսկոպոսի անունով սակայն նրա հեղինակը Կիրա-  
կոսն է:

«Տաղ գարնան», Դավիթ Սալածորցու «Գովասանք ծաղկանց», Խասպեկ Խաչատուր երեցի «Տաղ ի վերայ վարդին և անուշահոտ ծաղկանց» և Համանման մի շարք այլ երգերի հետ մեր ուշ միջնադարի բնապաշտական երգերի լավագույն նմուշներից են:

Ուշագրավ է նաև, որ ինչպես մի շարք այլ գործերում, սրանց մեջ ևս Քյոմուրճյանը կողք-կողքի կիրառել է թե՛ բանավոր, թե՛ գրավոր գրականության լեզվական ու բանաստեղծական ձևերը: Դրա համար էլ այդ բանաստեղծություններում յուրօրինակ ձևով միահյուսվել են և՛ գրաբարի ու միջին հայերենի, և՛ ժամանակի խոսակցական լեզվի բառաձևերն ու արտահայտությունները: Օրինակ, բանաստեղծությունների գրաբարյան ոճերի կողքին տեղ են գրավել սրտիկ, վզիկ, ջրիկ, երբան, դողման և այլ բազմաթիվ տիպիկ միջնադարյան լեզվաձևեր:

Քյոմուրճյանի այդ երգերում ակնհայտ է թե՛ վաղ միջնադարյան բանաստեղծների, հատկապես Գրիգոր Նարեկացու, թե՛ տաղերգուների, և թե՛ աշուղների երգերի աղեցությունը: Այսպես, ջրի խոխոչը պատկերելու համար նա հմտորեն կիրառում է Նարեկացուց եկած առձայնույթը, և առաջին բանաստեղծության համարյա յուրաքանչյուր բառյակը վերջացնում Նարեկացուն շատ հիշեցնող տողերով.

Դու ծիծաղելով ծաւալ ծածանման:

Դու ծափ զծափի ծփիս ծաւալման:

Դու ծիծաղ ծաւալ ծալ՝ ի ծածանման:

Ծիծաղ ծածանիդ ծալ՝ ի ծածանման:

Ի միջի այլոց, այստեղ Նարեկացու նմանությամբ հորինված առձայնույթն այսպես բռնազբոսիկ և շինծու չէ, ինչպես Քյոմուրճյանի գանձերում և ուղերձներում, որովհետեւ բանաստեղծական այդ հնարանքը համապատասխանում է ոտանավորի բնույթին, բխում նրա ներքին էությունից:

Տաղերգուների, ժողովրդական, ինչպես նաև աշուղական երգերի ընդհանուր դանձարանից են առնված, թեև օտար,

բայց ժողովրդական լեզվին հարազատացած և ուշ շրջանի բանաստեղծությունների համար մի տեսակ պարտադիր դարձած նիկեարան, հաւրար, ինքիզար, բախչա, նիզան, տերտ, սերկերան, ֆիզան, խապար, ֆերան, մենլիս, սեյրան, և այլ ու այլ բառեր:

Իսկ                  Մանուշական խղճա, վզիկն է կեռման,  
Նօնօֆոր ծաղկին երեսն է դեղձան...

պատկերավոր տողերը թվում է առնված են ժողովրդական երգերից:

Կամ «Ասա ինձ ուստի գու գան» տողը և չրին հարցեր տալիս անընդհատ կրկնվող «Ա՝ յ շուր» կոչականը, վկայում են, թե որքան ուժեղ է եղել միջնադարյան բանավոր երգի աղդեցությունը Քյոմուրճյանի վրա:

Եվ չնայած այսպիսի ազգեցություններին, Քյոմուրճյանի այս երեք բանաստեղծությունները, այնուամենայնիվ, մնում են որպես ինքնուրույն և ինքնատիպ երկեր, որովհետև անցյալի և իր ժամանակի բանաստեղծական ձևերը հեղինակն օգտագործել է յուրովի, ընտրելով միայն իր սրտին մոտիկ գույները և համեմատությունները։ Սրանցում երեսում է Քյոմուրճյանի բանաստեղծական ճաշակը, նուրբ ու գեղեցիկ պատկերներ ստեղծելու նրա կարողությունը։

\* \* \*

Քյոմուրճյանի ստեղծագործության մեջ չնայած փոքր, բայց արժեքավոր մի բաժին են կազմում սիրային երգերը։ Դրանք, վերոհիշյալ երեք երգերի հետ միասին, վկայում են հեղինակի քնարական շնորհը։

Սիրային տաղերից մեզ միայն երկուսն են հասել<sup>160</sup>, թեև կարելի է ենթադրել, որ գրանց հեղինակը այդ տիպի ուրիշ երգեր էլ պիտի ունեցած լինի։

160 «Երգ սիրոյ» և «Ի վերայ սիրոյ և ուրախութեան»։ Առաջին անգամ Հրատարակել է Ա. Զուպանյանը 1903 թվականին, Փարիզի «Անահիտ» հանդեսում, էջ 189 և 192։

Այդ բանաստեղծություններից առաջինում, որ կոչվում է «Երգ սիրոյ», հեղինակը գովերգում է սիրելի կնոշ արտաքինը՝ աշքերը, հոնքերը, բերանը, շուրթերը, մաղերը և այլն։ Սա, իհարկե, նորություն չէր։ Մեր միջնադարյան տաղերգությունը և բանավոր գրականությունը հարուստ է նման օրինակներով։

Սակայն հետաքրքիրն այստեղ բանաստեղծական ձևերի այն միասնությունն է, որով հորինված է երգը։ Բանն այն է, որ այստեղ ևս միախառնվել են և՛ միջնադարից եկող, և՛ Քյումուրձյանի ժամանակի բանաստեղծական ձևերը։ Խնչպես նկատել է երգերի հրատարակիչ Չռպանյանը, սա առաջին հայացքից նման է աշուղական երգերին։ Եվ իսկապես, սրանում զգալի են աշուղական երգարվեստի որոշ տարրերը։ Այսպես, բանաստեղծության յուրաքանչյուր քառատողի վերջում «Ե՛կ ի մեր պախչան» բառերի կրկնությունը, յուրաքանչյուր քառատողի մեջ «բուրաստան», «վարդաստան», «ծաղկաստան», «այգեստան» բառերի հանգավորումը գալիս են աշուղական պոեզիայից։ Բացի այդ, կանացի գեղեցկությունն այստեղ գովարանված է այն մակդիրներով, որոնք սկիզբ առնելով տաղերգուներից, հետագայում մի տեսակ պարտադիր դարձան աշուղական պոեզիայում։ Նախորդ բանաստեղծական ձևերի և հատկապես ընդհանուր արեկլյան պոեզիայի ազգեցությամբ ստեղծված ավանդների համաձայն, աշուղական համարյա բոլոր, մանավանդ XVI—XVII դարերի երգերում, կնոջ արտաքինը գովերգելու համար ստեղծվել էին յուրահատուկ համեմատություններ։ Աշքերը նմանեցնում էին ծովի կամ կանթեղի։ Հոնքերը՝ եղեգնե ղալամի կամ լուսնի մահիկի, դեմքը՝ արեի կամ բոլորակ լուսնի, ատամները՝ մարգարտի, ալմաստի կամ այլ թանկագին քարերի։ Բերանը և շուրթերը համեմատվում էին ղանդ ու շաքարի հետ և այլն։

Նույնը նկատում ենք Քյումուրձյանի այս երգում։

Ուներդ է բարակ ղալէմի նըման։

Աշքերդ է զերդ ծով, օվկեանու նըման։

Կանթեղ է ի վառ, ի քո ծաղկաստան։

Երեսդ արեգակ, լուսին ի լրման,  
Քերանդ է անուշ նէպաթի նըման.  
Շրթունքդ է շէրպէթ, շիրին շէքէր լապ...

Սակայն, այսուհանդերձ, այս երգն աշուղական չէ: Սա հորինված է ոչ թե աշուղական տաղաչափությամբ, այլ յամբական սկարզունքա 10-վանկանի ոտանավորի ձևով, որով հորինված էին նաև ջրին նվիրված երկու բանաստեղծությունները: Բացի այդ, միջին հայերենի արտահայտությունների և թուրքերեն բառերի կողքին, երգում բավական զգալի են գրաբարյան լեզվական ձևերը, որոնք ընդհանուր առմամբ հատուկ չեն աշուղական պոեզիային, եթե չհաշվենք այն առանձին գեպերը, երբ կրոնական երգեր հորինելիս աշուղներից ոմանք գրաբարյան որոշ ձևեր են գործածել: Երգում կան տողեր, որոնք ոչ միայն տաղերգուներից, այլ տաղերգուների միջոցով դեռ «Աստվածաշնչից» են գալիս, օրինակ «Գլուխոդ է օծեալ իւղով պալասան» արտահայտությունը:

Այս բոլորը ցուց են տալիս, որ բանաստեղծության մեջ Քյոմուրճյանն իսկապես հետաքրքիր ձևով միախառնել է թե՛ տաղերգուների, թե՛ աշուղների արվեստի մի շարք տարրերը, և բնույթով ավելի մոտիկ մնալով աշուղական երգերին, ստեղծել յուրօրինակ, նոր ձևի մի ոտանավոր:

Դրան հակառակ, այս շարքի երկրորդ՝ «Ի վերայ սիրոյ և ուրախութեան» բանաստեղծության մեջ նա համարյա բոլորովին հեռացել է աշուղական ձևերից և շատ ավելի մոտեցել մեր միջնադարյան ժողովրդական երգերի՝ հայրենների արվեստի ձևերին ու բնույթին:

Քյոմուրճյանի բանաստեղծական ներշնչանքի թափը թերևս ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտվել է այս երգում: Սա մի գողարիկ սիրային բանաստեղծություն է, որտեղ անհամանատ քիչ է նկարագրված սիրած կնոջ գեղեցկությունը, բայց ավելի է զգացվում նրա հմայքը, կանացիությունը, հոգու հարստությունը:

Քյոմուրճյանն այստեղ, տաղերգուների և մեր ժողովրդական երգերի՝ հայրենների տաղանդավոր երգիշների նման, սի-

բած էակին վեր է դասում երկրային բոլոր հրաշալիքներից,  
հայտարարելով, որ նա իր ազնվությամբ, չահելությամբ ու  
թարմությամբ գերազանցում է ամեն ինչի.

Կալ ակն ու գոհար, անգին  
Եաղութն ու զմրութն հընանայ,  
Այրի, կոտրատի, փշրի,  
Դու ազնիւ և գեր քան զնոսա:

• • • • •

Վարդն որ ի կանանչ տերես  
Ինքնապոյն կու պայծառանայ,  
Շուտ մի թառամի թափի,  
Քո տեսիլդ միշտ գեղեցկանայ:

• • • • •

Ծխանելիք անուշունք,  
Առժամայ է հոտըն նոցա.  
Դու զցայգ և զցերեկ,  
Հիւանդն որ ի քեզ դեղի դայ:

Այս տողերը, որոնք հիշեցնում են Սայաթ-Նովայի «Զենդ  
քաղցր ունիս» հայտնի երգը, մեզ ակնարկում են, թե մեր միջ-  
նադարյան պոեզիան տաղերգությունից և հայրեններից մինչև  
Սայաթ-Նովան զարգացման ինչպիսի ճանապարհ է անցել:

Տաղերգուններից և հայրեններ հորինող երգիշներից եկող  
բանաստեղծական սկզբունքի համաձայն, Քյոմուրձյանը սի-  
րած էակին բնութագրելու համար ողջ տիեզերքն է լափում,  
գնահատում նրանով, արեգակն ու լուսինն է նրան սպասավոր  
կարգում.

Արեգակն որ է ստեղծեալ յարարչէն,  
Իւրում գործն երթայ,

Քեզ է սպասաւոր պատրաստ,  
Միշտ տալով զբարիս քեզ ընծայ:

Լուսինն ել և էջս առնէ՝  
Ուներուդ նման մանկանայ,  
Երբ ծերութեան՝ ի նման  
Բոլորեալ տիպսդ կերպարան:

Ինչպես տեսնում ենք, այստեղ, տաղերգուներից, և հայրեններից վերցնելով համեմատությունների ու պատկերների հորինման ընդհանուր սկզբունքը, Քյոմուրճյանը մնում է ինքնուրուցն, նա իր հույզն արտահայտում է ինքնատիպ գնդեցկություն ունեցող պատկերավոր համեմատություններով, բանաստեղծական թեև փոքր, բայց նուրբ գյուտաներով։ Այդ կարելի է տեսնել, օրինակ, զարմանալի անմիշականություն ու նրբություն ունեցող հետեւյալ տողերում։

Բուրաստանեացն շուշանք,  
Եւ ի զուրս որ վայելլանայ,  
Գին չեն մազ մի թարթիշիդ  
Վեր ի վայր, որ տարուբերանայ:

Հետաքրքիր է նաև, որ Քյոմուրճյանն այստեղ սիրո վերացական գաղափարի երգիշ չէ, այլ ապրած հույզի բանաստեղծ։ Նրա այս երգի քնարական հերոսները կենդանի մարդիկ են, իրենց հույզով, բնավորությամբ, վայելքի իրական հասկացողությամբ։ Ազդիկը ծիծաղում է սիրածի «ծնկան վրա», «լոյս երեսը» խոնարհում նրա բազկին, գրկում նրան, վայելում նրա սերը, մի բան, որ երգչի հայտարարությամբ կարող է անգամ մեռածին հարություն տալ։

Սիրո վայելքի այս անբռնազբոս գովերգով Քյոմուրճյանը շարունակում է յուրովի զարգացնում է հայրենների գեղջուկ սիրահար երգիշների ու առհասարակ մեր միջնադարի հումանիստական պոեզիայի լավագույն ավանդները։ Եվ պատահական չէ, որ բանաստեղծությունը հորինված է հայրենների շա-

փով, որը սիրո հույզն արտահայտելու ամենալավ ձևն էր միշտադրում:

Այս երկում ևս միմյանց են միահյուսված գրաբարն ու օտար բառերի խառնուրդ ունեցող միջին հայերենի լեզվածեզերը, որոնք այստեղ գալիս են ոչ այնքան աշուղական երգերից, որքան հայրեններից:

Բանաստեղծության այս նոր որակը, որի մեջ հանդես էին դալիս մեր միշնադարյան երգերի համարյա բոլոր տեսակներից առնված ձևերն ու հնարանքները, որի մեջ կողք-կողքի ապրում էին գրաբարը, միջին հայերենն ու ավելի ուշ շրջանի լեզվածեները,— բնութագրական էր ոչ միայն Քյոմուրճյանի, այլև Խասպեկ Խաչատուր երեցի, Դավիթ Սալածորցու, Հակոբ Սսեցու, Քոստ երեցի, Վարդան երեցի, Մարտիրոս Ղրիմեցու և առջասարակ այս ժամանակի համարյա բոլոր աշքի ընկնող բանաստեղծների համար:

\* \* \*

Որպես մտածող և գրող Երեմիա Գելեպի Քյոմուրճյանն աշքի է ընկել իր բազմակողմանի հետաքրքրություններով: Նա իր ժամանակի բոլոր կարևոր հարցերին մոտեցել է նշանաբան ունենալով սեփական ժողովրդի բարօրության և լուսավորության շահը:

Քյոմուրճյանը մեր մշակույթի այն ներկայացուցիչներից է, որոնք իրենց ողջ ստեղծագործությամբ պայքարել են հայ ժողովրդի ինքնության պահպանման համար:

Դրականության պատմության մեջ նրա դերը նշանակալից է հատկապես նրանով, որ նա զգալի գործ է կատարել մի շարք սեռերի՝ օրագրության-մեմուարի, պատմա-քաղաքական պոեմի մշակման, զարգացման ասպարեզում: Նա եղել է նաև ժողովրդական երգի առաջին մշակողներից մեկը:

Նա ստեղծել է ուղերձների, գանձերի, ողբերի և ոտանավորների մի ամբողջ շարք, որոնք պատկերել են XVII դարի արևմտահայ իրականությունն ու մարդկանց՝ իրենց խոհերով, ապրումներով և գործերով:

Ճիշտ է, Քյոմուրճյանը միշտ չէ, որ փայլել է բանաստեղծական վարպետությամբ և տաղանգով, միշտ չէ, որ կարողացել է իր գարի համար առաջադիմական, հայրենասիրական, հումանիստական և ազատագրական խոհերն ու զգացմունքները տեղ հասցնել լիարժեք բանաստեղծական երկերով։ Սակայն նա ևս ունեցել է բանաստեղծական ներշնչանքի հետաքրքիր և ուժգին պոռթիումներ, ունեղծել մի շարք գողարիկ երկեր, որոնք այսօր էլ պահպանել են իրենց թարմությունը, դրավշությունը, վարակման ուժը։

Քյոմուրճյանը մեկն է XVII դարի այն քնարերգուներից, որոնք շարունակեցին հայ միշնագարի բանավոր և գրավոր պոեզիայի ավանդները, այն ավանդները, որոնց վրա բարձրացավ XVIII—XIX դարերի գրական մշակութը։

Ζ Ο. Φ. Β Ι. Φ. Ή. Θ



Ա. ԵՐԳ ՍԻՐՈՅ

Գլուխդէ է օծեալ իւղով պալասան,  
Հոտ գայ ամպէրի ի քո բուրաստան:  
Մաղերդէ է դեղձան, սամուզի նըման,  
Որպէս զթել փայլուն. ե'կ ի մեր պաղչան:

5 Ճակատդէ զերթ սաթ՝ սատաֆի նըման,  
Փայլեալ քան դդոհար ի քո բուրաստան:  
Ուներդէ բարակ դալէմի նըման,  
Ցորինեալ կամար. ե'կ ի մեր պաղչան:

Աշքերդէ զերդ ծով, օվկեանու նըման,  
10 Կանթեղէ ի վառ, ի քո ժաղկաստան:  
Երեսդ արեգակ, լուսին ի լրման.  
Պայծառ՝ անարատ. ե'կ ի մեր պաղչան:

Ակռադ մարդարիտ սպիտակ շարման,  
Պիլպիլն քաղցր երգէ ի քո վարդաստան,  
15 Բերանդէ անուշ նէպաթի նըման,  
Ինչպէս մեղը ի ծօր. ե'կ ի մեր սահրայն:

Լեղուդէ համեղ քան զգինի նըռան,  
Զմայլեցայ այժմիկ ի քո այգեստան:  
Դունչդէ գեղեցիկ բոլորանըման.  
20 Շնորհատիպ պատկեր. ե'կ ի մեր սարայն:

Շրթունքդէ շէրպէթ, շիրին շէքէր լապ,  
Կաթեալ ի սիրտն իմ. ե'կ ի մեր սեղան:

Երամք երկնային թռչնոց խմբեցան,  
Հաւը մեր կանդ առին յեղերդ զանազան,  
Հնչեն, կարկաշեն, երգեն քաղցրածայն,  
Քեզ հարցմունք լինին ու կան հայցական:

- 5 Հեռուստ՝ և ի մօտոյ կան քեզ փափաքման,  
Վախեն մերձենալ՝ շրլինին կոխան.  
Ճար շունին գալոյ տեսոյդ դէմ գոշման,  
Քեզ երգս յարժարեն յոյժ աղերսական:

- Փոքր մի տուր համբեր առ մեզ օթեան.  
40 Եղիր դու մեզ հիւր, մուտ մեր յանդաստան,  
Քեզ ծառայ լինիմք, լե՛ր ասպնջական,  
Ի խորոց սրտէ կամք քեզ մաղթական:

- Գիտեմք շատ ունիս խնդրող սիրական.  
Որ յորդոր ընթաց կաս ի ծիծաղման.  
15 Մեզ այ, փոքր մի սէր տուր, ա՛յ սիրական.  
Ա՛յ սիրու պատճառ, սիրոյ շտեմարան:

- Ա՛յ ջուր բարերար պասքելոց արբման,  
Խղճա՛ կանանչիցդ, որ կան նիկեարան,  
Նոքա գլխիկոր թարշամեալ ողբան,  
20 Դու ծիծաղելով ծաւալ ծածանման:

Սաւալի՛ր յայդիս, պարտէզ՝ և ի պաղչան  
Զուր տուր այս ծաղկանց, որ քեզ ծարաւ կան  
Խղճա այս տնկոցս, ոռոգեա՛ զհամայն,  
Ապա թէ երթաս ծաւալ ծիծաղման:

25 Խսնաբհեալ իջի՛ր ի մեր բուրաստան,  
Որ հասրաթով ինթիղար եղան,  
Պատուեն, մեծարեն քաղցր հոտով բուրման,  
Դու ծալի՛ր ծաւալ ծիծաղ ծածանման:

Մանուշական խղճա՛, վզիկն է կեռման.  
30 Նօնօֆար ծաղկին երեսն է դեղձան,  
Նոքա թառամեալ քեզ հային մնան,  
Դու ծափ զծափի ծփիս ծաւալման:

Յերկնից երեսէն ամպերքն փախան,  
Արեն ծագեալ քեզ պայծառ վրան,  
35 Պատեսոց ինդութիւն, սրտիկս է դողման,  
Դու ծիծաղ ծածանիդ ծալ՝ ի ծածանման:

Մառախուղն կորեաւ, որ մեզ էր շարկամ.  
Իմ սիրտս լցուաւ արենվ զարնան,  
Երբ ցուցեր զերեսդ զարդարեալ փայլման  
40 Ծիծաղ ծածանիդ ծալ՝ ի ծածանման:

Սէր մեր ի հետ քեզ կայ, որ կայ ծրարման  
Կրկին նորոգեմք, ա՛յ իմ սիրական.  
Ես կարօտ կայի տեսոյդ փափաքման,  
Դու ծիծաղ ծալիս ծաւալ ծածանման:

45 Ես եմ քեզ պասքեալ յոյժ ծարաւական,  
Տուր ինձ զքո մաքուր կաթըդ, որ բաղձամ,  
Դու ընթացք առնես ի յորդորական,  
Ես փութամ հետոյդ ու կարօտ մնամ:

Դու խաղաս, փութաս ի յորդորական  
50 Զսիրտս ի քեզ քաշես տանիս ըղձական,  
Հոգեհան եղաւ նա զերթ մանէման,  
Ճոճալով ճեմես, սիզաս ճոխական:

Չայնիդ եմ փափաք, տեսոյդ կու բաղձամ,  
Քո անուշ խօսիցդ սրտիկս է դողման,  
55 Դու ճեմես, ճոճաս ի նազ սիգական,  
Ես կարօտ մնամ ի քո տեսութեան:

Ոտիցդ հետոց սրտիկս է դողման,  
Այրէ ու լափէ քալքըդ մանէման,  
Դու ընթացք առնես ճոխաս ճոճական,  
60 Ես տապ՝ ի տագնապ այրիմ յանդիման:

Դու գնաս փութով ի յորդորական,  
Իմ խելքս ու խեյալս հետոցդ ըղձական.  
Դու դիմես, զնաս նազով ճեմական,  
Ես ի տեսոյդ այրիմ կամ՝ ի փափաքման:

65 Թէ զայլք չես խղճար շատ ցաւ քո նիզան,  
Խեղճ նաղենի վարդն իմ պատուական,  
Որ եղեր եմ ես տէրտէն սէրկէրտան,  
Դու խթիզայով քալես մանէման:

70 Ես քո խապարիդ եմ լաց՝ ի ֆիղան,  
Դու ծիծաղելով ճեմես ծածանման,  
Ես կու հարցանեմ զվարդն իմ սիրական,  
Դու խթիզայով ծիփիս ծիծաղման:

Գ. Ի ՎԵՐԱՅ ԶՐՈՅ

Ա՛յ ջուր, պասքելոց դու զռվացարան,  
Կարօտով և մ քեղ միշտ ի փափաքման.  
Դու նազես, խաղաս ի յորդորական,  
Սրտակաթ առնես ծալիդ ծաւալման:

- 5 Ակնէդ զրոյց տուր, որ ևս իմանամ,  
Քո օրհնեալ բունոյդ և զքո կայան,  
Միթէ ի ձիւն կայ քեղ ամբարական,  
Սառնաբուժս բխես քաղցր և բարեհամ:

- 10 Ա՛յ դու բարեբուժս բարեաց շտեմարան,  
Ի մեր սիրելեաց թէ ունիս պատգամ,  
Կամ ողջոյն բերիր ընծայ՝ արմաղան.  
Ես քեղ խաղ ասեմ, տաղ և շարական:

- 15 Ա՛յ ջուր, դու լցեալ փառօք դանազան,  
Յաշմէ՝ ահեկէ կաս մեծարական.  
Քեղ յերկուց կողմանց, ուր հետքդ երթան,  
Մի ոտեալք կանգնեալ քեղ ճորտ և պաշտպան:

- 20 Բոյսք և տունկը ցանկեալ ի քեղ պահապան,  
Կանաչ ու կանաչ զղրան ու սայզան,  
Մառք կանգնին յողջոյն քո պերճ ընթացման.  
Խոնարհ զգլխով ճամփին բարե տան:

Շամբի եղեգնայք ծափ զօսափի տան,  
Քեղ երգս յօրինեն պատիւ ընթացման,

Քեզ պտղաւէտ բոյսք զպտուղս ընծայման,  
Թօթափին ի քեզ շնորհուկս գալստեան:

25 Հոդմը քաղցրաշունչ քեզ և երգարան,  
Ծաղկունք զհոտ անուշ բուրումն քեզ տան,  
Ու մանրիկ ցողով վարդէջուր քեզ տան,  
Դու մէտ վէտ ի խաղ լինիս մանէման:

30 Ծաղկապըսակիս ծառ զարդարական,  
Որ կարգաւ յեղերդ կանգնեալ փնճական,  
Ի պատիւս նոցուն խաղաս մանէման,  
Ծալիս, ծաւալիս ի յորդորական:

Գաղանք՝ ւ անասունք, սեռք աղջի մարդկան,  
Ծարաւ քեզ դիմեն, սրտիւ զովանան,  
35 Զաղտս համայն սրբես դու մաքրողական,  
Զարարիշդ օրհնեն և միշտ գոհանան:

Դ. Ի ՎԵՐԱՅ ԶՐՈՅ

Ա՞յ ջուր յորդախաղ դետոյդ,  
Յորդական գետ յորդորական,  
Ա՞յ ջուր ճոխական ընթացք,  
Ո՞ւր երթաս յորդախաղական:

5 Ա՞յ ջուր, քեզ հարցունք ելի,  
Քո գնացքդ է վաղվաղական,  
Էջքդ է ի լերանց բարձանց,  
Ո՞ւր դիմես այդպես փութական:

10 Ա՞յ ջուր, դու պարծանք ձորոյս,  
Փառք դաշտիս մերոյ զարդական,  
Ասա՛ ինձ ո՞ւստի կուգաս,  
Կամ ըշտապ ո՞ւր ես գնացական:

15 Ա՞յ ջուր դու զըւարձադէմք,  
Եւ պատճառ երկրիս շինութեան,  
Տեսիլդ է ուրախ ֆէրահ,  
Եւ քո քայլքդ է ճարտարական:

20 Ճանփաքդ է յերկար թէ կարճ  
Կամ հանգիստ փողոց գալստեան,  
Կամ որ ի պայծառական,  
Դու բխես քաղցր և բարեհամ:

Որո՞յ ես դու սպասաւոր,  
Ո՞ւր վարես տանիս շուտ պատգամ  
Ոտքդ է անարգել, ի մեզ  
Վաղվաղես միշտ միշտ յօրդորման:

25 Քանի աւուր է քո ելք անցքդ  
ի մեզ որ կաս ընթացման,  
Միայն զերեսդ ցուցեր փութ  
Անցնիս զու անպատասխան:

29 Զծաբաւ լցեր զու մեր,  
30 Մեզ ձկոնք բերեր՝ և արմաղան,  
Գնա՛, ճամբարդ ի բարի,  
Բարերար բարեաց շտեմարան:

34 Հաղար զենեհար տամ քեզ,  
Ա՛յ օրհնեալ զուր բարեհամ.  
35 Ուր երթաս բարե տանիս,  
Ուր զտնուս մեզի սիրական:

ի մէնջ մատուացես յողջոյն,  
Եւ ասես կան ի յողջութեան,  
Նստեալ յեզերս իմ խնդան,  
40 Միրելեօք մէճլիս՝ և սէյրան:

3իմ ձայն ընթացից զունոյ  
Եղանակս բերեն ձայն առ ձայն.  
Գեղգեղեն տաղս վայելուշ  
Սո ձայնի գնացից իմ սաշման:

45 Մերթ սաշեն խոսրովային,  
Բեն կորճայք թնթիւ բարձրաձայն,  
Մերթ ի ստեղական ոճիւ,  
Հաւ ու հայ ծնկեր դիպական:

50 Յորդոր գնացիցս հանգոյն  
Նուագեն յոյժ յարմարական,  
Հրճուին ի տեսս և յընթացս,  
Եւ խնդան ի խաղս իմ՝ և ի ձայն:

Ես զիւրեանք ուրախ առնեմ,  
Ճոճալով ճեմեմ և խաղամ,  
55 Սափ ըզծափի հայեալ ճեպեմ,  
Երդակցել նոցա քաղցրաձայն:

Նոքա յիմ խաղուց, պարուց  
Եւ ձայնից ի խրախութիւն գան,  
Նոր երդս սկսեալ վասն իմ  
60 Զիս դովեն ի ձայն դովասան:

Ե. Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Արեգակն որ է ստեղծեալ յարարչէն,  
իւրում գործն երթայ,  
Քեզ է սպասաւոր պատրաստ  
Միշտ տալով զբարիս քեզ ընծայ:

5 Լուսինն ել և էջս առնէ՝  
Ուներութն ման մանկանայ,  
Երբ ծերութեան ի նման  
Բոլորեալ տիպըդ կերպարան:

10 Լալ ակն ու գոհար, անգին  
Եաղութն ու զմրութն հընանայ  
Այրի, կոտրատի, փշրի,  
Դու աղնիւ և գեր քան զնոսա:

15 Միանելիք անուշունք,  
Առժամայ է հոտըն նոցա.  
Դու զցայդ և զցերեկ,  
Հիւանդն որ ի քեզ դեղի գայ:

20 Մերվին սինավպէր շիմշատ,  
Որշափ գովք նոցա վրայ կայ,  
Հասակդ երբ ի շարժ ելնէ,  
Նա յաշխարհս նորա գին շիկայ:

Վարդն որ ի կանանշ տերես  
Ինքնազոյն կու պայծառանայ,  
Շուտ մի թառամի, թափի,  
Քո տեսիլդ միշտ գեղեցկանայ:

25      Բուրաստանեացն շուշանք,  
Եւ ի ջուրս, որ վայելչանայ,  
Գին չեն մաղ մի թարթիշիդ  
Վեր ի վայր, որ տարբերանայ:

30      Սովուն քաղցրաօղ քացմամբ  
Որ երկիրս ճոխութեամբ ցնծայ,  
Գին չէ ծով ծով աշերուդ՝  
Քո սիրոյդ, որ միշտ քաղցրանայ:

35      Սիրամարգ հաւն ու կաքաւ  
Պիւլմիւլ տուտիքն ու հումայ  
Գին չեն վարդաթերթ շրթանցդ  
Ըղընկացդ մատանցդ վերայ:

40      Արեգակն ու լուսընկայն  
Ջոր ասի ի զլխու վերայ.  
Բերան բանալուդ փոխան  
Միծաղելդ ի ծնկիս վերայ:

Լուս երեսդ երբ խոնարհի,  
Լուկ ղընես ի բաղկիս վերայ,  
Գիրկ ու ծոց սրտաղուարթ  
Նէ քելամ մեռելս ողջանան:

Զ. ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՐԱԿԻՋՄԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՄՈՅ» ԳՈՐԾԻՑ

I

Եղել յանկարծակի թնդիւն ահեղ, որպէս զի հրաձգութին գոլ ի տեղւոց յայսմիկ ուստի ի կրպակէ առն փանաքի սանտխճոյ միոջ հուր կայծեալ որ է ի հիւսուսոյ կոյս առ ի յեղբէ ծովուն Պոնտոսի՝ որոյ անուն տեղւոյն Այասմայ Ղափի յորշորչի, զոր վառեալ հրոյն անտանօր սաստիկ արծարծմամբ և իսկոյն կէտի յարեաւ հողմ յուժգին առ ի յօժանդակութիւն հրոյն, վասնորոյ վերացեալ յոդս բոցն բարկութեան և եռայր որպէս զձարպով լցեալ և տոշորէր զշէնս ներքուստ սահմանացն և պայթեալ զպարսովօքն արտաքոյ և մրեղէն բոցով ներքուստ և արտաքուստ զշինուածս վաճառուց կրտպակաց պախալովք, և պազարձովք, և քերէստէճովք, զարուճովք և թուֆէքճովք, և այլ արհեստաւրաց քեարկեահովք և գործատեղօք ի վայրկեան ժամանակի դաշտեցուցանէր և ի ներքուստ վազեալ, որ առ ի վերայ քաղաքին կծկծեալ բարձրացեալ երկուց բազկաց կուսիւ և իսկոյն զօճախ ենկիշէրոցն, որ Աղա Ղափուսի կոչիւր, Համայն շրջապատ փայտիւքն գետնացուցանէր. և ոչ կարացին այնքան զօրք դրանն այնմիկ և կամ յալլուստ հաւաքեալքն մասն ինչ փայտի փրկել և շինուց ինչ օգնել և կամ բռնակալքն իշխանօք հանդերձ ոչ կարացին պարտել զառաջադիմութիւն հրոյն կամ մերձենալ կարել:

II

Անդր և լինէին կալանաւորս արանց վեցից համազգի նոցունց (ենիշէրիներուն) զորս վասն վնասու իմիք եղեալ ի բանտի. և յորում ժամու գայ հուրն ի վերայ աղարանին այնմիկ և նոցա դիտեալ աղաղակէին աղատել և ոչ լուան որք ի դրան անդ էին: Որք և բողոք բարձեալ որպէս ի միջոէ բերանոյ և ասէին...

է. ԳԱՆՉ ԱՍԱՑԵԱԼ ԵՐԵՄԻԱՅԻ Ի ՎԵՐԱՅ ՄՈՐՆ ԻՒՐՈՅ  
ԽՃԺԲ ԹՎԻՆ ՀԱՅՈՅ, ՅՈՐՈՒՄ ԱՄԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԼԻՆԻ  
Ի ՔՐԻՍՏՈՍ: ՆՈՐԱ ԵՒ ՄԵԶ ԵՒ ԱՄԵՆԵՅՈՒՆ ՏԵՐ  
ՈՂՈՐՄԻ, ԱՄԷՆ

Երգ ողբերգական ողբոց արժանի,  
Ծնօղիս կարոտեալ և փափաքելի,  
Վիրօք խոցեալս անբըժշկելի,  
Հարեալ ի սիրտ յաւէտ ցաւալի:  
5 Թէ խումբ խմբին բժշկաց ճարտարի,  
Զկարեն առնել դեղ՝ ըսպեղանի,  
Թէ վիշտ յերկրէ խիստ ի յիւրազնի,  
Գոլ անընդունակ ըստ Յովհաննու բանի:  
Ոչ թէ միայն վեհիցն յանարդի,  
10 Այլ և նուաստից բանիւք զազրելի,  
Հստ Յորաց փորձին սմա յաւելի.  
Առ բժշկաց մեղանշականի:  
Զարիք ածեալ խայթողացն օձի,  
Որպէս զվիշապ խիստ թիւնաւորի,  
15 Յուրաստ գոլով գործոցըն շարի,  
Մի՛ գանգատիր զինչ եղև քեզի:  
Խոհեմն լնոյր զամէնն ի սրտի,  
Աղօթս առնէր առ Տէր յուսալի,  
Այլ համբերէր նա ամենայնի,  
20 Յոյս՝ ապաւէն զԱստուածըն բարի:  
Զի երկնչէր խօսել նոցա մի,  
Եւ ամաչէր յայտնել մարդոյ մի,  
Մինչեւ հՀան ի սիրտ՝ և ի լեարդի,  
Այնքան լրցաւ վայթեցաւ յերկրի:

25 Ահա՛ հանգո զննչեցեալս ի քեզ  
Սուրբ Հոգի Աստուած: Աղա:  
Թամեալ շարեացըս նա վշտացաւ,  
Անձն ի նոցունց կարի մաշեցաւ,  
Երակք սրտին յար ցամաքեցաւ,  
30 Զօրեղութիւն ուժոյն նուազեցաւ,  
Յոյսն ի մարդկանց բընաւին բարձաւ,  
Զի ի սփոփանս յումեքէ ոչ գտաւ,  
Փոխան պատուոյն նախատ ընկալաւ,  
Փոխան փառացն գաղտառիցն հարաւ:  
35 Զաշխարհս սուտ անտի իմացաւ,  
Նանիր՝ ու ունայն յիմաստնոց ծանեաւ,  
Էնդ այնպիսեացն խորհուրդ ոչ առաւ,  
Ի յանզգամս ոչ մասնակցեցաւ:  
Յուրաստ լինողքն գործոցն անիրաւ,  
40 Գարշ՝ ատելի սմա թուեցաւ,  
Գաղտ զընկերէն յորմէ բան լուաւ,  
Բացէ ի բաց վարել ջանացաւ:  
Էնդ ագահ սրտիցըն հաց շկերաւ,  
Էնդ հաւատացեալս երկրի յար նստաւ,  
45 Զատելիս Տեառն ատել հաճեցաւ,  
Եւ թշնամեաց վերայ մաշեցաւ:  
Զի ծնունդ սորա բախտաւոր գրտաւ,  
Սնունդ սրբակաց շնորհաւորեցաւ,  
Անումն տիոյն առաքինացաւ,  
50 Էկլէսիա խրատից բերկրեցաւ:  
Խմաստութեան յոյժ փափաքեցաւ,  
Սուրբ օրինացն հպատակեցաւ,  
Առաքինեացըն հետեւեցաւ,  
Լոյս իմաստից հետոցն ընթացաւ:  
55 Յօրէնըս Տեառըն միշտ խորհեցաւ,  
Պըտուղն անթափ յերկինս գանձեցաւ,  
Զորդիսն ի յինքն նմանել փութացաւ,  
Տեառն Աստուծոյ հաճոյ ցանկացաւ,

Յամենայն օր խրատուց շձանձրացաւ,  
60 Ընդ ամբիծս լինել փառօք պարծեցաւ,  
Յիստեանց միայն ոչ կաթն շամբեցաւ,  
Այլ առաւել օրինօք լցոցաւ:  
Վարժարանիս սենեակն փակեցաւ,  
Այսօր եղաք որբերս սուզ՝ ի ցաւ:  
65 Ահա՛ հանգո զննչեցեալս և այլն:  
Երբեմն նստէր առ իս մերձակայ,  
Եւ գանկատէր զանցեալսն որ ի նմա.  
Ահա՛ այս է օրէնք յարակայ,  
Զի յամենից գործ պահանջէ նա:  
70 Վճիռն անդարձ է, որ առ մեզ կայ,  
Հասեալ երթամ ի հողս նիւթակայ,  
Լալով ծնօդէս ի յերկիր անկայ,  
Եւ ողբալով ի հող թաղեցայ:  
Զդառըն մոխիր որպէս հաց կերայ,  
75 Եւ զըմպելիս արտասուս արբայ,  
Բէպէտ փոքր մի խնդալ յարդեցայ,  
Դառն ու լեղի ճաշակ ընկալայ:  
Յունայն կենցաղս ոշինչ շահեցայ,  
Զի յամենից բաց հրաժարեցայ,  
80 Ի մեռանելս քեզ կտակ լինայ,  
Ա՛յ նազելի որդեակ երեմիա:  
Լալով զուլաց յաշխարհի վերայ,  
Զաշխարհս ի յողբ և ի լաց շարժեա,  
Զգիր բո յաշխարհ հեռի առաքեա,  
85 Հոշակ առնել սիրելեացդ որ կայ:  
Վատ և վատթար բախտի ես ծընայ,  
Անշնորհաւոր ժամն պատահեցայ,  
Դըուար աւուրց ես հանդիպեցայ,  
Անգառնալի ճանապարհ անկայ:  
90 Վերջինս այս էր, որ յանկարծ դիպայ,  
Ի խիստ մահուն ես վըտարեցայ,  
Մարմինս ի հող տըգեղ լուծեալ կայ,

Հոգիս յԱստուած որ ետ լոյս ըղնա:  
Արդ պահանջէ՝ լոյս հոգիդ ո՞ւր կայ,  
95 Ընդէ՞ր ներկեր խաւար մըթակայ:  
Ահա՛ հանգո զննջեցեալս և այլն:  
Մարց իմ և քերց աղէտս, որ պատմեցաւ,  
Հարց և եղբարցդ, որք աստ խմբեցաւ,  
Կզմեռելոյս լացն, որ ձեզի արաւ,  
100 Բազմապատիկ միտք ձեր զայն ծանեաւ,  
Տե՛ս զի խորհուրդն այսօր ցրուեցաւ,  
Եւ իղձ սրտին մինն ոչ լըրացաւ,  
Մատաղ տիոյն, որ իւրն ոչ յանգեցաւ,  
Դուստր և որդոցն կարօտ մնացաւ:  
105 Այսօր ի գրի ներքնումն թաղեցաւ,  
Ի ստուեր մահու յաւէտ ծածկեցաւ,  
Առիւծն մեռաւ, կորիւնքն զերեցաւ,  
Ծառն գոսացաւ, պտուղքն խամրեցաւ:  
Գառներք մաքոյդ սարէ սար փախեաւ,  
110 Անպիտանից ձեռքըն տանջեցաւ,  
Բախտ մեր շնորհացն այսօր հեռացաւ,  
Անբախտից ոտք ի կամս ընթացաւ:  
Վրանի փառացն վանդակն կտրեցաւ,  
Սառնամանեաց անձինս շըրտացաւ,  
115 Ծածկոյթ տան մեր ի ծւէնըս հերձաւ,  
Արեւակէղ բերանք սաստիացաւ:  
Խաղաղասէրն մէնջ յաւէտ բարձաւ,  
Եւ մայրական աղէտն կորացաւ,  
Որոմնացանք համարձակեցաւ,  
120 Յրուեալ ըզմեղ արդ տեղի գըտաւ:  
Բամբասասէր լեզուք յատկացաւ,  
Որոցս վերայ խիստ արձակեցաւ,  
Ոխ և նախանձ աղմկովք յայտնեցաւ,  
Զժամս և զաղօթս նոցա դատ յարեաւ:  
125 Ահա՛ հանգո և այլն:  
Իմ քաղցրիկ մայր, զգլուխդ մէկ ի վեր ա՛ռ,

- Ճուղապ մի տուր Քրիստոսի համար,  
 Միթէ զիտե՞ն կամ հասու եղա՞ր  
 Զողբս և զաղէտս մեր ցաւագնաբար:  
 130 Ե'լ ի զրոյց՝ Աստուծոյ համար,  
 Զշարիօս լեզու պապանձէ ի յար,  
 Ժողովելոցս կարծիս դու վեր ա՛ռ,  
 Թէ զոն արկածք՝ խաբաննա ճարտար:  
 Զըրոյց բազում առնեն քեզ համար,  
 135 Ո՞վ զքեզ ըսպան՝ արա՛ դու մեզ ճառ,  
 Այնք որ տային խոց կսկծաբար,  
 Վըրէժինդիր եղան քեզ համար:  
 Ոչ թէ ի հոգս քո ցաւակցաբար,  
 Այլ բընական կամսն իւրեանց՝ և ի փառ,  
 140 Բըմիշկ ցաւիչ և վընասակար,  
 Եւ յորդորիչ շարեաց գոլ ի յար:  
 Թէ ճշմարիտ և սուտ մարդոյ բար,  
 Աստուած դատող պահանջէ համար,  
 Զի ի բանից լինի մարդ արդար,  
 145 Գործքն յայտնէ զքեզ բարի և թէ շար:  
 Թագաւորաց չէ մնացեր աշխարհ,  
 Ճարտասանից՝ իմաստնոց յարմար,  
 Թէ զմարդ խաբես լեզուօքըդ ճարտար,  
 Աստուած պատրաստ դատաւոր արդար:  
 150 Ահա՛ հանգո և այլն:  
 Ա՛յ իմ ծընօղ ելնեմ քեզ խնդիր,  
 Ո՞ւր երկիս՝ տո՛ւր մեզ ըզքո ճար,  
 Ա՛յ իմ սիրուն և նեցուկ սրտի,  
 Ո՞վ զքեզ խոցեաց խոր կսկծաբար:  
 155 Ա՛յ խընամիչ և դաստիարակ,  
 Ո՞վ ցաւեցոյց զքեզ, յէ՛ր խոռվեցար,  
 Ա՛յ պատուականդ՝ յէ՛ր անպիտանացար,  
 Եւ դառնալոյ բնաւ շունիս դու ճար:  
 Ո՞ւր զընացիր, որ յետ շես դառնար,  
 160 Մի՞թէ իսկի շես եկեալ յաշխարհ,

- ԱՇ թէ գիտէիր լաց մեր և շիւար,  
 կինէր թէ քեզ մեռանել չկայր:  
 Ի տեսանել զհրեշտակն շարիր ճար,  
 Պատրաստ տվեր թ' ահա զհոգիս ա'ն,  
 165 ԱՇ բարեշունչ, բարեսուն բերան,  
 Յանկարծ մահուանդ ասա' մէկ պատճառ:  
 ԱՇ բարեսէր օրինաց սրգի,  
 Ո՞րսկէս առին զհոգիդ ուժգնաբար,  
 ԱՇ թ' երբ յիշեմ զտիսդ և զկերպարան,  
 170 Շարժեալ դղրդի զօդուաքս հաւասար:  
 ԱՇ գեղեցիկ աշեր ծովային,  
 Ի տեսնելնէ յէ՞ր խաւարեցար,  
 ԱՇ ունգունքդ, ուր սուրբ լսելիքդ  
 Ապականեալ գարշահուեցար:  
 175 ԱՇ գեղեցիկ ժրագլուխ տիկին,  
 Ի սիրելեաց յէ՞ր պակասեցար,  
 ԱՇ բարեշահ տանըդ տընաշէն,  
 Այսօր տանէդ ի մահ վարեցար,  
 ԱՇ շըշամայր կաթին և բարեաց,  
 180 Մատադ հասակաւդ յէ՞ր դրդըրդեցար,  
 ԱՇ պատուական մայր իմ նազելի,  
 Յէ՞ր քակտեցան ոսկերքդ յարէ յար:  
 ԱՇ իմ ծընօղ փափաք եմ տեսոյդ,  
 Կերպարանօքդ ի հող մաշեցար,  
 185 ԱՇ վաղակտուր հասակ մանկամեռ,  
 Ընդէ՞ր փութով մեզ բերեր դիժար:  
 Ահա' հանգո և այլն:  
 Յորդոյս բողոք առ քեզ ելանէ,  
 Քաղցուենի մայր մեռելոց կարգէ,  
 190 Այլ ո՞վ ըզմեզ արգահատեսցէ,  
 Այլ ո՞վ ըզմեզ զըթով գգուեսցէ:  
 Ի վերայ մեր այլ ո՞վ ցնծասցէ,  
 Ի ծոց սիրոյն ո՞վ հաւաքեսցէ,  
 Կարկատան մարք զհաճոյս իւր դիտէ,

195 Ի ՓԻԱՌԱ և ի կամս յօզուտ իւր ճեմէ:  
Խաղաղական վասն Աստուծոյ չէ,  
Ճշմարտութիւն բնաւին չգծէ,  
Զի խօսքն յայտնէ գործքըն զինքն օրհնէ,  
Սիրտըն Աստուծոյ գործ է որ քննէ:  
200 Զար թէ բարի ո'վ որ որ առնէ,  
Արկցուք յԱստուած զի նա քննող է,  
Զինչ սերմանէն՝ այն է զոր հնձէ,  
Ըստ գործոց մարդկանց Տէր հատուցանէ:  
Բայց զի՞նչ շահի շարսիրտն ի շարէ,  
205 Զարկամ, շարխօս, որ ըզհոգին սկ է,  
Զի խարբալեալք ի սատանայէ,  
Կորուստ անձանց իւրեանց գանձեսցէ:  
Դալարն թէ յայս շարի պատահէ,  
ի շար խըռիւգ արդ հուր բորբոքէ:  
210 Զհամայն գանկատ ասելոյ ժամ չէ,  
Որպէս և քոյդ ի Տէր յայտնի է:  
Հոգովդ վասն մեր միշտ բարեխօսէ,  
Փրկիլ անփորձ աւուրըն շարէ:

Ը. ԱԳՈՒԽԵՑԻ ԽՕՃԱՅ ԽՕՄՐՈՎԻ ՄԱՀՈՒՍՆ, ՃԱՌ  
Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԻՆՉ Ի ՆՈՐԻՆ ՎԱՂՃԱՆ, ԱՍԱՅԵԱԼ  
Ի ԽՆԴՐՈՅ ԱՄՈՒՍՆՈՅ ՆՈՐԻՆ

(Զգանձն և զողբսն երդողն թէ յարմարեցէ ըստ  
ոճին զեղանակն՝ նա՛ մէրհէպա Տեառն շնորհիւ):

- Եկայք եղբարք աստ ժողովեցէք,  
Հնոր եղեալ իրքս դուք նոր իմացէք  
Գիր՝ և օրինակ զպատմութիւնս առէք,  
Յերկրէ յերկիր դուք նոր ծանուցէք:  
5 Զնոր մեռելոյս գանկատն լլսեցէք,  
Թէ ի՞նչ խղճերով մեռաւ՝ մէկ հարցէք,  
Սուտ՝ և անցաւոր՝ զաստըւրս ասէք,  
Նանիր՝ ունայն տիր զայն ստուգեցէք,  
Զսա նոր տեսէք ձեզ ողորմեցէք,  
10 Որ խեղճ հոգւոց ձեր զրկանք շանէք,  
Թագաւորաց չէ մնացեր՝ գիտէք,  
Խան և սուլթան հող դարձած տեսէք,  
Գեղով մանկտիք ի հող մաշեալ լսէք,  
Ի աղվորք ա՛հ ա՛հ կանչողաց հմուտ էք,  
15 Շատ զարիպի դուք հանդիպեր էք,  
Ա՛հ հար, վա՛հ մար զճշողսն ճանաշէք:  
Բազում պանդուխտ՝ և անտէր տեսեր էք,  
Եղբօր և որդւոյ թալկըտողքն գիտէք.  
Մէկ այլ զխօնայ Խօսրօվս տեսէք,  
20 Ի հող լուծեալ փըտեալ իմացէք:  
Տէր ողորմեա սոյն ննջեցելոյս,

Բարի հայցմամբ լըսօղ ժողովոյս:  
Աղաշեմք: Լուր Տէր և ողորմեա՛:  
Բոտեալ զարիսս յԱգուկաց յերկրէ,  
25 Գայ ի տեղս թէ վաճառ ինչ շահէ.  
Տէրն զինչ կամի, զայն կու յաջողէ,  
Քանի մի փող դատեալ պատրաստէ:  
ի Վալիտէ խանն բնակութիւնս առնէ,  
Որբոց 'ւ այրեաց գութ մեծ ցուցանէ,  
30 Փորձանակրաց ողորմի 'ւ օգնէ,  
Եւ զկարուեալս դատարկ չը դարձընէ:  
Եկեղեցեաց յիշատակս դնէ,  
Եւ զքահանայս տըրօք մեծարէ  
Կարդապետաց ի սէր պաշտպանէ,  
35 Մի զի համբաւն ի մեծն ժամանէ.  
Թըղթով զըրով զողոյնն ընդունէ,  
Օր ըստ օրէ օրէնութեամբն աճէ:  
Մեծ խօճայից ի պարտս մըտանէ,  
ի համացեղս փարթամ զցոյցս առնէ:  
40 Ի վէզիր խանն զօտայսն ջուխտըկէ,  
Ճորտ պաշտօնեաց իւր կարգաւորէ.  
Բարեաց շարկամն հեռուստ տեսանէ,  
Զսա ի պատոյն գըլխիվայր առնէ:  
Ողորմեա՛ Տէր սոյն ննջեցելոյս,  
45 Սուրբ մաղթանօք լըսօղ ժողովոյս:  
Աղաշեմք: Լուր Տէր և ողորմեա՛:  
Եղեւ պատճառ խարդախութեանց շար,  
Որ զբարունակս ետես ուռճաբար,  
Զի որ ծաղկեալ ի գոյն զուարթարար,  
50 Եւ պըտղատու մորճս վայելշաբար:  
Եհաս թափեաց զծաղիկն խամբարար,  
Եւ ըզպըտղովքն գետնով հաւասար.  
Զէնք թըշնամոյ հընոյն շարարար,  
ի սա հաւքին բըժիշկք մահարար:  
55 Խառնին ի մէջ բանի վնասակար.

Ղայրէթ է քեզ նամուսով ճարտար.  
Խօճա՛յ, խօճայ, դու ես մին խիկար,  
Այս մասշահաթս ի քենէ վճար:  
Ոչ թէ ցերեկն այլ զգիշերն ի վառ,  
60 Բորբոքէին զըրգեալ անդադար:  
Սուտ բարեկամք ցուցեալ շահարար,  
Գունեալ զոսկին, որ ի պղինձ դառնայր:  
Նախնեաց հին խօսք է մեզ օգտակար,  
Զրոցքն ի զետին անկարծ անհընար.  
65 Միամբաին վա՛յ եկեալ հազար,  
Հետ երկումտին, որ դատած զըտար.  
Ու մարդ մարդոց քահանայ տեսար,  
Երբեմն լինի հասեալ Բելիար:  
Ողորմեա՛ Տէր սոյն ննջեցելոյս, և այն:  
70 Մուրատ Մագսուտ սորա Մաաշին,  
Զաշքերն տընկեալ հազըր լօխմային,  
Հօտն բուրէր քաղցը խօճի մաթպաղին,  
Վասն այն մըտնել խարել շանային:  
Գապունիս փիլաւն դովելն լըսէին,  
75 Շատք ցանկ աշնայ լինիլ ծըկլային,  
Եազշի կեռնտէ ի դուռն շըփուէին,  
Խօշամէտճիքըն շատանային:  
Մանահար ու կընքահար լինէին,  
Խօճին յօտան տիվան առթէին,  
80 Զհացն ուտէին, զգինին խըմէին,  
Փոյթ դտօլէստանն ի շուռ ածէին:  
Կենդանութիւնն լինի խօճային,  
Փառք ու պարծանք դու հայոց ազգին,  
Սեղանդ իլի զըրմընի լինին,  
85 Մինչ ի յաւուրըն դատաստանին:  
Մէկ օրն հազար լինի պարոնին.  
Պու ֆէլէքտէ պիր խօճայ սէնսըն<sup>1</sup>.

1 Այս աշխարհում միակ խոչան ևս դու:

Սըհէնց պիտի լինիլ ասէին,  
Զանք ու զայրէթ նամուս ձեր ըովին:  
90 Գործո որ եզրի ձեռամբ խօճային,  
Մինչ յաւիտեան պիտի որ յիշուին.  
Եւ հմիրդէ մին հէմթա սորին<sup>2</sup>,  
Զբարեբարոյն ընդ լուծ սորա եղին.  
Որ նա յառաջ փճացաւ վշտագին,  
95 Զարքաշ ևօսրովս ներքոյ ֆէլէքին:  
Ողորմեա' Տէր և այն:  
Ինչ սէրմայէ ունէր ընդ գործն ապուեաւ,  
Ի այլոց մալի քէֆիլ զսա առեալ.  
Որ ձեռնատու այլոց սա էր լեալ,  
100 Հայոց՝ տաճկաց արդ պարտատէր լեալ:  
Եղբայրն սարխօշն, որ յերկրէն եկեալ,  
Նա յիւր զըլիսոյն վաճառական լեալ,  
Զնոյն տառապանս զեղբօրն տեսեալ,  
Գործն յերկարեալ ցաւն երբ խստացեալ,  
105 Օր ըստ օրէ յետ՝ ւ առաջ շեկեալ,  
Սարխօշն կսկծով մանկամեռ եղեալ,  
Եւ զսէմայէն և զնորա հանեալ,  
Ի ծախ կըսույն խարճէին շըռայլ:  
Հեղեղն յոտից այժմ ի ծունկն հասեալ,  
110 Սուտ բարկամքն դեռ ի ջան շարժեալ,  
Մինչև ի մէջքն տեսին զի ելեալ,  
Փիլաւիօրներն դեռ այլ բանսարկեալ:  
Մինչ ի պօղազն հեղեղն վերանցեալ,  
Լօխմայախօրներն սուտ ումետ տուեալ,  
115 Ի հաւայէն դրամ ցոյց տուեալ,  
Ֆիլան ֆիլան տեղաց պատրաստ դալ:  
Մինչ ի բերանն պըտոյտք ջուրցն մըրրկեալ,  
Անօգնական զԽօսրօվս խեղդ արկեալ:  
Ողորմեա և այլն:

2 եվ հմիրդէն սորա ընկէրն է:

- 120 Այսմ խեղդելոյ պատճառն լեալ մասաւ,  
Զի ամենայն աշխարհ են լուեալ,  
Ամենայն ապդ զայս տեղեկացեալ,  
Արևմտեան՝ ւ արենեան այլ:  
Մինչ Հնդուստան՝ ւ ի Ֆրանկըստան այլ,  
125 Կագ՝ ւ ի կըոիւ վասն այսմ որք մըխեալ,  
ի և Զ տարօր յայս տապեալ,  
Տառապանօքս զբաղեալ տատանեալ:  
Պարտք և տոկոսք սոցա շատացեալ,  
Որքան իւրլրտեալ՝ ա՛յնքան ծանրացեալ.  
130 Յետ Քէֆեցուն մահուն առակ այլ,  
Յետինն չար քան զառաջինն այլ,  
Ոմանք ուրոյն բարեկամ դարձեալ,  
Զծոմկ պագէին սորա՝ ւ աղաշեալ,  
Զի ի պատիւ՝ ւ ի փառս մեծարեալ,  
135 Որք ի քունքերս պատուարց դեգերեալ:  
Սա զլաւութին նոցա արարեալ,  
Բ անդամ ի փառսն վերածեալ.  
Յսորա տըւեալ զրամն ուրացեալ:  
140 Քան զառաջին բարեկամսն անցեալ  
Նոյն նենգողաց զպակասն այն լլցեալ,  
Զի պատառուն պարտական հանեալ,  
Վկայս զըտեալ՝ կաշառուք պարձեալ:  
Հին քիւֆթէխօրքն ոչինչ մի օդնեալ,  
145 Գըրեն վնուեն՝ թէ պարտատէր լեալ.  
Դիպուածք սորա եռեալեան պատեալ,  
Զբարին տեսողքն թշնամիք դարձեալ:  
Զի զհաց ուտողքն զշարիս են նիւթեալ,  
Սաղիկ վէքիլք վերայ յուրացեալ,  
150 Գատախապիւք նորքն ևս բազմացեալ:  
Սա որ մի էր զինչ պատասխանեալ,  
Շողոքորթիցն հընոցն ատեցեալ,  
Մարդելուզքն արդ ի հեռուստ դիտեալ,

- ՚ի ի գերբելն ի հափս ըզսա արգիլեալ:  
 155 թէ շատ ջանաց զոշինչ մի շահեալ,  
 Զատէֆթէր և զգիր համայնքն խըփեալ,  
 ՚ի ի շաւուշի տանն էր վըշտացեալ.  
 Տես զմեծ իմն որ նոք փորձանք դիպեալ:  
 Մինչ շաւուշի ձեռնէ հափս եղեալ,  
 160 Մին միամօր որդեակ սա ստացեալ,  
 ի ծերութեան իբր այնու սփոփեալ,  
 Գէորք անուն պատանեակ կոշեալ.  
 Իբր խոշաղեղ սրտին այն մնացեալ:  
 Գնացին սև գուժ տարին, թէ մեռեալ,  
 165 Վա՞յ և եղուկ ի բօթն հանդիպեալ:  
 Ողորմեա՛ Տէր և այն:  
 Յայսմ ողբոց սա յոլով արժանի,  
 Որ շաւուշի զոտիւքն շատ զփարի,  
 Զերես գետնով եղեալ, պաղատի:  
 170 Լութի ու քէրէմ արա՛ էհսան մի,  
 Տա՛ր զիս ի հետդ ի տունս անդամ մի,  
 Տեսնում աշօք զմէլիտն իմ զաւկի:  
 Զաւուշն բերէ պահն երեկոյի  
 Ի տուն՝ տեսնով զմահն իւր որդեկի,  
 175 Երբ գայ ի տուն՝ նոյն պահն հանդիպի,  
 Զոր լուանային զիւր սիրուն (որդի):  
 Փետէր զմորուսն՝ զճանկն ի յերեսի,  
 Ծեծէր զզլուխն խիստ ողորմելի,  
 Վայ և եղուկ տայր աւաղելի,  
 180 Խիղճն էր անշափ և կըսկըծալի:  
 Խիստ ամաշէր ի տեսողաց մի,  
 Զաւուշն կանգնէր թէ ի յետ դարձի:  
 Աղիքն գալար առնոյր կըրկնակի,  
 Եւ յետ դառնալն խոց տուգան սրտի:  
 185 Թէ մնայ ի տուն՝ շթողուն շաւուշի,  
 Ընդ մնալն որդւոյն Գէորքի,  
 Փոյթ բնդ փութով դարձնելն շաւուշի,

- Շաղոք բառնալն վայ՝ և եղուկ ծնօղի:  
 Գոռումն գոշումն ընտանեաց լինի,  
 190 Սիրա խարշատեալ բորբոք կըրկնակի.  
 Ի տեսանելն զողբումն Խօսրօվի,  
 Լալով դառնալն ի հափս չաւուշի:  
 Վայ՝ և եղուկ տայր նոյն զիշերի,  
 Նևսէ աւուրցն կոծ՝ և ի հառաշի:  
 195 Ողորմեա՝ Տէրն և այլն:  
 Իսկ թէ մընայր այս միայն տէրտով,  
 Կամ ի հափսէն ելնուլ ինչ հնարով,  
 Օր աւուր վիշտքըն ծանրանալով,  
 Որպէս նախ գրելս հեղեղ առակով:  
 200 Դատախաղքն յայսմ ոչ իսկ խըդճալով,  
 Զհոդին հանել կամին այլ շուտով,  
 Զի շշատացան վճռով այն հափսով,  
 Այլ ի Պատայ ձափէր դնելով:  
 Զի գառնացի կեանքն իւր արեովն,  
 205 Եւ ոչ տեսցէ զարե ցորեկով,  
 Զի մաշեսցի հոգւով և մարմնով,  
 Ի մութ զընտանըն գառնանալով.  
 Զի ժայթքեսցէ զծիւն իւր ծըրարով,  
 Կամ զհին ու զնոր տէֆթէրսն այրելով:  
 210 Բայց չեն թողած զումաշ շուխայով,  
 Կեր ու պատառ ոսկի և արծաթով,  
 Այլ քերելոյ եղունկ ոչ թողլով,  
 Թէ շահիցէր զնենգողսն կաշառով:  
 Անխիղն եղեն զՏէրն ոչ յիշելով,  
 215 Զդատաստանին ահն մոռանալով,  
 Թողին ի բանտն հաշիլ մաշելով,  
 Բոլոր տարի մի տառապելով:  
 Ի շոք ամռան տապեալ տագնապով,  
 Ի ցուրտ ձմերան կծկեալ ծըմրելով,  
 220 Ոչ կեր՝ և ոչ խում պօղազն անցնելով,  
 Սուգ սըգաւոր նեղութեան վըշտով.

Սուլիս սրտին իբր զբոց ծաւալելով,  
Դառն արտասուօք շոմն քաղելով:  
Տէր ողորմեա սոյն ննջեցելոյս,  
225 Բարի հայցմամբ պատրաստ ժողովոյս:  
Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր,  
Աստացուք միաբանութեամբ Տէր ողորմեա:

Ողբ և տաղ վասն մահուան

(«Բարձաւ ի մէնց մեծն Մովսէս» ի նոյն եղանակն ասա'')

Եկ դու հարցիր զմահն Խօսրօվին, էվա՞հ,  
էվա՞հ,  
թէ ո՞րպիսի կեանքն վըճարին, էվահ,  
230 Զի այն ոչ գիտեալ Ճգնազգեցիր, էվահ,  
Եւ ոչ հարանց անապատին, էվա՞հ:  
Զմոխիր իբր զհաց ուտէր ըստ Դաւթին,  
Խառն արտասուօք զիւր ըմպելին,  
Յերեկն ի բոն ոչ դուր անձին,  
235 Գիշերն բողոք դէմ արեին, էվա՞հ:  
Ոչ ցաւ և ոչ հիւանդութիւն,  
Ալ զի մաշումն անհնարին,  
Զի յառաջն էր լաղար անձին,  
Ի բանան հիւծեալ հաշեալ մարմինն, էվա՞հ:  
240 Մինչ մորթն յոսկերսն կըցէին,  
Միայն ոսկերքն երեկին,  
Իմացաւ զմուտն իւր արեին,  
Մեղա՞յ ասէր Տեառն Արարշին, էվա՞հ:  
Ապա խնդրէր ըզսրբութիւն,  
245 Զգէր զիւր աշքն ի յանդէնին,  
Ոչ հեծեծանք և ոչ թառաշանք,  
'Ի ոչ հառաջանք կամ բողոք մի, էվա՞հ:  
Զի տըկարացեալ թուլանային,  
Օդուածքն զինքեանս թողեալ էին,

250 Կազմուածքն լուծեալ ի վաղ վըշտին,  
Անձն անդամօք մաշեալ էին, էվա՞հ:  
Տուր՝ և առ շընչոյն հաղիւ էին,  
Միոյ փըշմամբն քաղէր հոգին, էվա՞հ:

Վասն սուտ բարեկամացն, առաջնոց՝ ոչ երեեալ ի ման  
նորին, յեղաճակն՝ արդ պաղատիմք:

Անողորմից սիրաքն ոչ զիջին, որ զպարտս բազում  
պահանջէին.

255 Արդ զդի սորա հանեալ տեսին, վըճուեալ գըրհալ զմահըն  
սորին:

Ո՞ւր աշ տօստի փօսթի ծանօթքն, եաման կիւնտէ մէկն  
չերեին.

Այսօր դարիպ ո՞ւ անտէր պառկեր, Պատ ձափէրն մէջ  
աւզուին:

Ո՞ւր քիւֆթէխօր սուտ բարեկամքն, զընային ըմպել թաս  
թաս զգինին,

Գիշեր ցերեկ խօշամէտիւք կանչօղքն խօճին  
կենդանութիւն:

260 Ո՞ւր փիլաւխօր սուտ սիրելիքն, անդամ մի տեսըն  
չերթային,

Հիմա հոգիդ ելնէ ասեն, էր այլ շատ մեզ շտայիր բաժին.

Ո՞ւր չէնկէպազ նենզող դրդողքն, տեսնունք զխօճին  
աստ քաջութիւն.

Հայոց աղզիս մէջ դու գըտվար, որ քո ձեռօքդ բանս  
յըստըկին:

Ոչ ուզաքտան մէկ մէրհէպա, և ոչ օր մի զհալ զխաթիր  
հարցին.

265 Ասեն՝ շաշղընն բան չէ զիտցեր, ահա՛ տեսաք զիւր  
իշութիւն:

Զայս բաշաղողքն տեղաց էին, ոմանք քան կսա յառաջ  
չքէին.

Միթէ սորա տէրտն չէ՞ր հերիք, սիթէմս այլ գան ու խոց  
սրտին.

Ոմանք իսաշեն՝ ջանք մեր այս էր, հոս առնէաք մեք զքո  
հոգին.

Ուր կերթաս՝ նա զընա՛ հերիֆ, տես թէ ինտո՛ր է  
խօճայութիւն:

Վասն ի տուն բերելոյ զիի Խօսրօվին: Յեղանակն «Ես եմ  
կորուսեալ...», «Աշխարհն է ի ծով նման» և զոր կամիս

270 Երբ ի զընտանէն հանին, իբր զղարիպ ի տուն հասուցին,  
Խիստ խիղճ էր տեսիլք նորա, լըսողաց զարմանք թէ  
պատմին:

Երբ ի զընէն ներս մուծին, ի գաւիթն ըզնաշ որ եղին.  
Կրկին կատարած լինէր, ընտանեացն անդ ձիշըն ձայնին:  
Որպէս ըզմոմեա տեսին, խոր գեղնեալ բոլորեալ մարմին.

275 Միայն ոսկերքն էր մորթովն, չորացած փայտ, տերեթափ  
ծառ մին:

Ընտանիքն ի գլուխ ի բաց, հերարձակ վազեն՝ և ասէին.  
Եղբա՛յր այս չէ մեր պարոնն, դէմքն ու կերպն միթէ այս  
փոխին:

Երբոր սանդղոցն ի վեր՝ հանեցին՝ և ի տուն իւր մուծին.  
Լըցուան սէյիրճիք բազումք, ի տեսնով լըսել զահվալնին:

Փոխէ զգոյնն. «Կայ այս պօվրոսիս», քանզի ողբ վասն ատւեն  
և պահուն այն:

280 Սև բօթն որ վաղ հասուցին, յայն տարերքն խոռվեալ  
խառնակին.

Խառնիլ սկըսաւ լերդ՝ և աղիքն, մըրրկաւ սուզն նոր  
սըգաւորին:

Զերեսս երկնից թուխ ամպերք, մառախուղ այսօր  
պատեցին,

Որպէս ամուսնոյն սրտիւն, սև դարիք գալիք հանդիպին,  
Օրն եղև ձիւն բըքաբեր, դառնաշունչ հողմով մըրըկին,

285 Այնպէս կողակցի սըրտին դառնաբեր եղեամն կըսկըծին,  
Երկինք՝ և երկիր մթնացաւ, ամուսնոյն սև սև խոց հեղին.

Սառնամանիք սև սըրտին, որբ՝ և այրի լինիլ Մէյրէմին:  
Մութն ու մըլարն պատեցաւ, մարդոյ աշք բանալ  
չըտային.

Սա վերայ գըլիխին ծեծէր, որ արցունքն զաշքերն  
չբանային:

290 Փոթորկեալ խառնակ օդոյն, յօր մահուն տեսաք  
Խօսրովին,

Որ տարի մի դառնանայր, ար սև դար սև սըգաւորին:

Հողմոյն խառնուխուռն հընչման, զդէմս զերես մարդոց  
ճղատկէին.

Ճղատկեալ մաղերն Մէյրէմին, ի վերայ կրծոց խօճային:  
Զիւնն որ փշմամբ զօդն ծածկէր, օր՝ արև բնակչաց  
չըցուցին.

295 Անդ սև սև մաղերն ծածկէր, զդագաղն ու զմարմին սև  
բախտին:

Զիւնն որ ցընդեալ կու մաղէր, բըքախառն մանէման  
հոսին.

Զիւելքըն ցիրուցան մաղէր՝ մղկըտէր զսիրտըն Մէյրէմին:  
Զիւնն որ ի փոս փոս տեղիք լընոյր որ կուտոց դիղէին.

300 Հանգուց վերայ հանկուցի, ծալիծալ կըսկիծն Մէյրէմին:  
Զիւնն որ սփոռեալ և հեղոյր, զծիւայիտզս ամբարանացին.  
Այլնոր շտեմարան բացաւ, զսկ խոցեր դիղեալ Մէյրէմին:  
Ցուրտն որ սաստիկ էր հնչման, զանձն մարդկան

սարտեցնին.

Սրտադող սարսափի երեր, ատամանց կրծտել Մէյրէմին:

Սառուցման ցըրտոյն յետե, կերպարանք մարդկան  
կիղէին.

305 Յետ սարսըռելի դողմանս, զերմ դողման մորմոք  
Մէյրէմին:

Մինչ օրս կայր անմխիթար, թալիթալ խըշխըշալ սըրտին.  
Անայր՝ և անորդի մնալն, սեագիր սև սըգաւորին:

Մինչ օրս անըսփոփ մնայ, լեարդն օդիկ օդիկ գալարին.  
Շատ աղաշանօք խնդրեաց, այսօր զգանձս դեղաթուփ

Մէյրէմին:

- 310 Մի' լար դստրի'կ, մի' ողբար, տուր սրտիդ համբեր  
փոքր մին.  
Այս սուտ յանցաւոր յաշխարհս, ո՞վ հասեր սրտի  
մուրատին,  
Մի' լար դու քուրո՛ւկ, մի' լար, ումիտ ու սապո տուր քո  
սըրտին.  
Մահուն չէ եղեր հարակ, ձիւնն եկեր որ ոտքըն մըսին:  
Մի' լար դստրի'կ, դու մի' լար, թէ ոք հասէր սըրտին  
մուրատին.
- 315 Վերջն հեծեծանօք ի հող, արտասուօք յաշխարհէ ելին:  
Ով սըրտահանգէք լինի՝ Տէր նորա բարի տայ ըստ  
սըրտին.  
Մուխ որ քո յօձախէն ելաւ, նա' յամէն յօձղէ կու ծըխին:  
Գնա' աղալչէ զԱստուած, շալլա բախտ մի բարի դիպին,  
Այդ մըթանըդ լոյս մի տայ, զքեզ տանի յերկիր մի բարին:  
320 Գնա' մաղթէ Աստուծոյ, որ դուս քեղ փակեալ երեխն.  
Կարող է դուսն մի այլ բանալ, անհնարիք նորա հնարին:  
Յայս սուտ փուտ յաստըվորէս՝ ամէն մէկ տէրտով մի  
ելին.  
Խօճայ Խօսրօվն այլ ճանփովս՝ Հասաւ սըրտի մուրատին:  
Կարճ ի կարճոյ պատմեցաւ, նախատն ու բամբասն  
վշտակրին.
- 325 Ի նեղն հասուցեալ զվախճանն, յարեւոն մահրում  
հանեցին:  
Թիւն ՌՃԽ (=1691) յունվար ժ և Ը կիրակին  
Զընտանէն ի տուն բերեալ, հող զնտանս յայդն  
երկուշաբթին:  
Հէմշէրիքն արեելեան, դայրէթով զկարգն կատարեցին:  
Յըրտովն զաշխատանսն կըրեալ, Պէկօղին բերեալ  
թաղեցին:
- 330 Զմեր Պալըխլուն կ'ասէաք, թէ՛ ի՞նչ մարեր, քուրեր կու  
լային,

Այդ Պէկողլիս զայն անցուց, թ' ինչ թուրլի խաղաց մեկ  
օյլա:

Ա՛յ դուք օրհնեալ ժողովուրդք, կեանք՝ և արե ձեզ  
հրկարեսցին.

Զահմէթեցայք զճառս լսել, և այլ ասէք՝ զԱստուած  
ողորմին:

Սիրովն Քրիստոսի եկիք, սփոփանք տալ սըգաւորին,  
335 Խօսրովի հոգոյն համար, հրամեցէք մէկ հայր մեր  
յերկին:

Թ. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾ ՄՅ, ՊՐԻՄԻ ՄԵԶ ԳՐՈՒԱԾ

իսկ յայդն երկուշաբթին յորում յոյնք Այա դրեատա կատարեն զտօն ղերիս աւուրս և երթան ի վանս կուսանաց յուխտ, որ յանուն Սուրբ Աստուածածնին միափերթ վիմափոր գալթիւն և տաճարիւն յի ստորոտ լերինն բարձու գիտելով ընդ հարաւ՝ ի վերայ քաղաքին և ի ծով երկրին Ղրիմայ: Եւ զմեղ հրափրեալ անդ՝ տեսաք զեկեղեցին ուխտելով և զուխտաւոր պառաւնս և զկուսանք սևազգեստեալք՝ ակն ունելով յուսով պայծառ զգեստուց ի հարսնարան երկնաւոր արքային միհիթարութեան: Իսկ որ ի վերոյ դասք արանց, յունաց և հայոց, կերակրօք և ըմպելեօք նստէին և կեսոցն փողովք կաքաւէին: Եւ մերձ հիկեղեցւոյն յատեան ի խոտուտն վայրք՝ դասք աղջկանց և հարսանց պար բոլորեալ ճեպառնեպ զընթացս կաքաւուցն առնէին, որ ոչ էր ըստ օրինի դստերացն թրակացւոց և կամ ովկիանոյն կղզեաց էր յօրինած պարին՝ դառնալով և առնելով զոտացն քայլափսութիւնս, այլ որպէս թէ ստէպ ստէպ վերիվեր թռելով, այսինքն՝ դեռոս ի ձեռոս առեալ և երբեմն բազուկք ընդ բազկաց վերիվայր ճեմելով վրազագոյնս և շեշտակապակս բոլորածիր մանուածովք իբրև անձանց հիսունից վաղաւաց ընթացիւք ըստ յօդեղինացն տարազու զպարն բոլորէին, որ ընդ փոյթ ընդ փոյթ ճեպիլն շրջապարին բոյլիցն ճեմականի՝ զտեսողաց սիրտս ընդ քթթել ականց իսկոյն յինքեանս ստէպ քարշէին: Իսկ ի միջի պարուն կանգնեալ ոմն շընծերագոյն՝ ունելով ի ձեռն զքնար վեշաղեաց՝ ընդ երգս ձայնից

նոցուն յարմարէր: Ա՞ւր թէ իշխանութիւն կալեալ էի զարիւն  
շնծերին արժանի յերկիր ի նոյն տեղի թափէի, որ ակն անգեղ  
և գռեհիկ զառամացեալ և զառնահոգի ալմորն ոչ միայն ըզ-  
փանայր ի տեսութիւն զուարթագունեղ զեղեցկութեանց մա-  
տաղատունին տիոց, որպէս ագռաւք ընդ վարդենիս, այլ որպէս  
ընդ ոսկէփետուր սիրամարգացն անձանց հօճական չեմողաց  
սպացելոց աղուէսն բրափի ի միջի կացեալ՝ զտուտն տգեղ տա-  
րաբերեալ զովանայր: Եւ որ թալկանայն տարիմամբ սրտին  
բորբոքելոց անգամ տեսութեան միոյն ի նոցանէ՝ ի տարուտ  
նստեալ զանխուկ տագնապէր հառաջանօր: Իսկ շողոտ և ժանկ-  
ուոտ խոփածն զհասարակաց զանձինս նոցա համանգամայն  
տեսանէր, ըստ այնմ՝ թէ ահա՛ շէքէր՝ և ի շիւան ի բերան, ահա՛  
վարդերք նազելիր ի ձեռն խօրեատ շնծերի. ահա՛ շուր պատու-  
ական զովացուցիչ՝ և օճն էր պահապան. ահա՛ ձէվէհէր և կէվէհէր  
մատենից՝ և իժն ի դէմն նստեալ. ահա՛ ճոխաճեմ կաքաւողացն  
պարք կաքաւուց՝ և ագռաւն տգեղ ի միջի զզմզէր. ահա՛ ժո-  
ղովք խաղուց պերճացելոց որթուց ի վերայ լերանց խնկաբուր-  
մանց՝ և կինջ ցուոտ գարշելի ի միջի տատանէր: Իսկ հիւսիսա-  
յինն վոռէառ նպաստ լինէր առ ի իւազս վաստակոց նոցուն, զի  
մի կիզցէ իլիօսն երկնային զլամբրօնափայլ զեղ նոցա: Զի որք  
տոշորեալք էին տնարդեալք լուսուցումն տարիանաց՝ իւրա-  
քանչիւրքն թափէին անդէն քրտամբք զմեղացս տարիականի  
սրտից՝ որպէս զզեղաթափս թժշկաց առ ի զովացումն բորբո-  
քեալ սրտից: Եւ օճն վոռէասական ոչ միայն ի տապոյ արփույն  
պահապանիւր զգեղ կերպարանաց փափկասուն նազելեաց, այլ  
և ի տեսիլս յաճախէր տեսողացդ վերոյ զբելոցդ, ևս առաւել  
դոփս գարշապարաց հասարակ միեղէն մաքրակերպից, զորոց  
զշղաշատեան զգեստուց և զիսպոպիս զարդուցն իրրե զառա-  
գաստ նաւուց ուսուցմամբ յընդելականն հանդիսի սրատես  
վարեալ տեսանիւր: Եւ ընդ վերիվայր տարածմանց բաղկաց և  
սրընթաց քայլափոխմանցն ոտից՝ հանդերձքն պսպղուն  
սփոեալ յաջ և յաճեակ վառմամբ տարածէր իբրև զդրօշս խե-  
լից նաւուց օվկիանական ծովընթացիցն, որք զինելս ընդ նոյն  
սփոեալ վառվոէին: Եւ ընդ ճառագայթ արփենւոյն խիտ առ  
խիտ սօսայր որպէս զմարգարիտս՝ հանդերձքն կերպասեղէնք

նետ զնետիւ հարեալ հողածնեաց դիպողաց: Եւ ի քայլափոխութեանց հոտոտէր բուրմունքն որ յանձանց և ի ծաղկանց զարմաղանից գեղաւորաց ի վայրն կանաշորակ ծաղկանց ծիրանեաց և գեղնեաց և երկրագունիցն և մանուշակորաց և սպիտակաց երփն երփն յօրինուածոց յօրինեալ ի յօրինողէն: Յար և նման զանաղան կերպարանաց իւրոց, որք իւրաքանչիւր որ յատկակի ունէին զգեղ դիմաց սրտաքարշից, որպէս և բռւրումն էր օրինակ զանաղան ծաղկանցն բռւրմանց, և տեսիլքն զանաղան: Զայս մինչդեռ անդրէն գրէի՝ եկին հասին ի վերայ իմ քահանայք և ոմանք տեղույմ՝ ասեն, վայ մեղ, զի ի կատականս քո եղաք այսօր. որոց պատասխանէի, թէ գրածն իմ ոչ և վասն նոցա: Այլ նոքա իմացեալք աղաշէին զխոսիլն իմ: Ասացի. պախտ էր ինձ եթէ պատահեալ իսկ լինէի իրրի յերաղի՝ քան թէ ի նոր տեսիլս ըմբռնեալ ի տոռունս նոր իմն վէր ի վերայ սպից հնացելոց: Այս ինձ դիպուած պատահեալ հասանիլ ի տեղիս և սոյն աւուրս, զի ցուցանէին զջօրինուած արհեստին իւրեանց, զի գրէի յիշատակութիւն պոնտացոց, քաղաքաւ և աղգաւ վաճառականք՝ առ ի մատուցանել զգեղ կերպարանին իւրեանց և քարշեալ ի մէջն զխելս յեղակարծ պատահողաց ընդ յինքեանս: Վայ զ գատերացն թրակացոց որք յարկում արգելեալք՝ յակամայ և առ ահի բռնակալաց շոնին յետղ ինչ զի ծախել կարիցեն զորս և ունին: Այդ ընդ կաքաւս ոչ զարմացայ այնքան՝ քան թէ յափշտակութիւնք պատէ զիս յորժամ զմտաւ ածեմ և զառանին պարս արհեստից նոցա, թէ քանի՛ցս գերազոյն հանձարով իցէ: Քանզի թէ պարք ժողովոց նոցին ի սոյն հանգիսի այսքան ճոխազարդութեամբ տեսանիւր՝ քանի՛ցս թէ զանխաբար արհեստքն վայելզազարդք և գգուանք գրկանացն զարմանալի յերեկի յաշս սոփեստից: Զի թէ կանաշութիւն բռւրաստանին ի հեռուստ զբօսնցոյց թմրեցոյց այսքան՝ քանի՛ցս թէ յորժամ արձակիցեն զհոտս իւրեանց բռւրմամբ անուշից՝ զմայլեցուցանեն. թէ արտաքուատ աղդեալ զերմութիւնք զմեզ տապացուցանէր՝ քանի՛ցս սառն սիրով նիւթովք արհեստից շաղապատումն ընդ հոմանիս:

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հավելվածում գետեղված նյութերի)

## Ա. ԵՐԳ ԱՄԲՈՅ

«... ԴԼՈՎԻԹ է օՃՆԱԼ ԽԵՂՈՎ պալասան»

(էջ 129)

Այս բանաստեղծությունը Քյոմուրճյանի շորս այլ բանաստեղծությունների հետ մեկտեղ առաջին անգամ հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտում» (Փարիզ, 1903, էջ 189), «Հայ Էջեր» ընդհանուր խորագրի տակ և «Տաղը Երեմիա Քէօմիւրճնանի» հնիթավերնադրով։ Ենթավերնադրի տակ հրատարակիչը մի փոքրիկ ծանոթություն է տվել Քյոմուրճյանի մասին՝ «Երեմիա Զէլէպի, Կոստանդնուպոլսցի», որդի Տէր Մարտիրոսի Քէօմիւրճնի կոչեցելոյ, և Երեց Եղբայր Երանելոյն Տէր Կոմիտասայ նահատակի, ծաղկեալ ի վախճան Ժէ գարուն բանին և գրով։ Իսկ տողատակում իր կարծիքն է Հայտնել այս 5 տաղի բնույթի մասին, ասելով. «Այս տաղերը աշուղի լեզուով են գրուած և կարծենք թէ անտիպ են»։

Տաղը վերցված է Վենետիկի Ա. Ղազարի վանքի մատենադարանի № 556 ձեռագրից (տաղարան է)։

Այս տաղի մասին հիշատակում է Ն. Ակինյանն իր «Երեմիա Զէլէպի Քէօմիւրճնան» տուումնասիրության մեջ (տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1933, № 1—2, էջ 103)։

## Բ. Խ ՎԵՐԱՅ ՀՐՈՅ

«Երամք Երկնային թոշնոց խմբեցան»

(էջ 130)

Առաջին անգամ հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում (Փարիզ, 1903, էջ 189—190). (տե՛ս 1. ծանոթագրությունը)։ Տաղը հանված է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 556 ձեռագրից։ Այս տաղի մասին ևս հիշատակում է Ն. Ակինյանը վերը նշված աշխատության մեջ (տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1933, էջ 102)։

Գ. Ի վերայ չընյ

«ԱՇ ջուր, պասքելոց դու զովացարան»

(էջ 133)

Առաջին անգամ հրատարակել է Ա. Զուրանյանը «Անահիտ» հանդեսում (1903, էջ 190): Այս ապա ևս Զուրանյանը հանել է Վենետիկի Միսիթարյան մատենադարանի № 556 ձեռագրից:

Տաղի մասին դարձյալ Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1933, էջ 102):

Դ. Ի վերայ չընյ

«ԱՇ ջուր յորդախաղ գետոյդ»

(էջ 135)

Առաջին անգամ հրատարակվել է «Անահիտ» հանդեսում, 1903, էջ 191 (տե՛ս 1. ծանոթագրությունը):

Հրատարակիչն այն հանել է դարձյալ նույն՝ Վենետիկի Միսիթարյան մատենադարանի № 556 ձեռագրից:

Ն. Ակինյանն այս տաղի մասին ևս Հիշատակություն ունի (տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1933, էջ 102):

Ե. Ի վերայ սիրոյ և ուրախութեան

«Արեգակն որ է ստեղծեալ յԱրարէն»

(էջ 138)

Առաջին անգամ հրատարակվել է «Անահիտ» հանդեսում, 1903, էջ 192 (տե՛ս 1. ծանոթագրությունը):

Սրա մասին ևս Հիշատակված է Ն. Ակինյանի «Երեմիա Զէլէպի Քէօմիր-ձեան» աշխատության մեջ (տե՛ս «Հանդէս ամսօրեալ», 1933, էջ 102):

Այս բանաստեղծության մի այլ օրինակի մասին Հիշատակություն կա Ա. Սուրբեանի կազմած մասնավոր անձանց ձեռագրացուցակում (տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց», Երուսաղեմ, 1935, էջ 382, տաղարան, № 1679, էջ 13):

Զ. Հատվածներ «Պատմութիւն նրակիզման Կոստանդնուպոլսոյ» գործից

(էջ 140)

Այս Հատվածները հանել ենք Հ. Օշականի «Երեմիա Զէլէպի» ուսումնասիրությունից («Սիոն», 1949, № 4, էջ 104), իսկ Օշականը դրանք վերցրել է Երուսաղեմի մատենադարանի № 892 ձեռագրից:

«Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» երկն առ այսօր անտիպ է: Այդ պատմառով էլ հարմար համարեցինք այս երկու փոքրիկ հատվածներով ընթերցողներին գոնք մի որոշ ծանոթացում տալ դրա մասին:

կ. Գանձ ասացեալ Երեմիայի ի վերայ մօրն իւրոյ ՌՃՃՌ բվին Հայոց. յօրում  
ամի նանզուցեալ լինի ի Քրիստոս: Նորա և մեզ և ամենեցուն Տէր ողորմի,  
ամէն

«Երդ ողբերգական ողբոց արժանի»

(էջ 141)

Առաջին անդամ հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրու-  
թեան» հավելվածում (տե՛ս նշված տեղում, էջ 611): Մ. Նշանյանն այն  
հանել է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 1042 ձեռագրից  
(էջ 96ր—104ա), որը Քյոմուրճյանի ինքնապիրն է:

Այս գանձի մասին հիշատակում է ն. Ակինյանը վերը հիշատակված աշ-  
խատության մեջ (տե՛ս «Հանգէս ամսօրեալ», 1933, էջ 94):

Գանձը տպագրում ենք որոշ կրթատումներով (տրված է մինչև 213-րդ  
տողը):

Ը. Ազուլեցի խօնայ Խօսորվի մահուան, նառ ի սկզբանէ մինչ ի նորին վաղ-  
նան, ասացեալ ի խնդրոյ ամուսնոյ նորին

«Եկայք եղբարք աստ ժողովեցէք»

(էջ 148)

Առաջին անդամ հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրու-  
թեան» հավելվածում (տե՛ս նշված տեղում, էջ 635—648): Նշանյանն այս  
գանձ-ողբը հանել է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի  
№ 1042 ձեռագրից (էջ 90ր—96ր):

Այս երկի մասին ևս ն. Ակինյանը հիշատակել է իր աշխատության մեջ  
(տե՛ս «Հանգէս ամսօրեալ», 1933, էջ 96):

Մ. Նշանյանն այս ողբի տողատակում ասում է, որ Մինաս Ամդեցին ևս  
իր «Օրագրութեան» մեջ հիշատակել է խոչա հոսրովի մահվան մասին, նկա-  
րագրել է նաև նրա հուղարկավորությունը:

Թ. Նկարագրական հատուած մը, Կրիմի մեջ գրուած

(էջ 161)

Առաջին անդամ հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրու-  
թեան» հավելվածում (տե՛ս նշված տեղում, էջ 512—515):

Նշանյանն այն հանել է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի  
№ 1058 ձեռագրից (էջ 35ր—37ա), նշելով, որ այն թերի է: Նկարագրական  
այս հատվածի մասին հիշատակություն ունի Հ. Զշականն իր «Երեմիա Զէլէ-  
պի» ուսումնասիրության մեջ:

Զնայած հատվածը թերի է, սակայն այն որոշ գաղափար է տալիս Քյո-  
մուրճյանի գեղարվեստական արձակի մասին, ուստի և հարմար համարեցինք  
այն զետեղել այս հավելվածում:

ԵՐԵՄԻԱ. ԶԵԼԵՊԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն»:  
Անտիպ է:  
Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները.  
Մատենադարանի ձեռագիր, № 1675 (ժամանակ՝ 1732), էջ 2ա—173բ:  
Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի ձեռագիր, № 14:
- «Թագաւորութեան օսմանցոց համառոտիւ պատմոթիւն»:  
Անտիպ է:  
Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները.  
Մատենադարանի ձեռագիր, № 1786, էջ 1ա—81բ:  
Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի ձեռագիր, № 464,  
էջ 699:
- «Ոտիւ շարադրեալ անուանք թագաւորաց օսմանցոց»:  
Անտիպ է:  
Պահպանված է Մատենադարանում, ձեռագիր՝ № 1786, էջ 97ա—98ա:
- «Համառօտ հարցմունք և պատասխանիք»:  
Անտիպ է:  
Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները.  
Մատենադարանի ձեռագիր, № 72, էջ 131ա—173ա:  
Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի ձեռագիր, № 15:
- «Պատմութիւն Հայոց»:  
Բնագիրը կորած է:
- «Մտամպօլոյ պատմոթիւն»:  
Հրատարակել և ծանոթագրել է Վ. Թորգոմյանը (Ա. Հատոր, Վիեննա,  
1913, Բ. Հատոր, 1932 Գ. Հատոր, 1939):  
1952 թվականին այս պատմությունը թուրքերներ է թարգմանել Հրանտ  
Անդրեասյանը, իսկ Մտամբուլի համալսարանի գրական ֆակուլտետն այն  
հրատարակել է հետևյալ խորագրով. «Eremya Çelebi Kümürcüyan, İstan-  
bul Tarihi, XVII asırda İstanbul».  
Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները.  
Մատենադարանի ձեռագիր, № 1675 (ժամանակ՝ 1732), էջ 183ա—271բ:  
Մատենադարանի ձեռագիր № 1345 (ժամանակ՝ 1697), էջ 320բ—353բ:

7. «Պատմութիւն Հրակիղման Կոստանդնուպոլսոյ»:

Անտիպ է:

Պահպանված են Հետելալ ձեռագիր օրինակները.

Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենագարանի ձեռագիր, № 892, էջ 172—270ա:

Անկյուրայի Կարմիր վանքի մատենագարանի ձեռագիր, № 115, էջ 115—252:

8. «Վիպասանութիւն յառումն Կրետէ Կղզոյ»:

Անտիպ է:

Զեռագիրն ըստ Ն. Ակինյանի գտնվելիս է եղել Հ. Զավարյանի մոտ, Փարիզում: Ակինյանն այն տեսել է 1931 թվականին:

9. «Վիպասանութիւն յԱպրօ Զէլէպի»:

Անտիպ է:

Ն. Ակինյանը սրա ձեռագիրը 1936 թվականին տեսել է Մյունխենում, մի գրավաճառի մոտ:

10. «Պատմական բանք իւրոյ ժամանակին, յորինեալ յամի 1682»:

Անտիպ է:

Այս երկի մասին ակնարկում է S. Պալյանը, ասելով, որ այն տեսել է 1885 թվականին, Հոպպեյում, Գերմանիայի Հյուպատոս Ա. Մուրադյանի մոտ:

11. «Տարեգրական պատմութիւն»:

Անտիպ է:

Ինքնադիր ձեռագիրը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան մատենագարանում, ձեռագիր № 509:

12. «Օրագրութիւն»:

Հրատարակել է Մ. Նշանյանը՝ «Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիր-Ճեանի» (Երուսաղեմ, 1939) խորագրով:

Ինքնագիր ձեռագիրը պահպանվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենագարանում, № 1893:

13. «Աշխարհագրութիւն»:

Բնագիրը կորած է:

14. «Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի»:

Բնագիրը կորած է:

15. Տոմարական գիտելիքներ, գտնելու համար փրկչական և հայոց թվականը, ոտանավար շափով:

Անտիպ է:

Պահպանվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենագարանի № 1058 ձեռագրում, էջ 106ա—119բ:

16. «Թարգմանութիւն նոր կտակարանի և մասանց Հին կտակարանի ի լեզու տաճկաց»:

Անտիպ է:

Բնագիրը պահպանվում է Մատենադարանի № 1645 ձեռագրում,  
էջ 119ա—219ա:

17. «Սաղմոսք Դաւթի» (թարգմանված թուրքերենի):  
Անտիպ է:

Պահպանված էն հետևյալ ձեռագիր օրինակները.

Մատենադարանի ձեռագիր, № 1644, էջ 294ա—303ա:

Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր, № 85:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր, № 988,  
էջ 89ա—99ա և 101ա—104ա:

18. Քարոզներ տաճկերեն լեզվով:

Անտիպ Էն:

Պահպանված էն Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 408 ձեռա-  
գրում, էջ 9ա—21բ 22ա, 28ա—94ա:

19. «Յամառու Յամառութիւն լեզու Տաճկաց»:

Անտիպ է:

Պահպանված է Երուսաղեմի ո. Հակոբա վանքի մատենադարանի № 1076 ձե-  
ռագրում:

20. «Ճառեր Եկեղեցական սուրբ ժողովներու վերաբայ»:

Անտիպ Էն:

Հիշատակում է Վ. Թորգոմյանը «Ստամպոլոյ պատմութեան» ծանոթա-  
գրությունների մեջ (էջ 185):

21. «Վիճաբանութիւն ընդդէմ Հրեից»:

Բնագրի տեղը հայտնի չէ: Հիշատակում է Զամշանը (Գ գիրք, էջ 723):

22. «Վիճաբանութիւն ընդդէմ Յունաց»:

Անտիպ է:

Պահպանված է Վիեննետիկի Մխիթարյան մատենադարանի № 621 ձեռագրում:

23. «Պատասխանիթ ընդդէմ այնոցիկ, որ բամբասէին զեկեղեցին Հայոց»:

Անտիպ է:

Զեռագիր օրինակները գտնվում են Երուսաղեմի և Վիեննետիկի մատենա-  
դարաններում:

24. «Պատասխանի Աստուծով և վասն Աստուծոյ»:

Անտիպ է:

Զեռագիրը գտնվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում, № 775:

25. «Գովաբանութիւն տնօրինական տեղաց յԵրուսաղեմ»:

Տպագրված է 1677 թվականին, իր իսկ Քյոմուրճյանի հիմնած տպա-  
րանում:

26. «Պատմութիւն նորոց նահատակաց»:

Անտիպ է:

Գտնվում է Վիեննետիկի Մխիթարյան մատենադարանի № 509 ձեռագրում:

27. «Պատմութիւն Ֆարիզու և Վէնայի» (թարգմանված թուրքերենի):

Տպագրված է 1871 թվականին, «Հեքեայէի Ֆարիս վէ Վէնա» խորագրով:

28. «Պատմութիւն մեծին Ալեքսանդրի» (թարգմանված թուրքերենի);  
Անտիպ է:  
Պահպատմ է երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 988  
ձեռագրում:
29. «Յաղագո զերու Քիրստոսին որ կէլտի կէլտի ասի...»:  
Հրատարակված է Կ. Պոլսում «Տեսական այս որ կոչի Սապէթայի Սեւու  
համբաւեալ ի Հրէյից ոմն խաբեբայ Սապէթայ անուն կամէր կրկին  
մոլորել զմոլորեալսն» խորագրով:  
Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները.  
Մատենադարանի ձեռագիր № 8780, էջ 3ա—16ու  
Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 605 ձեռադիր:
30. «Վասն վերստին խայտառակութեան Հրէյից»  
Անտիպ է:  
Պահպատմ է Մատենադարանի № 8780 ձեռագրում, էջ 17ա—17բ:
31. «Ալլ իմն բան Հրէի կնոջն Քէրային»:  
Անտիպ է:  
Պահպատմ է Մատենադարանի № 1675 ձեռագրում, էջ 272ա—274ա:
32. «Վասն էքմէքի առնաւուտ Տիմոֆի ումեմն, որ սիրեաց զաղշիկ մի  
հրէի Մրգատայ անուն...»:  
Տպագրված է «Բանքեր մատենադարանի» հանդեսում, 1962, Երևան,  
էջ 409—427:  
Բնագիրը պահպատմ է Մատենադարանի № 8780 ձեռագրում, էջ 17բ—30ա  
և № 7715, էջ 67բ—74բ:
33. Զանազան անձանց գրված նամակներ:  
Տպագրված են Մ. Նշանյանի հրատարակած «Օրագրութեան» հավելվա-  
ծում (էջ 402—434):  
Պահպատմ են երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 1058  
ձեռագրում:
34. Զանազան ուղերձներ:  
Տպագրված են Մ. Նշանյանի հրատարակած «Օրագրութեան» հավելվա-  
ծում (էջ 534—587):  
Պահպատմ են երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 1059  
ձեռագրում:  
Այդ ուղերձները հետևյալներն են.  
Ա. Թուղթ սիրոյ առ Նիկոմիդացիս  
Բ. Ի յերուսաղէմէ առ ի Ստամբոլ, թուղթ ողջունի  
Գ. Թուղթ առ բարեկամս իւր ի Թէքիրտաղ  
Դ. Թուղթ առ հայրն ծերունի  
Ե. Թուղթ առ Աբրահամ Զէլէպի. «Զայս գրեաց վերծանութեամբ առ Աբրօ  
ումն իշխան»  
Զ. Թուղթ առ պարոն Սարգիս Ապրուեան  
Է. Աղերս առ Պետրոս շէլէպի (անխորագիր)

Բ. Անխորագիր

Բ. Առ Յովսաթան (անխորագիր)

Ժ. Առ պոնտացիս (անխորագիր)

ԺՄ. Առ պարսն Խմանիէ (անխորագիր)

ԺԲ. Առ Պետրոս վարդապետ յէջմիածնին

ԺԳ. Առ Վարդան ոմն (անխորագիր)

ԺԴ. Տաճկաբարբառ թուղթ (առ Գրիգոր Զէլէպի)

ԺԵ. Տաճկաբարբառ թուղթ որ է մուհապէթնամէ առ Պուրսացիս ոմանս

ԺԶ. Առ տաճնիկ ոմն Հայաղաբմ թուղթ նաև արդմանէ նախագծօք

ԺԷ. Առ Ապրօ Զէլէպի (անխորագիր)

ԺԸ. Անխորագիր

ԺԹ. Թուղթ առ Մուրատ Զէլէպ (անխորագիր)

Ի. Մի թորքերեն ոտանակոր

ԻԱ. Թուղթ մխիթարական առ Արքահամ Զէլէպի

ԻԲ. Թուղթ վշտակցութեան առ կարնեցի խօճայ Կարապէտ

ԻԳ. Ողբերգութիւն ի մահ երիտասարդի ուրուք

ԻԴ. Գուլէստ Փէլիպպոս կաթողիկոսի

ԻԵ. Գուլէստ Նահապէտ կաթողիկոսի

ԻԶ. Առ թագաւորն Լեհաց

35. Գանձեր և ողբեր:

Տպագրված են Մ. Նշանյանի Հրատարակած «Օրագրութեան» հավելվածում (էջ 587—664):

Այդ գանձերն ու ողբերը հետեւյալներն են.

Ա. «Ողբ ասացեալ երեմիայի ի մահ մահտեսի Ամբակումի, որ էր կամաց, ի թոփին նձէ (1658):

Հրատարակել է նաև Թորդոմյանը (տե՛ս «Ստամպօլոյ պատմութիւնք էջ 745):

Բ. «Ներբողեան ասացեալ երեմիայի առ ի թաղումն Արքահամ Զէլէպուդստերն փոքէր որ ի թուականն Հայոց ՌՃՇ (1661), իէ օգոստոսիւ

Զեռագիր օրինակը գտնվում է երուսաղեմի ս. Հակոբ վանքի մատենադարանում, № 1042:

Գ. «Ազուբեցի խօճայ Խօսքօվի մահուան, ճառ ի սկզբանէ մինչ ի նորին վաղճան, ասացեալ ի խնդրոյ ամուսնոյ նորին: Զգանձն և զորդն երգողն թէ յարմարեսցէ ըստ ոճին զեղանակն նա մէհրէպա տէպոն շնորհիւ:

Զեռագիր օրինակը՝ երուսաղեմի մատենադարանի № 1042 ձեռագրում:

Դ. «Գանձ ասացեալ երեմիայի ի վերայ մօրն խրոյ. ՌՃՇ (1663) բային Հայոց, յորում ամի հանգուցեալ լինի ի Քրիստոս. նորա և մեզ ամենեցուն Տէր ողորմի, ամէն»:

Զեռագիր օրինակը՝ երուսաղեմի մատենադարանում, № 1042:

Ե. «Գանձ և ողբ ի վերայ հօրն (Տէր Մարտիրոս Քէօմիրնեան) ասացեալ այգուցն»:

Զեռագիր օրինակը՝ երուսաղեմի մատենադարանում, № 1042:

Զ. «Գանձ և ողբք ի վերայ Յակոբ կաթողիկոսի»:

Հղատարակել է Ն. Ակինյանը նախ՝ «Հանդէս ամսօրեայում» (1933, № 9—10, էջ 589—595), ապա «Երեմիա Զէէպի Քօմուրճեան. կյանքն և գրական գործունեութիւնը» ուսումնասիրությանը (Վիեննա, 1933) կից:

Է. «Գանձ մանկահասակ ննչեցելոց արուաց ի իգաց. որոյ ասօղն յորինեսցէ. ոգեալ Երեմիայի Ծճժդի 1665) թվականիս Հայոց»:

Պահպանված էն Հետելյալ ձեռագիր օրինակները.

Երուսաղեմի մատենադարանի № 1042 ձեռագրում և

Մատենադարանի № 2248, էջ 124ա—126ա:

Բ. «Ողբ ննչեցելոց ի գունն Ա՛յ վա՛յի»

Պահպանված էն Հետելյալ ձեռագիր օրինակները.

Երուսաղեմի մատենադարանի № 1042 ձեռագրում և Մատենադարանի № 2248 ձեռագրում (էջ 126բ):

Բ. «Ողբ տղահասակի ի գուն «Գանգատի»:

Ձեռագիր օրինակը՝ Երուսաղեմի մատենադարանում, ձեռագիր № 1042:

Ժ. «Տաղ տղայոց անմեղաց»:

Ձեռագիր օրինակը՝ Երուսաղեմի մատենադարանում, ձեռագիր № 1042:

Ժ. «Այլ (ողբ) տղայոց մահուան»:

Հրատարակված է «Մաշտոցում» (1667, էջ 61—62):

Պահպանված էն Հետելյալ ձեռագիր օրինակները.

Երուսաղեմի մատենադարանի № 1042 ձեռագրում և Վիեննայի Միհթարյան մատենադարանի № 149 ձեռագրում:

### 30. Տաղեր

Ա. Տաղ ի ս. Աստուածածին («Ահաւոր, սոսկալի, գէմք հիանալի...»)

Այս տաղի մասին հիշատակում է Ն. Բլուզանդաշին իր մի անտիպ գրվածքում:

Բ. Տաղ ի վերայ ջրոյ («Ա՛յ ջուր յորդախաղ գնաուդի...»)

Հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում (1903, էջ 191):

Ձեռագիր օրինակը գտնվում է Վենետիկի Միհթարյան մատենադարանում, № 556:

Գ. Տաղ ի վերայ ջրոյ («Ա՛յ ջուր պատքեցոց դու զովացարան»)

Հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում (1903, էջ 190):

Ձեռագիր օրինակը գտնվում է Վենետիկի Միհթարյան մատենադարանում, № 556:

Դ. Տաղ ս. Աստուածածնի, յԵրեմիայէ ասացեալ («Աստուածածին կոյս Մարիամ թագուհի»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 53—55:

Ե. Տաղ ս. Աստուածածնին. ի յԵրեմիայէ ասացեալ

(«Աստուածածին սրբարան,

Տուն և տեղի մաքրովիեան...»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 56—57:

Զ. Տաղ սիրոյ և տրախութեան («Արէգակն որ է ստեղծեալ յԱրարէք»): Հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում (1903, էջ 192): Պահպանվել են հնակայալ ձեռագիր օրինակները.

Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, № 556 և մասնավոր անձանց պատկանող մի տաղարանում (տե՛ս Ա. Սյուրմեյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի ու Քառասուն մանկունք եկեղեցվոյ և մասնավորաց», Երևան, 1935, էջ 382):

Է. Տաղ («Ելք պրեւու ծագող լուսոյ անեղին,  
Սըսի փինհան փիլէպէտի շուշանըն...»)

Զեռադիր օրինակը գտնվում է Մատենադարանի № 523 ձեռագրում, էջ 131ա:

Թ. Գովասանութիւն ի վերայ չըուց, ասացեալ ի յերեմիայէ («Երամք երկնացին թրաչնոց խրմբեցան...»)

Հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսում (1903, էջ 189—190):

Հրատարակված է նաև «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 43—48:

Զեռադիր օրինակը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, № 556:

Ժ. Գովեստ առ ո. Աստուածածինն, ասացեալ յերեմիայէ բանասիրէ («Երանէալ կոյս սուրբ Տաղիթա Մարիամ...»)

Հրատարակված է «Տաղարան վայելու և զեղեցիկ ի զանաղան բանաստեղծից» զբանում (Կ. Պոլիս, 1701, էջ 80):

Հրատարակված է նաև «Գիրք զպրութեան և Տաղարան»-ում (էջ 193—194), ինչպես նաև «Բիբրակն»-ում (1897, էջ 612—613):

Պահպանված են հնակայալ ձեռագիր օրինակները.

Մատենադարանի ձեռագիր, № 41, էջ 135ա, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր, № 671 և Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր, № 2394, էջ 43ա:

ԺԱ. Տաղ ասացեալ ի յերեմիայէ ի վերայ ո. Երուաղէմայ. տաճկի բարբառ («Մուճտէմ վարտը տօստլարիմէ»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 41—43:

Զեռադիր օրինակը, ըստ Ակինյանի, գտնվում է Հ. Քյուրտյանի մսու:

ԺԲ. Տաղ ասացեալ յերեմիայէ ի վերայ Սողոմոն իմաստնոյ («Յարհէստ քերթութեան հմտասցիս ի բան»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 51—52:

ԺԳ. Տաղ ասացեալ ի յերեմիայէ (վասն անցաւրութեան աշխարհիս): («Յիսուս Քրիստոս Աստծոյն մերոյ փրկչին...»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 61—64:

ԺԴ. Տաղ Յովհաննու Մկրտչի. ասացեալ ի յերեմիայէ («Ով գու մարգարէ մեծին...»)

Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 48—50:

Զեռագիր օրինակը գտնվում է Վիեննայի Միսիթարյան մատենադարանում, № 577:

ԺԵ. Տաղ ի վերայ ս. գերեզմանին Քրիստոսի, տանկի բարբառով  
Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 52—53:

Զեռագիր օրինակը գտնվում է Վիեննայի Միսիթարյան մատենադարանում, № 436.

ԺԵ. Երգ սիրոյ («Գլուխող է օծեալ իւզով պալասան...»)

Հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտ» հանդեսով (1903, էջ 189):

Զեռագիր օրինակը՝ Վենետիկի Միսիթարյան մատենադարանում, № 556:

ԺԵ. Ղարիսի («Փորձանաւորդ ի պատահմանց մի հոգար...»)

Հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրութեան» հավելվածում (էջ 665—666):

Զեռագիր օրինակը պահպանվում է Երևանակեմի մատենադարանում, № 1059:

ԺԵ. Անխորագիր («Յիշեա բղջորն, արդար և անարատ էր...»)

Հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրութեան» հավելվածում (էջ 666—667):

Զեռագիր օրինակը գտնվում է Երևանակեմի մատենադարանում, № 1059:

ԺԵ. Անխորագիր («Մըտածես զիասո զո առաջին...»)

Հրատարակել է Մ. Նշանյանը Քյոմուրճյանի «Օրագրութեան» հավելվածում (էջ 668—670):

Զեռագիր օրինակը պահպանվում է Երևանակեմի մատենադարանում, № 1059:

Ն. Ակինյանն իր վերը հիշատակված աշխատության մեջ նշում է, որ Երևանակեմի այդ նույն (1059) ձեռագրում կան նաև այլ 28 ստանավորներ (էջ 71—87), որոնք այբուբենի տառերի հաջորդականությամբ են գրված: Բայց մեծ մասամբ կիսատ են, դրա համար էլ չի վերցրել:

- Ալիշան Գ.—Հայապատում պատմիլ և պատմոթիւնը Հայոց, Վենետիկ, 1901:
- Աղավնակի Մ.—Միարանք և այցելուք հայ երուսաղեմի, երուսաղեմ, 1929:
- Ամդեցի Զաբարիա—Թրագություն, Երևան, 1938:
- «Անահիտ», Փարիզ, 1903:
- Անասյան Հ.—Էջեր արևմտահայ ազատագրական պայքարի պատմոթյունից, Երևան, 1962:
- Անասյան Հ.—Հայկական ազբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957:
- Առանել վարդապետի Դաւթիծեցոյ Պատմոթիւն, Վաղարշապատ, 1896:
- «Արարատ», Էջմիածին, 1915:
- «Բազմավէլպ», Վենետիկ, 1862, 1902, 1903, 1926, 1929, 1930, 1951:
- «Բիւրակն», Կ. Պոլիս, 1897, 1898:
- Գայիմենիրյան Գ.—Կենազրութիւններ, Վիեննա, 1915:
- Գանիիլյան Կ.—Հայ մետարային զրականության պատմոթյունից, Երևան, 1961:
- Զարբիանայան Գ.—Հայկական մատենագրութիւն, Վենետիկ, 1873:
- Զարբիանալյան Գ.—Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878:
- Թարոսյան Հ.—Վարք Մխիթարաց Աբբայի Սերաստացոյ, Վենետիկ, 1901:
- Խնճինյան Գ.—Աշխարհաբարութիւն շորից մասանց աշխարհի, Հատոր Ե., Վենետիկ, 1804:
- Լեռ.—Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904:
- Լեռ.—Հայոց պատմոթյուն, Երրորդ հատոր, Երևան, 1946:
- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1909, 1910, 1911, 1932, 1933:
- Համառօտ Հայոց պատմոթիւն, թարգմանեաց արաբերենէ Գ. Թիրաբյան, Կ. Պոլիս, 1879:
- Հովհաննիսյան Աշ.—Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմոթյան, Երկրորդ գիրք, Երևան, 1960:
- Մաղաք-Թեոփիլյանց Մ.—Բառդիրք Երեւելի արանց, Հատոր Ա., Վենետիկ, 1839:
- Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի.

- Ա. Հատոր, կազմեց Ա. Մյուրմելյան, Երևան, 1948:
- Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, Երկրորդ հատոր, կազմեց Ն. Պողարյան, Երևան, 1953:
- Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, չորրորդ հատոր, կազմեց Ն. Պողարյան, Երևան, 1956:
- Մարտիրոսյան Ա. — Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958:
- Մնացականյան Ա. — Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956:
- Մրմեյան Հ. — Ստուերք Հին դէմքերու, 1907:
- «Շողակաթ», Վաղարշապատ, 1913:
- Զամշյան Մ. — Պատմութիւն Հայոց, Հատոր Գ., Վենետիկ, 1784:
- «Պատմա-բանասիրական Հանդես», Երևան, 1959, № 1:
- Պատմական տեսութիւն Հայ տապարութեան մինչև 19-րդ դարը, թիրթոն «Աբշարոս Արարատեանի», Ջմյունյա, 1881:
- «Սիոն», Երևան, 1939, 1940:
- Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Բ. Սարգսյան, Վիեննա, 1895:
- Յուցակ Հայերէն ձեռագրաց Հալեպի ս. Քառասուն Մանկոնք եկեղեցվոյ և մասնավորաց, կազմեց Ա. Մյուրմելյան, Երևան, 1935:
- Յուցակ ձեռագրաց Անկյուրո Կարմիր վանուց և շրջակայից, կազմեց Բաբեն կաթողիկոս, Անթիլիաս—Լիքանան, 1957:
- Տաշյան Հ. — Ռւսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենսայ վարուց Աղեք-սանդրի, Վիեննա, 1822:
- «Տեղեկագիր», ԳԱ, Երևան, 1951, № 5, 1960, № 7—8:
- Тверитинова А.—Восстание Карап-Языджи, Дели Хасана в Турции, М.-Л., 1946.
- Օրմանյան. — Ազգապատում: Բ գիրք, Կ. Պոլիս, 1914:

## Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Խ Ե

Հեղինակի կողմից . . . . .	5
Կյանքը և զործունեսարյումը . . . . .	9
Ստեղծագործությունը . . . . .	41
<b>Հավելված</b> . . . . .	<b>127</b>
Ա. Երգ սիրոյ . . . . .	129
Բ. Ի վերայ չրոյ . . . . .	130
Գ. Ի վերայ չրոյ . . . . .	133
Դ. Ի վերայ չրոյ . . . . .	135
Ե. Ի վերայ սիրոյ և սրախութեան . . . . .	138
Զ. Հատվածներ «Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսույ» գործից . . . . .	140
Է. Գանձ ասացեալ Երեմիայի ի վերայ մօրն իւրոյ ՌՃՃԲ թվին Հայոց, յորում ամի հանգուցեալ լինի ի Քրիստոս Նորա և մեղ և ամեննեցուն Տէր ողսրմի, ամէն . . . . .	141
Ը. Ազուկեցի խօնայ Խօսրօվի մահուան, ճառ ի սկզբանէ մինչ ի նորին վաղճան, ասացեալ ի խնդրոյ ամուսնոյ նորին . . . . .	148
Թ. Նկարադրական հատուած մը, Ղրիմի մէջ զրուած . . . . .	161
Մանոթագրություններ . . . . .	164
Երեմիա Զելսպի Քրոմուրճյանի մատենագրությունը . . . . .	167
Եղտագործած աղբյուրներ . . . . .	175

ՀԱՍՏԻԿ ՄԻՄՈԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ  
ԱԾՄԻԿ ԾԻՄԱԿՈՎՆԱ ՍԱԱԿՅԱՆ

ԵՐԵՄԻԱ. ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԴԱ. Մ. Արեդյանի անվան գրականության  
ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ



Պատ. Խմբագիր՝ Էմ. Ա. Պիլագյան  
Հրատ. Խմբագիր՝ Ս. Ա. Գևորգյան  
Նկարչական ձևավորումը՝ Կ. Կ. Ղաֆարարյանի  
Տեխ. Խմբագիր՝ Հ. Լ. Գորոյան  
Սրբազրի՝ Ա. Գ. Ավագյան

Վ.Բ. 08401, Հրատ. № 2371, ԽՀԽ № 899, պատվեր 57, տպաքանակ 1200


Հանձնված է արտադրության 2/IV 1964 թ.:

Ստորագրված է տպագրության 13/VIII 1964 թ.:

Տպագր. 11,12 մամուլ, Հրատ. 7,9 մամուլ, Թուղթ 84×108<sup>1/32</sup>:

Գինը կազմով 68 կոպ.:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակության  
էջմիածնի տպարան:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220036346

ԳԵՐԱԼ 63 ԿՈՊ.

A II  
36346